


1945



ԱՅՀԴ

Բ. ՏԻՄԻ

ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՕՄԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՈՐՈՅՑ
Ա. Ի. ԶՈՒՐԱՅՐ

1950 64-9.

ՀՐԱՄԱՆԱԿ

Տ. Տ. Գ Ե Ո ՐԳ Ա Յ Զ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



2052-55

ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՐԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՒԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ 25-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

ՀԿ(Բ) Պ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՄԱՅԱԿ ՊԱՊՅԱՆԻՆ
ՀՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՀԱՍԻ ՍԱՐԳՈՅԱՆԻՆ

Սրատպին ողջունում ենք Հայաստանում Սովետական իշխանության հաստատման բանհինգերորդ տարեդարձը: Քսանհինգ տարիների համառ և արդյունավետ աշխատանքով Սովետական Հայաստանի կառավարությունը ոչ միայն վերացրեց Հայ ժողովրդի սրտին նստած վշտերն ու դառնությունները, այլև Հայաստանը դարձրեց լուսավոր, քաղաքակրթված, ծաղկուն մի երկիր: Այդ են վկայում մեր բազմաթիվ գիտական հաստատությունները, ժողովրդական Հայատարած կրթությունը, արվեստների և գրականության աննախընթաց վերելքն ու ծաղկումը: Այդ են վկայում մեր ծաղկած արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը և մեր համատարած շինարարությունը: Հավատացած ենք, որ Հետայուր Հայաստանը սովետական իմաստուն կառավարության ղեկավարությամբ նորանոր Հաղթանակներ կտանի Հայ ժողովրդի զարգացման և առաջադիմության գործում: Խորագույն կերպով հավատացած ենք նաև, որ ՍՍՌ Միության կառավարության և մեծ Ստալինի ջանքերով Հայ ժողովրդը իրա-

կանացած կտեսնի իր հայրենիքի ամբողջացումը և իր ժողովրդի համախմբումը Մայր Հայրենիքում՝ Սովետական Հայաստանում:

Այսօր, Սովետական Հայաստանի քանհինգամյա փառապանծ տարեդարձի օրը, Հայ եկեղեցին, հոգևորականությունը և հավատացյալ ժողովուրդը ամենուրեք, ինչպես Մայր Հայրենիքում, Սովետական Միությունում, նույնպես և արտասահմանյան բոլոր եկեղեցիներում մատուցում է սուրբ պատարագ, կատարում հանրապետական մաղթանք և խնդրում թարձրյալին իր ամենակարող Աջոկ Հոգվանի և զորավիրակինել Հայ ժողովրդին և նրա հարազատ Սովետական կառավարությանը:

Հայ եկեղեցին իր ավանդական տրադիցիաներում պաշտպանել է և այսօր առավել ևս պաշտպանում է Հայ Հայրենիքի և Հայ պետականության միասնական և սուրբ գաղափարը:

Թող Ամենաբարձրյալի օրհնությունը լինի Զեր և Զեր ձեռնարկած գործերի վրա:

ԳԵՎՈՐԳ Զ.

Կաքողիկոս Ամենայն Հայոց



ՓՍՌԱՊԱՆԾ ՏԱՐԵԴԱՐՁԸ

1920 թ. նոյեմբերի 29-ը մեր ժողովրդի պատսուլյան սաշ սոր գարագլուխ կազմող տարեթիվ է:

Հայ ժողովուրդը ունելուցիցի նախօրեին ապրում էր իր գոյության ամենասարսափելի օրերը, որը նրան սպառնում էր բնաշխումը և առավելության քացումը պատմության բեմից: Եվ այդ սարսափի օրերին հաշեց Մեծ մարդու հանճարեղ Ստալինի ձայնը և ունելուցիցի իրկարար ձեռքը հասավ մեր ժողովրդին ու նրան ազատեց վերահաս կործանութիւն: Հայ ժողովրդի համար բացվեց նոր կյանքի վարդագույն արշալույսը:

Հայ ժողովուրդը լծվեց իր կյանքի բարեկարգության և իր պետականության կառքին:

Հայ եկեղեցին, որի համար հայ ժողովրդի պետականության հարցը նվիրական է եղել դեռևս Լուսավորչի օրերից, ավանդական սրբությամբ և լրջմտությամբ գըրկաբաց ընդառաջեց մեր պետականությանը և իր բոլոր ուժերը ի սպաս դրեց նրա բարգավաճմանը:

Պատմականորեն ժառանգած այս տրադիցիան պաշտպանվեց ամենայն հոգատառությամբ առավել և Հայրենական մեծ պատերազմի օրերին: Հայ եկեղեցին հանձին Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ S. Գեվորգ արքեպիսկոպոսի՝ ներկա Ամենայն Հայոց վեհաժիշտ կաթողիկոսի՝ հրապարակ իշավ մեր Հաղթանակի սրբազն գործին սպասարկելու:

Մեր եկեղեցիները և հավատացլաւ համայնքները, ինչպես Հայրենիքում, նույնպես և արտասահմանում, իրենց համեստ լուման դրին Հայրենիքի պաշտպանության զոհասեղանին:

Սակայն հայ եկեղեցին դեռ շատ անելիքներ ունի Մայր Հայրենիքին և մեր պետականությանը օժանդակելու կապակցությամբ և ի սպաս դնելու իր բարոյական բոլոր միջոցները նրա համար: Այսօր, երբ հրատապ խնդիր է ի սփյուռք աշխարհի

ցրված հայ ժողովրդին համախթենու մի սրասնական գրոշը Սովորագաս Հայութանի դրոշի տակ, հայ նկեղեցին վի խնայում, իր ուժերը, սա գործադրում է բոլոր ջանքերը, թե Մայություն և թե Սովորագան Սիության սաշ, ըստ ամենայնի օժանդակելու սար պատականությանը առաջդրված խնդիրներին բարեհաջող լուծում տալու համար:

Սովորագան Հայաստանի 25 տարիները նոր ոսկեդար հանդիսացան հայ ժողովրդի համար:

Եթե մեր պատմության և դարի ոսկեդարը մեզ բերել է զիր և գրականություն, որով պետականությունից զրկված ժողովրդի ձեռքը իր ազգայնությունը, իր կրօնը և ժողովրդական իր կերպարն անաղարտ պահելու զենքերն է միայն ընձեռել, ապա Սովորագան ոսկեդարը իր թևերին բերել է առաջին ոսկեդարի նվաճումներ։ ապահովելու և զարգացնելու բոլոր հնարավորությունները:

Նոյեմբերը դարբնեց մեր պետականությունը, մեզ դարձրեց տեր և տնորեն մեր Հայրենիքին, նա մեր ճնշված և արհամարժված ժողովրդին դասեց Մեծ Միության ընտանիքի լիիրավ և հավասար տնդամների շարքը. նա մեզ շնորհեց այն բայց միջոցներն ու հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են ժամանակակից մրտավով պետականություն կազմելու համար, նա ստեղծեց աննախրնթաց պայմաններ մեր կուտուրայի՝ գրականության, արվեստի, գիտության ծաղկման ու բարգավաճման համար:

25 տարվա մեր բոլոր նվաճումների փառքն ու պատկան է կազմում մեր նորաստեղծ պետության ամուր և զոր պատվարը՝ մեր հերոսական Կարմիր Բանակը, որ ֆաշիստական գաղանների դեմ մղված պայքարում ցուցաբերեց անօրինակ արիություն ու հերոսություն և փառքով օծեց իր մեծ Հայրենիքի հակատը:

Հայ ժողովուրդը իր Հայրենիքի քանդինդ տարիներում ձեռք բերած նվաճումների հա-

մար երախտապարտ է, ուստ մեծ, եղբայրական ժողովրդին և միութենական ժողովուրդների իմաստուն զեկավար Մեծ Ստալինին:

Այսօր, մեր Հայրենիքի պահանջմանը 25-ամյակի օրը աշխարհի յուլուսանցուր ազնիվ ու Հայրենասեր Հայ ակնածանքով ու խորին երախտապիտության զգացմունքով է արտասանում աշխարհի ամենամեծ մարդու, հանճարեղ Ստալինի անունը և արհատություն բարեմաղթում Մեծ Միության ժողովուրդների իմաստուն առաջնորդին, Հայ ժողովրդի միակ ազատարարին:

Այսօր Համայն աշխարհը վկա է, որ ՍՍՌՄ-ի շանքերով Եվրոպան փրկվեց նրան


սպառնացով ֆաշիստական Հորդաների մըշտական ստրկացումից և ժողովուրդներն ազատագրվեցին 20-րդ դարի բարբարուների ստրկական լծից:

Պատմական այս մեծ ակտից հետո համեմատի է, թե ինչո՞ւ արտասահմանում դեղիրող մեր Հայ եղբայրներն իրենց հույսերի և իղձերի իրականացումը Սովետական Միության մեջ են որոնում:


Սփյուռքի Հայության Հայացքներն այսօր, այս պատմական մեծ տոնի օրը, ուղղված են Մեծ Ստալինին և Սովետական Հայաստանին իրականացնելու իրենց դարավոր իղձը՝ վերադարձը դեպի Մայր Հայրենիք Սովետական Հայաստանը:



Երևան—Եղիշի կոտորածությունը. Կառավարության ստորագրությունը.



Երևան — Հայուսության Ազգի հրապարակում





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՐԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԴԻՄՈՒՄԸ ԵՐԵՔ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՅ Ի. Վ. ԱՍԱԼԻՆԻՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՊԱՐՈՆ Հ. Ս. ՏՐՈՒՄԵՆԻՆ
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՊՐԵՄԻԵՐ-ՄԻՆԻՍՏՐ ՊԱՐՈՆ Կ. Ռ. ԷՍՏԼԻԻՆ

Հայ եկեղեցու պետերը՝ կաթողիկոսներն ու պատրիարքները, դարերի ընթացքում հայ ժողովրդի ներկայացուցիչներն են հանգիստցել պետությունների առաջ և նորաբաղանքների ու տառապանքների, խընդիրների ու պահանջների արտահայտիչները:

Այս պատմական մոմենտին, երբ դեմոկրատ և ազատասեր մեծ պետությունները՝ Սովետների Միությունը, Մեծ Բրիտանիան և Միացյալ Նահանգները հաղթանակ տարան շարի և բոնության՝ ֆաշիզմի և նացիզմի վերա, երբ լուծվում են ժողովրդների գոյության հարցերը, թյուրքիայից վրտարված և ամբողջ աշխարհում թափառող հայ ժողովրդը ամենայն իրավունքով դընում է իր արյունուտ հարցը մեծ պետություններից արդարադատության առաջ:

Մենք՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ, հավատարիմ մեր ժողովրդապաշտպան տրադիցիաներին՝ սրբազն պարտք ոմնիք ի սիյուս աշխարհի ցրված, դրժրախտ հայ ժողովրդի դատը ներկայացնելու Զեզ, խնդրելով նորա արդար լուծումը, մանավանդ թե այդ իմաստով բազմաթիվ դիմուններ ենք ստացել աշխարհի ամեն կողմը ցրված հայերի կողմից: Հայ Հին ժողովրդը դարերի ընթացքում օսմանյան պետության լճի տակ հանդուրժել է բոլոր զրկանքներին, հարստահարություններին և ծանր տաժանքներին, ենթարկվել է իրավագուրկ ույայից—ստրուկի դրության, սակայն պահել է, իսլամական ֆանատիկ միջավայրում, իր քրիստոնեական կրոնը, կրթել է նորա խաղաղասեր ոգով, պահպանել է իր լեզուն և հավատացել ազա-

տության, որ պիտի բերեին քրիստոնյա պետությունները և քաղաքակրթությունը: Եվ երբ այդ հույսը հետզհետե իրականանում էր բալկանյան բախտակից ժողովրդների նկատմամբ ու նորա ազատվում էին թըրքական լծից, հայ ժողովրդի համար այդ դարձավ ճակատագրական աղետ և այն՝ մահաբեր: Խնչակ հայտնի է, հայկական բարենորդումների խնդիրը առաջին անգամ քաղաքական ասպարեզ իշավ Սան-Ստեֆանոյի դաշնագրությամբ 1878-ին: Հայկական վիլայեթների ծանր կացությունը, անվերջանալի կենեքումները և ավազակությունները, հայերի կյանքի ու գուքի անապահովությունը ստիպեցին Կ. Պոլսի հայոց Պատրիարքին դիմել հաղթական ուսաներին, որ թյուրքիայի հետ խաղաղություն կնքելիս նկատի ունենան հայերի դրժրուային վիճակը: Ռուսներն ընդառաջ եկան, քայլ Սան-Ստեֆանոյի 16-րդ բարենպաստ հոդվածը Բեղլինում վերածվեց 61-րդ աղետաբեր հոդվածին:

Սովորան Արդուկ Համբիդը օգտվելով հիլրոպական մեծ պետությունների հակամարտությունից և շահամոլությունից, փոխանակ իրագործելու իր հանձն առած բարենորդումները, սկսեց սիստեմատիկ կերպով գործադրել իր դիվական ծրագիրը՝ ուշնչացնել հայերին, համարելով այն հայկական հարցը շնչելու լավագույն միջոցը: Եվ հիրավի կազմակերպած ավագակայից բանդաների միջոցով մասնակի շարդերով, կողոպուտներով, հրդեհումներով և 1894—1896 թվերին մասսայական զարդերով նրան հաջողվեց ավելի քան 300.000 հայեր սպանել և վտարել երկրից դուրս:

Սուլթանին հաջորդող ռեժիմները՝ իթթի-հատը, Թալաաթ և էնվեր փաշաները և քամալական նոր Թյուրքիան Համբարի այդ գաղաքական իմաստությունը՝ հասցրին իր զագաթնակիտին։ Առաջին իմպերիալիստական պատերազմի նախօրյակին Թյուրքիայում ապրող 2.500.000 հայերից այսօր Թյուրքիայում կան մոտավորապես 100.000 հայեր, որոնք բազ են տալիս իրենց ողբալի գոյությունը «դիմոկրատիկ» նոր Թյուրքիայում։

Ավելի քան մի միլիոն հայեր ոչնչացան զարհութելի կոտորածների մեջ։ Թյուրքերը Բալկանյան ազատագրված ժողովուրդների դեմ ունեցած վրեժը անպաշտպան հայերից հանեցին։

Մենք չենք ցանկանում կանգ առնել այս անսահման տրագեդիայի վրա։ բազմաթիվ հատորներ կան գրված բոլոր լեզուներով այդ զարհուրանքների մասին, պետությունների արխիվները լին են իրենց կոնսուների զեկուցումներով այդ մասին։ Մարդկության լավագույն մասը՝ ազնիվ սիրո ու միտք կրողները բողոքեցին և ըմբռստացան մարդկային արժանապատվությունը վիրավորող այդ հրեշտակին ոճիրի դեմ։ Եվ սակայն հայ ժողովուրդը իր սրբազն հայրենիքից վտարված ու անպաշտպան, ցրվեց ի սիրուս աշխարհի։

Ի լրումն հայ ժողովուրդի զլիսին եկած դժբախտությունների, թյուրքերը 1920 թվին ովատադրութ կերպով հարձակվեցին ու խըլեցին Հայաստանի կարևոր կենսական մասերը՝ Դաբսը, Արդահանը, Սուլթանլուն, Առվետական նորածին Միությունը ազատեց հայկական պատմական հողերի մի փոքր մասը, որով փրկեց նա այնտեղ ապրող հայերին վերահս բնաջնջումից։ Այսպիսով ստեղծվեցավ Հայկական Սովետական ներպուրիկան, որը 25 տարուց ի վեր խաղաղության և ազատության մեջ բուժելով իր վերքերը զարգանում և բարգավաճում է։

Այսօր ժողովուրդների բախտը միացյալ դեմոկրատիկ պետությունների ձեռքումն է։ Այս արյունահեղ պատերազմից հետո, որ միլիոնավոր կյանքեր զոհվեցին արդարության և հումանիզմի հաղթանակի համար, մեծ և հզոր պետությունների անխօսափելի պարտականությունն է, որ մարեն շարի և բոնության բոլոր օջախները, որպեսզի նորից չկրկնվեն ժողովուրդների զարդերը։ Նըրանց պարտքն է վերացնել անցյալ անտրդարձությունները, ճիշտ հանացել թշնամուն և բարեկամին, և հատուցանել ազնիվ և

պարտաճանաչ վրկվածին, զոհվածին, անիրավվածին։

Այս հավատով Զեզ են դիմում Թյուրքիայից վտարված հին ու նոր հայ գաղթականները, որոնք թափառում են երկրագնդի զանազան մասերում և նոցա հետ Ամենայն Հայոց հինավորց Հայրապետությունը և խնդրում Զեզ հանացել հայերի իրավունքը իրենց պատմական հայրենիքի վրա, որ նորքա սրբագրութել են իրենց արյունով և քրութինքով և ծածկել հիշատակաց արժանի հարուստ կուտորական կոթողներով։ Մենք խնդրում ենք առնել Թյուրքիայի ձեռքից այդ բոնագրավկած և այժմ Համարյա ամայացած հողերը և վերադարձնել իրենց իսկական տերերին ու միացնել Սովետական Հայաստանին, որով նոքա հնարավորություն կունենան խաղաղ ապրելու իրենց եղբայրակիցների կողքին, աշխատելու և իրենց աղդային մշակույթը զարգացնելու։

Սա կինի արդար գնահատականը այն հսկայական զոհաբերությունների և անձնագոհության, որ հայ ժողովուրդը բերեց հանուն միավորյալ դեմոկրատիկ պետությունների գործին, հանուն զեմոկրատիայի հաղթանակի։

Հայ ժողովուրդը բոլոր ճակատներում քաջությամբ կովեց Հաղթանակի համար, ուստի անիրավություն կինի, եթե այս անդամ էլ նա հուսախար լինի։ Աշխարհը աններելի կհամարե, եթե այս անդամ էլ հայերի սրբազն իրավունքը չարգվի։

Թյուրքիայի դաժան ծից ազատվեցին Հունաստանն ու Սերբիան, Բուլղարիան, Լիբանանն ու Ալբանիան, Կրետե կղզին ու Պաղեստինը։ Ինչո՞ւ համար, ի՞նչ իմաստուն պատճառաբանությամբ մարդկությունը պիտի զլանա տառապյալ Հայաստանին տալու իր արդարագույն իրավունքը։

Պետությունները հանուն իրենց հանդիսավոր խոստամների և հայտարարած սկզբունքների պարտավոր են կատարել քաղաքակրթական մի վեհ ակտ, մարդասիրական մի սուրբ գործ՝ փրկել վերջնական կորստից մի հին կուտուրական ազգի մնացորդները, մի ազգի, որ ստեղծել է կասիկ լեզու և գրականություն ունել է արվեստի հոյակապ կոթողներ և ունի արժեքավոր ներդրումներ համամարդկային կուտուրայի մեջ։

Թյուրքիան և նորա բարեկամները վիժեցնելու համար հայկական դատը հայտարարում են, թե ներկա Թյուրքիան դեմոկրատիկ իրավակարգ ունի, նու հին Թյուր-

քիան չէ, և հայերը, եթե կամենան, կարող են վերադառնալ իրենց նախակին բնակավայրերը։ Սակայն հայ ժողովուրդը անցյալի անթիվ փորձերից գիտե, որ գոյություն չունի հին և նոր Թյուրքիա, նա միմնույն Թյուրքիան է, և հայ ժողովուրդը, ինչպես և եվրոպական դիպլոմատիան, լավ գիտեն Թյուրքական խոստումների արժեքը։

Միակ ելքն է Թյուրքա-Հայաստանի ազատագրումը և կցումը Սովետական Հայաստանին։

Ռաաի վերստին խնդրում ենք, որ Թյուրքիայի հայկական վիլայեթները միացվեն Սովետական Հայաստանին, որպեսզի Հայությունը ամբողջանա հավաքվելով հալրենի երկրում և ապահովության ու խաղաղության մեջ շարունակե իր ընդհատված քաղաքակրթական աշխատանքը և ի հայտ բերե իր անուրանալի ստեղծագործական պոտենցիալը։

Այս արդար ու վսեմ գործի հաջողության համար աղերսանոք դիմում եմ Ամենակարող Աստծու օգնությանը. թող Բարձրյալի օրհնե Զեղ և առաջնորդի Զեր միտքն ու կամքը բարին կատարելու, այլև շարժե ներկա Թյուրքիայի զեկավարների խիղճը, քավելու իրենց և նախորդների ժամու հանցանքները, որպեսզի վերանա այն ամենամեծ անարդարությունը, որ կատարվեց լուսավորության և քաղաքակրթության դարում մի ըստ ամենայնի խաղաղ, զանասեր և ստեղծագործող ժողովրդի հանդեպ։

**ԿՈԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԳԵՎՈՐԳ Զ**

27-11-45 թ.

Ա. էջմիածին





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՄՈՏ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊՐԵՍ-ԿՈՆԳՐԵՏԱՆԱՍՈՒՄ

Հայաստանում սովորական իշխանության հաստատման 25-ամյակի կապակցությամբ նորին Վեհափառության Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Գեվորգ Զ-ի կողմից Սովորական Հայաստանի կառավարության դեկալարներին ուղղված ողջունը տեղական մայուսում հրապարակվելոց հետո մի խումբ ժուռնալիստներ, կենտրոնական և ուսպուբլիկական թերթերի թղթակիցներ դիմեցին նորին Վեհափառության և խնդրեցին Վեհափառ Հայրապետին իր կարծիքը հայտնել ողջունի մեջ արտահայտված հարցերի, մասնավորապես այն մասին, թե ինչպես է նորին Սրբությունը պատկերացնում ու վերաբերվում Հայության Հայրենիքի միավորման իրականացմանը և Հայ ժողովրդին Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի շուրջը համախմբելու հարցին:

Նոյեմբերի 29-ին Վեհափառ կաթողիկոսի մոտ տեղի ունեցած պրես-կոնֆերանսում նորին Սրբությունը Հայտարարեց հետևյալը.

«Սովետական Հայաստանի կառավարության Հրամերով մենք առաջին անգամ բախտ ունեցանք ներկա գտնվելու Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի հորելյանտկան նստաշրջանին, Հայաստանում սովետական իշխանության հաստատման 25-ամյակին նվիրված համազգային և համապետական տոնակատարությանը: Այդ տոնին մենք կրկին անգամ ակնհայտնի կերպով տեսանք Սովետական Միության ժողովուրդների մեծ բարեկամության մարմարությունը:»

«Մեզ ուրախալի էր տեսնել, թե ինչպես Սովետական Միության մեջ բնակվող ժողովուրդների ներկայացուցիչները եղացրական սիրով ու հարգանքով են վերաբերվում Հայ ժողովրդին:

«Մեր երկրում և արտասահմանում ապրող Հայերի սրտերը այսօր լի են հպարտությամբ և երջանկությամբ մոխրակույտերի և ավերակույտերի տակից հարություն առած և այժմ ծաղկող իրենց հայրենիքի՝ Սովետական Հայաստանի համար, որը տունում է իր ազատ ու բերկրալի գոյության քանհնգամշակը:»

«Եվ այսօր, մենք խորին դառնությամբ վերհիշեցինք Հարյուր հազարավոր Հայերի մասին, որոնք բռնի կերպով տարագրված են Հայրենիքից, սփռված ամբողջ աշխարհով: Մեկ, որոնք երազում են իրենց նախահայրերի սուրբ հոգի մասին, որի վրա նըրանք ապրել են ավելի քան երեք հազար տարի: Մեծ դառնությամբ հիշեցինք այն Հայերի մասին, որոնք զրկված են Հայ ժողովրդի վերածնության համազգային մեծ տոննին մեզ հետ միասին ներկա գտնվելու երջանկությունից:»

«Արտասահմանի հայության ճակատագրի մասին Մեր հոգատարությունը և նրանցից ստացած բազմաթիվ նամակներն ու հեռագրերը Մեզ մղեցին դիմելու երեք մեծ տերությունների ղեկավարներին՝ Ստալինին, Տրումենին և Էտտլիին, խնդրելով վերացնել բազմաշարչար Հայ ժողովրդի վերաբերմամբ թույլ տրված պատմական մեծ անարդարությունը: Մեր դիմումով Մենք խնդրում ենք՝ Թյուրքիայից վերցնել նրա կողմից բռնի կերպով զավթված և այժմ ամայի հողերը, վերդարձնել նրանց վաղեմի տերերին և այդ հողերը միացնել Սովետական Հայաստանին: Դա գաղթական Հայերին հնարավորություն կտա մի ընտանիքի մեջ ապրելու իրենց արյունակից եղբայրների հետ, աշխատելու և զարգացնելու իրենց ազգային կուտուրան:

«Եվ դա արդարացի փոխառաւուցում կլինի այն վիթխարի զոհերի ու ինքնազո՞ւթյունների հանդեպ, որ Հայ ժողովուրդը բերել է հանուն միավորյալ դեմոկրատական ազգերի գործի, հանուն դեմոկրատիայի հաղթանակի:»

«Մեր Տեր Աստվածը թող օգնի մեզ այս արդար և սուրբ գործում:»



Վեհափառ Հայրապետը թղթակիցներին հանձնեց երեք մեծ տերությունների ղեկավարներին ուղարկած իր դիմումի բնագիրը որ զետեղված է մեր ամսագրի, ներկա համարում:



ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶԸ

ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության հրամանագրով 1946 թ. փետրվարի 10-ին նշանակված են Սովետական Սոցիալիստական Ռեսպոբլիկաների Միության Գերագույն Սովետի ընտրությունները:

Այդ օրը Սովետների լայնածավալ երկրի միլիոնացոր քաղաքացիներ իրենց քվեները պետք է տան սովետական ժողովրդի լավագույն զավակներին, որոնք մեծ և իմաստուն Առաջնորդ ՍՏԱԼԻՆԻ ղեկավարությամբ մեր երկիրը կտանեն դեպի նորանոր հաղթանակներ:

Սովետական Միությունը — հաղթանակած սոցալիզմի և իսկական դեմոկրատիայի երկիր է, նա աշխարհի միակ սոցիալիստական պետությունն է, որտեղ ամբողջ իշխանությունը պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորությանը՝ հանձինս աշխատավորների ղեղալատաների Առվետների: Այդ Սովետների միջոցով է, որ ողջ ժողովուրդը մասնակից է դառնում իր սոցիալիստական պետության ղեկավարմանը, այսպիսով մեր երկրում իրականացած ենք տեսնում իսկական դեմոկրատիան — ժողովրդի իշխանությունը: Սոցիալիստական պետությունը իսկական ժողովրդապետությունն է, մեր երկրում ժողովրդի և պետության միջև հակասություններ չկան, որովհետև իշխանությունը պատկանում է ժողովրդին և ժողովուրդն իր կյանքի լիահատար տերն է:

Հանրահայտնի է, թե ինչպիսի հերոսական երկարատև ու դաժան պայքար է մղել սովետական ժողովուրդն իր սոցիալիստական պետությունն առեղջելու համար. փառք Ամենաբարձրյալին, այդ պայքարը պահակած է նախընթացը շունեցող հաղթության դափնիներով: Ծնորժիվ այդ աննկուն պայքարի ստեղծվեց անսասան և աշխատ հիմքերի վրա խարսխված աշխարհի առաջին սոցիալիստական պետությունը,

որը Սովետական երկրի բոլոր ժողովրդներին համախմբեց մի միասնական ու ամրակուռ ընտանիքում:

Այժմ Սովետական անծայրածիր երկրի բազմազգ, բազմալեզու և բազմադավան ժողովուրդները մի ընտանիքում համախմբած առաջ են ընթանում Ստալինյան կոնստիտուցիայի շողերով լրացրության սոցիալիզմի ուղիով:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտը — դա սովետական դեմոկրատիայի, սովետական բազմազգ պետության հաղթանակն է: Ոչ մի այլ պետություն չէր կարող դիմանալ այն փորձությանը, որը վիճակվել էր պատերազմի տարիներին սովետական ժողովուրդներին և փորձը ցույց տվեց, որ միայն Սովետական պետությունը կարող էր ոչ միայն կասեցնել գերմանական վանդալների արշավանքները, այլև ջախջախնել նրանց, վերացնելով ֆաշիստական ստրկության սպառնալիքը:

Աստծո օրհնությամբ և Կարմիր Բանակի ջերազանցված զորությամբ հայրենական պատերազմի հաղթական ավարտը վկայում է սովետական ժողովուրդների կենսունակության և մարտունակության մասին, նոցա քաղաքական հասունության, առ Հայրենիքն ու սովետական կարգերն ունեցած անձնվեր սիրո ու անձնագոհության, ինչպես և այն բարձր գիտակցականության մասին, որ նորա ձեռք բերին շնորհիվ սովետական դեմոկրատական կարգերի:

Բանվորության, գյուղացիության, սովետական ինտելիգենցիայի ամուռ դաշինքը հանդիսանում է սովետական հասարակության զարգացման հիմքը: Հայրենական պատերազմի ընթացքում այդ դաշինքն ավելի կոփվեց և հանդիսացավ սովետական կարգերի հաղթանակի ազդակներից մեկը: Աղոթենք Աստծուն, որ այդ դաշինքն է ա-

վելի հղորանա ի բարօրություն մեր երկրի աշխատավոր մասսաների:

Այդ հաղթանակի համար խոշոր գեր խաղաց Ստալինյան հոյակապ Կոնստիտուցիան, որը հանդիսանում է Սովետական պետության հիմնական օրենքը և երաշխաժորում է մեր երկրի բոլոր ժողովուրդներին ազատ, կուտուրական և բարեկեցիկ կյանք: Աղոթում ենք Աստծոն աշխարհի ամենադեմոկրատիկ Կոնստիտուցիան ստեղծողի կյանքի հարատեսության համար:

Ստալինյան Կոնստիտուցիան մեր երկրի բոլոր աշխատավորներին վերապահում է միասնակ իրավունքներ ու պարտականություններ, ապահովելով նրանց համաշխատ մասնակցությունը պետական, հաստիակավան ու տնտեսական կյանքի զեկավարմանը: Սովետական ընտրական սիստեմը կառուցված է լիակատար գեմոկրատիկ հիմունքների վրա և գոյություն չունեն սահմանափակումներ ու կաշկանդումներ քաղաքացիների իրավունքների նկատմամբ: Մինչեռ կապիտալիստական երկրների Կոնստիտուցիաներում, սովորաբար խոսվում է ընդհանուր ընտրական իրավունքը մասին, իսկ իրականում բազմաթիվ սահմանափակումների միջոցով աշխատավորության մեծամասնությունը գրկված է հշիանության օրգանների ընտրությանը մասնակցելուց: Ստալինյան Կոնստիտուցիան արդարության և մարդկության ամենաբարձր իդեալների մարմնացումն է, նա ապահովում է այնպիսի հասարակարգ, որն անհրաժեշտ է աշխատավորական լայն զանգվածներին, մինչդեռ բուրժուական կոնստիտուցիաները ապահովում են այնպիսի հասարակարգ, որն անհրաժեշտ է հասարակության փոքրամասնությանը՝ ուներ դասակարգերին: Ստալինյան Կոնստիտուցիայով սահմանված է համարար, ուղղակի, գաղտնի ընտրություն, որը հնարավորություն է տալիս ընտրողներին անմիջապես կապվելու իրենց ընտրությաների հետ և անկացկանդ ընտրելու իրենց ցանկացած թեկնածվին, իսկ շատ բուրժուական երկրներում ընտրությունները անուղղակի ու բազմաստիճան են և ընտրությունները գրկված են իրենց կամքն ազատ արտահայտելու հնարավորությունից:

Սովետական ընտրական սիստեմն ամենադեմոկրատականն է աշխարհում: Ստալինյան Կոնստիտուցիայով 18 տարին լըրացած բոլոր քաղաքացիները, անկախ սեռից, ազգությունից, ուստաշականություն-

նից, դավանանքից, կրթական ցենզուց, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային վիճակից, անցյալի գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու պետական իշխանության բոլոր օրգանների ընտրությանը: Ընտրելու իրավունքը չունեն միայն դատարանով դատված ու ընտրական իրավունքից գրկվածները և ինչպարները: Այլ է գրությունը կապիտալիստական երկրներում, բուրժուական պետությունների ընտրական օրենքները բազմաթիվ սահմանափակումներով խոչընդուռ են հանդիսանում ժողովրդի լայն խավերի մասնակցությանը իշխանության օրգանների ընտրությանը:

Սովետական երկրի աշխատավորներն ապահովված են աշխատանքով. ՍՍՌՄ քաղաքացին վստահ հավատքով է նայում իր վաղվա օրվան, նա վախ չունի գործազուրկ լինելու: Աշխատանքի իրավունքը սովետական ժողովրդի խոշորագույն նվաճումն է: աշխարհում ոչ մի ժողովուրդ չունի այդպիսի իրավունք, թող Աստծո օրհնությունը լինի այդպիսի օրենք ստեղծողի վրա: Կապիտալիստական հասարակարգում, որտեղ գոյություն ունի մարդու շահագործում մարդու կողմից, այդպիսի իրավունք գոյություն ունենալ չի կարող:

Սովետական երկրի պլանային տնտեսության շնորհիվ բացառված է գործազրկությունը: Կա արդյոք ավելի Աստվածահաճո գործ, քան աշխատանքով միշտ ապահովված լինելը:

Ստալինյան Կոնստիտուցիայով սովետական քաղաքացին հիվանդության, ծերության և անաշխատունակության դեպքում վաւելում է նյութական ապահովության իրավունք. նա ստանում է ծրի բժշկական օգնություն, նրա համար գոյություն ունեն հանգստյան տներ, սահմանադրիաներ, կուրորտներ: Աշխարհի ոչ մի երկրում մարդու նկատմամբ գոյություն չունի այնպիսի հոգատարություն, ինչպիսին որ գոյություն ունի Սովետական Միությունում: միայն այսեղ է, որ աշխատավորներին հնարավորություն է տրվում օգտվելու հանգստյան տներից, կուրորտներից, սահմանադրիաներից, որոնք կապիտալիստական երկրներում մատչելի են միայն ուներդներին:

Նմանօրինակ արտոնություններ կան սահմանված նաև երեխաների ու մայրերի համար:

Ինչը կարող է ավելի Աստվածահաճո լինել, քան հիվանդների, ծերերի, անաշխա-

տունակների, երեխաների, մայրերի վիշտը ամոքելը, նրանց օգնելը, օժանդակելը; Մեր Ս. Պալկիլը նույնպես ամոքում էր թշվառներին, ծերերին, հիմանդներին, հաշմանդամներին։ Քրիստոնեական եկեղեցին, հետևելով Փրկչի օրինակին, անձանց մնում ծերերին, թշվառներին, հիմանդներին օգնելու աշխատանքների կազմակերպման գործում։ Սակայն եկեղեցու արածք մի կաթիլ էր ծով կարիքների հանդեպ և պատահական բնույթ էր կրում։ Այսօր վերացված էն գործազրկությունը, կարիքը, այսօր ողջ սովետական հասարակամությունը, պետությունն է իր ձեռքը վեցրել հիմանդներին, ծերերին, անշխատունակներին խնամելու գործը։ Բոլ Աստված զորավիր լինի այդպիսի բարեփնամ պետությանը և նրա իմաստուն զեկավարներին։

Ստալինյան Կոնստիտուցիայով ՍՍՌՄ քաղաքցիներն օգտվում են նաև կրթության իրավունքից, նրանց առաջ լայն բացված են բոլոր տիպի կրթական հաստատությունների դռները, նրանք սովորում են մայրենի լեզվով։

Լինել իր իրավունքների տերը, ունենալ մշտական աշխատանք, մասնակցել հասարակական և պետական կյանքին համահավասար իրավունքներով, վայելել գիտության, կրթության և ընդհանուրապես կուտարայի բարիքները, հիմանդության, ծերության և անաշխատունակության գեղրում լինել ապահովված, ստանալ բուժում, ինչպես տեսանք այս բոլորը ապահովված են Ստալինյան Կոնստիտուցիայով և յուրաքանչյուր ոք վայելում է նրա բարեփները։ Ոչ մի երկրում գոյություն չունի պետական, հասարակական կյանքին մասնակցելու այնպիսի լայն ու անսահմանափակ հնարավորություններ, ինչպիսիք գոյություն ունեն մեր երկրում Սովետական Կոնստիտուցիայի հիմունքներով։

Սովետական Կոնստիտուցիայով եկեղեցին բաժանված է պետությունից, սակայն անհերթելի է այն փաստը, որ այդ Կոնստիտուցիան շնորհել է խղճի ազատություն և դրա շնորհիվ սովետական կարգերում մենք Հոգևորականներս վայելում ենք կրոնական ազատություն և ապրում ու գործում մեր խղճի լիակատար թելագրանքով։

Սա ևս այն հիմնական հշմարտություններից մեկն է, որը խսուում է Ստալինյան Կոնստիտուցիայի դեմոկրատիզմի մասին։

Ստալինյան Կոնստիտուցիայի 124-րդ

Հոդվածում նշվում է, «Քաղաքացիների համար խղճի ազատություն ապահովելու նպատակով եկեղեցին ՍՍՌՄ մեջ բաժանված է պետությունից և դպրոցը եկեղեցուց, կրոնական պաշտամունքների, կատարման ազատությունը և հակակրոնական պրոպագանդական պահապահությունը ձանաշվում է բոլոր քաղաքացիների համար»։

124-րդ Հոդվածով Կոնստիտուցիան հնարավորություն է տալիս բոլոր հավատացյալներին, հետեւ լով իրենց կրոնական զգացումներին, ազատ և անկաշկանդ կերպով կատարելու կրոնական ծեսեր, պաշտամունքների համար մունքների և արարողություններ։

Կոնստիտուցիայով ապահովված է կրոնական պաշտամունքի, կրոնի քարոզչւթյան ազատությունը, մեր եկեղեցիների սեղանների վրայից առ Աստված ուղղված շերմեռանդ աղոթքների հետ միասին ազատ և անկաշկանդ հնչում են մեր եկեղեցական հայրերի կրոնա-բարոյական բարոգները, որոնք մեծ բավականությամբ ունկնդրվում են հավատացյալ հոգա կողմից։ Հոգմորականներին հնարավորություն է տրված ազատորեն բարոգելու բանն Աստուծո ոչ միայն եկեղեցներում, այլ և մեր սեփական եկեղեցական մամուլի կրոնական ամսադրի էջերում։ Սա ևս բղխում է գեմոկրատիզմի էությունից, նրա սկզբունքներից։

Այս օրերին, երբ մենք Աստծո օրհնությամբ նախապատրաստվում ենք մեր երկրի Գերագույն իշխանության ընտրությանը մեր եկեղեցականների ու հավատացյալների համար մի բան պետք է պարզ լինի արեվի լույսի պես, այն, որ մենք բոլորս Սովետական Հայրենիքի լիիրավ զավակներն ենք, որ մենք բոլորս հավասարապես օգտվում և վայելում ենք սովետական կարգերի բարիքները, օգտվում ենք համահավասար ընտրական իրավունքներից և հետևապես պարտքի լրիվ գիտակցությամբ պետք է մասնակցենք ընտրություններին։ Դրա համար եկեղեցու ոչ մի պաշտոնյա, հոգմորական ու հավատացյալ դուրս ըստի մենան ընտրությանը մասնակցելուց։

Դեմոկրատիզմի սկզբունքները խորթ չեն եղել նաև Հայ եկեղեցուն։ Հայ եկեղեցին ևս, դարերից ի վեր զեկավարվել է որոշ ընտրական գեմոկրատական սիստեմով և այս նվիրագործել իր բոլոր օղակներում։

Մեր եկեղեցական որոշ պաշտոնյաներ անցնում են ընտրական բովով, ընդորում այդ ընտրությունը կատարվում է եկեղեցական պաշտոնյայի անձի մանրամասն

քննադատությամբ, ինչպես օրինակ կաթողիկոսական, առաջնորդական քննորությունները և ալլն:

Հայ եկեղեցին և հայ հոգևորականությունը գարերից ի վեր միշտ էլ անբաժան լինելով հայ ժողովրդից, բաժանել են նրա վիշտն ու մրցանկությունը: Հայ հոգևորականության լավագույն ներկայացուցիչները, Հայ եկեղեցու հրջանկահիշատակ հայրերը շանացել են հայ ժողովրդի բախտը կապելուս մեծ ժողովրդի հետ:

Հոկտեմբերյան Սոցիալիստական ռեպուտական կործանեց ժողովորդների բանտցարական Ռուսաստանը և նրա փլատակների վեր խոյցավ ժողովուրդների ինքանական եղբայրության, բարեկամության օրբան Սովետական Միությունը: Զկա ալլես ժողովուրդների բանտցարական Ռուսաստանը: Աստծո ողորմածությամբ հայ թեզուն, հայ մշտեկութը, հայ եկեղեցին, հայ հոգևորականությունը այլև ենթակա չեն հաղածանքի. չկա այլև դարիզմի գաղութային քաղաքականությունը: Այսօր, շնորհիվ սովետական կարգերի, շնորհիվ Ստալինյան լուսազող կոնստիտուցիայի, շնորհիվ ոռու մեծ ժողովրդի աշակցության, շնորհիվ սովետական մյուս ժողովուրդների եղբայրական օժանդակության, Աստծո օրհնությամբ փրականացած ենք տեսնում հայ ժողովրդի դարձվոր իշեցերը, նոր երազները. Հայ ժողովուրդը ապրում է իր պետական կյանքով. ծաղկում ու քարգավաճում է հայ արթիստը, կոլտուրան: Նախկին հետամնաց ցարական գաղութ Հայաստանը դարձել է ծաղկած սոցիալիստական ռեսպոբլիկա, դարձացած արդյունաբերության և մերենայց գաղութատնտեսության փառթամբ երեխը: Նրա դաշտերում ու գործարաններում շնուր է ադամ աշխատանքի ու բարեկեցներ երանենք կյանքի երգը: Հպարտությամբ է լրիւմ հայրենասեռ Հայ հոգևորականի սիրու, տեսնելով իր մայր եղեխի առ անհամբնուց ծաղկումն ու փթթումը և նա իր աղթքներն է առաքում Ամենահարող Աստծուն, նրա օրհնությունը հարգերով: Սովետական պետությունը ժողովրդների ինկարան քարեկամության ընտանիք է և հայ ժողովուրդը իր արժանի տեղն է գրամում սովետական ժողովուրդների հորազատ արդյունանիքությունը: Սովետական կառավագանքի մասնակի անդամները մասնակությունը կատարում են իրենց անդամների անդամությունը և առաջարկությունը կատարում են իրենց անդամների անդամությունը:

Հայ եկեղեցին հայ ժողովրդի մասնակի անդամների մասնակությունը կատարում է անդամությունը և առաջարկությունը կատարում են իրենց անդամների անդամությունը: Սովետական կառավագանքի մասնակի անդամները մասնակությունը կատարում են իրենց անդամությունը և առաջարկությունը կատարում են իրենց անդամների անդամությունը:

Կուլտուրական հզոր վերելք է ապրում այսօր Սովետական Հայաստանը, աճում ու զարգանում են նրա լեզուն, մշակույթը, գրականությունը, երաժշտությունը, թատրոնը, վերելք է ապրում նաև հայ եկեղեցիներին նոյն տապանի հանգրվան, Հայոց Աշխարհի սրբազն լեռան՝ ալեպարդ Մասսիսի ստորոտամ, նիմիրական Արարատյան դաշտավայրում զիշ զողանչում են Ա. Եցմիածնի Գինավուրց Մայր Տաճարի զանգակները հայ եկեղեցու վերելքն ավետելու:

Սրանք հնարավոր դարձան շնորհիվ սովետական ամենադեմոկրատական կարգերի: Թող հավետ օրհնյալ լինեն այդ կարգերի ստեղծողները:

Իր հայքնենիքի բարգավաճման նախանձախնդիր հայ հոգևորականությունը այս բարեկամության ամենաածանը օրերին, Հայրենական պատերազմի ընթացքում ապացուցեց իր նիմիրաժությունը մեր երկրի հեմուկրատական կարգերին. դրա համար էլ Աստծո ողորմությամբ նա նույնպես նախապատրաստվում է ընտրություններին և պատրաստ է, իր ձայնը տալու կոմունիստների բլոկի թեկնածուներին, որոնք ապացուցել են իրենց անձնուրագ սերն ու նիմիրաժությունը Սովետական Հայրենիքին ու սովետական ժողովրդին:

Բոլորս միաձամուռ կերպով, տոգորված ազնիվ գգացումներով, ողջագուրանքով ու սիրով 1946 թ. փետրվարի 10-ին մեր ձայները կտանք կոմունիստների և անկուսականների բլոկի առաջադրած թեկնածուներին, որոնք ապացուցել են իրենց անձնուրագ սերն ու նիմիրաժությունը Սովետական Հայրենիքին ու սովետական ժողովրդին:

Հայրենիքի հայթանակների այս բերկրայի օրերին, երբ մենք շոտով պիտի ընտրական տուփերը ձգենք մեր քվեները, առողություն ենք Ամենաքարքրայինն իր հզոր հումանին տարածեու մեր գերջոր պետության վրա, զորավիգ լինելու նրան ի զարդարությունն է ի հարատեսումն նրա վեհաշուր Հայթանակների, ի փառս և ի պարծանս Մեծ Միության:

Տեր, պահեր քո ամենափառ գորութամբ մեր երկու հզորությունը և քարգավաճումը ի պարծանս մարդկությանը երջանկություն բերող անսասան իրավակարգի և Սովետական Մեծ Հայրենիքի աշխատավոր ուրատնաջան ժողովուրդների, որոնք կերտել են քո արդարությունը և կառուցել իրական դրախտը երկրի վրա:

ԾՈՒԵՑՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ



ԱՊԵՏԱԿՆ ՀՅՅԱՍՏԵՐՆԻ 25-ԱՄՅԱԿԻ ՏՈՎԱԿԱՏԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀՅՅՈՒԹՅՈՒՆ ՄԵԶ

ՀԱՅԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՆՇՈՒՄ ԵՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՏԱՆԻ 25-ԱՄՅԱԿԸ

ԿԱՀԻՐԸ.— Երեկ Կահիրեի ու Ալեքսանդրիայի հայկական գաղութներում տեղի են ունեցել Հայկական ՍՍՌ 25-րդ տարեդարձին նվիրված ժողովներ, Ելույթ ունեցողները մեծ ոգերությամբ խոսում էին իր գոյության տարիներում Սովետական Հայաստանի ձեռք բերած հսկայական հաջողությունների մասին։ Բուռն ծափահարությունների ներքո հավաքվածները ընդունեցին ողջուններ ուղղված Ի. Վ. Ստալինին, Հայաստանի կառավարությանը և Ամենայն Հայոց կաթողիկոսին։

ԹԵՀՐԱՆ.— Նոյեմբերի 29-ին Թեհրանի Հայկական ակումբում տեղի է ունեցել Հայկական ՍՍՌ 25-ամյակին նվիրված նիստ, ներկա են եղել իրանի կառավարության անդամներ, մեջիսի գեպուտատներ, ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի իրանական ընկերության անդամներ, Թեհրանում Հայկական գաղութի բազմաթիվ ներկայացուցիչներ, գիտության ու կուլտուրայի գործիչներ, ժողովրդական ինչպես նաև ՍՍՌՄ-ի գործերի հավատարմատար Յակոբովը և սովետական դեսպանության աշխատակիցները։

ԲՈՒԽԱՐԵՍ.— Ռումինիայի «Հայերի ճակատ» հայկական կազմակերպությունը Սովետական Հայաստանի 25-ամյակի առթիվ անց է կացրել հանդիսավոր նիստ, որին մասնակցել են 1.500 հայ։ Նիստին ներկա են եղել Ռումինական մինիստրներ Թեոփարի ֆորմեսկուն, Վասիլիու Ռեշկանով, Կոնստանտինեսկուն, ինչպես նաև ակադեմիկոս Պարխոնը և ոռոմինական այլ ականավոր հասարակական գործիչներ։ Ներկա են եղել նաև Ռումինիայում ՍՍՌՄ գենապան Ս. Ի. Քավիթարաձեն և գեներալ-գնդապետ Սուսայկովը։ Նիստում հանդիս են եկել «Հայերի ճակատ» կազմակերպության նախագահ Դանիիլյանը և այդ կազմակերպության վիսավոր քարտուղար Բարսյանը։ Նրանք երկուան էլ ընդգծել են Սովետական Հայաստանի հսկայական նրանքումները նրա գոյության 25 տարվա ընթացքում։ Ճառերով հանդիս են եկել նաև Ս. Ի. Քավիթարաձեն և գեներալ-գնդապետ Սուսայկովը։ Բուռն ծափահարությունների տակ ներկա եղողները ընդունել են ողջունի հեռագիր ուղղված Ի. Վ. Ստալինին։

(«Սովետ. Հայաս.», 7 դեկտեմբերի 1945 թ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ 25-ԱՄՅԱԿԻ ՏՈՎԱԿԱՏԵՐՈՒԹՅՈՒՆ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

ԲԵՅՌՈՒԹ.— «Բեյրութում տեղի է ունեցել Հայկական ՍՍՌ 25-ամյակին նվիրված մեծ միտինգ, որ կազմակերպել էր Հայկական ազգային խորհուրդը։ Միտինգում ներկա էին կիբանանի մինիստրների խորհրդի նախագահ Սամի Սոլիսը, հայ եկեղեցու կաթողիկոս Դարեգինը, կիբանանի պառլամենտի գործիչները, ժողովրդական ինչպես նաև սովետական դեսպանության աշխատակիցները։

Ներկայացուցիչները և այլ անձինք Հակայական դահլիճը (Եփի-լեցուն) էր։ Փողոցում այն շենքի մոտ, որտեղ տեղի էր ունենում միտինգը, միկրոֆոնների մոտ գտնվում էին Հարյուրավոր մարդիկ, որոնք լսում էին Հոկտեմբերի ճառերը։

«Միտինգում ելույթ ունեցողները խոսում էին Հայկական ՍՍՌ-ում հայ ժողովրդի և ուս մեծ ժողովրդի եղբայրական քարեկա-

մության շնորհիվ ձեռք բերված հսկայական հաջողությունների մասին:

«Մեծ ճառով հանդիս է եկել հայ եկեղեցու կաթողիկոս Գարեգինը: Կաթողիկոսի ելույթը բազմիցս ընդհատվել է երկարատև բուն ծափահարություններով: «Հայաստանի ազատագրման և այնտեղ աշխատավորների իշխանության հաստատման օրը,— ասել է կաթողիկոսը,— հանդիսանում է մեծ տոն ոչ միայն նրանց համար, որոնք դանվում են Հայկական Ծեսապուլիկայի տերիտորիայում, այլև ամբողջ աշխարհում ցրված մյուս բոլոր հայերի համար»:

«Հայկական ՍՍՌ գոյության 25-ամյակի

տոնակատարությունը կիրանանում և Սիրիայում անց է կացվել մեծ ողբերությամբ ու խանդավառությամբ: Տոնի առթիվ հայկական բոլոր դպրոցներում պարապմունքներ չեղան: Հայկական բոլոր թաղամասերում անց են կացվել հատուկ ժողովներ ու միտինգներ: Հրատարակվել են թերթերի ու ժուռանական համարներ: Հայ եկեղեցու կաթողիկոսն առաջարկել է հայկական բոլոր եկեղեցիներում անցկացնել պատարագ Հայկական ՍՍՌ գոյության 25-ամյակի առթիվ»:

(«Սով. Հայաս.», դեկ. 7, 1945 թ.)





ՍՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏՈՒՄ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՀԱՅԵՐԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՐԱԴԱԴՆԱԼՈՒ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԶԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻԶԱՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ


Նկատի ունենալով արտասահմանում ապրող հայերի դիմումը հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու համար նրանց թուզովություն տալու մասին, ինչպես նաև Հայկական ՍՍՌ ղեկավար մարմինների միջնորդությունը, ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Սովետը հատուկ որոշում է ընդունել արտասահմանից հայերի հայրենիք վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին:

Հայկական ՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետին թույլ է տրվել կազմա-

կերպել արտասահմանյան երկրներում ապրող այն հայերի վերադարձը, որոնք ցանկություն ունեն, ինչպես նաև հանձնարարվել է հայրենիք վերադարձող հայերի համար անհատական բնակարանային շինարարությունը ապահովել պետական վարկով բնակելի տան արժեքի 50 տոկոսի չափով:

Արտասահմանից ՍՍՌՄ վերադարձող հայերը ազատվում են նրանց պատկանող և նոր բնակավայրը փոխադրվող գույքի համար մաքսավճար տալուց:

(«Սովետ. Հայաս.» դեկ. 2, 45 թ.)



ՊԱՏՄԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Օրերս մեր թերթում հաղորդագրություն հրապարակվեց ՍՍՌ Միության ժողովրդականի կան Կոմիսարների Սովետի պատմական որշման՝ «Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին»:

«Նկատի ոմանալով,— ասված է այդ հաղորդագրության մեջ,— արտասահմանում ապրող հայերի դիմումը՝ հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու համար նրանց թուլլություն տալու մասին, ինչպես նաև Հայկական ՍՍՌ ղեկավար մարմինների միջնորդությունը, ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Սովետը հատուկ որշում է ընդունել արտասահմանից հայերի հայրենիք վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին»:

Հայկական ՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետին թույլ է տրվել կազմակերպել արտասահմանյան երկրներում տարող այն հայերի վերադարձը, որոնք ցանկություն ունեն, ինչպես նաև հանձնարարվել է հայրենիք վերադարձողների համապատական բնակարանային շինարարությունն ապահովել պետական վարկով բնակելի տան արժեքի 50 տոկոսի շափով:

Միութենական կառավարության այդ որշման համաձայն հայրենիք վերադարձող հայերը ազատվում են նոր բնակավայրեր փոխադրվող իրենց պատկանող գույքի համար մաքս վճարելուց:

Այդ պատմական որշումը մեծ ուրախություն և մեծագույն գոհումակություն է առաջ բերել Հայաստանի աշխատավորության մեջ: Այդ որշումը հսկայական ուրախություն և Սովետական Կառավարության նկատմամբ անսահման երախտագիտության զգացմունք առաջ կրերի մեր եղբայրների՝ արտասահմանյան հայերի մեջ, որոնք վաղուց երազում են այդ երջանիկ օրվա մասին:

Վերադարձ դեպի հայրենիք: Դեպի հայրենիք հողի Հայրենիք արկի տակ: Տասնամյակների ընթացքում օտար երկնքի տակ, կարիքի ու զրկանքի ճիրաններում, պան-

դրխտության մեջ, մեկ քաղաքից մյուսք, մեկ երկրից մյուսք անվերջ թափառող իրավագործկ ապատրիտների դրությամբ ապրող մարդկանց համար կարող է արդյոք ավելի վեհ զգացմունք լինել, քան վերածնված ու բարգավաճող ազատ հայրենիք, հայրենի ժողովրդի գիրկը վերադառնալու զգացմունքը: Այսուհետև մեր եղբայրները ապրելու են մեզ հետ կողք-կողքի, նրանք աշխատելու են և կառուցելու, խիզախելու և ստեղծագործելու մեր սովետական հայրենիքի հետագա բարգավաճման համար: Այժմյանից նրանք իմանալու են, թե ինչ բանի համար են թափում իրենց քրտինքը: Այժմյանից վերջ կդրվի նրանց անհեռանկար կյանքին, վաղվա օրվա նըկատմամբ անվատահությանը, իրենց երեխանների ապագայի նկատմամբ անորոշությանը:

Սիրիայում և Լիբանանում, Բուլղարիայում և Ռումինիայում ապրող հայ կառուցող բանվորները արտահայտում են արտասահմանյան հայրուր հազարավոր հայերի զգացմունքը, երբ ասում են, թե մինչև երրոր մենք պետք է պալատներ ու դղյակներ, ճանապարհներ ու կամուրջներ կառուցենք ուրիշների համար: Չէ՞ որ մենք ուզում ենք մեր քրտինքը թափել, մեր աշխատանքը ներդնել հայրենի երկրի, հարազատ ժողովրդի երջանկության համար:

Այժմյանից հնարավորություն է բացվում մեր արտասահմանյան բազմահազար եղբայրների փայփայած այդ իղձերի իրականացման համար:

Այդ զգացմունքները հասկանալու համար, դեպի հայրենիք եղած այդ անգուստ ծղոտումը հսկայանալու համար, բավական է հիշել այն ծանր ուղին, որ անցել են արտասահմանյան հայերը, այն ծանր վիճակը, որ բաժին է ընկել նրանց: Չէ՞ որ նըրանք առաջին իմպերիալիստական պատերազմի զոհերն են, թյուրքական արյունարրու սովորականների հալածանների ու կռտորածների զոհերը, թյուրքական սովորականների, որոնք ոչ-մարդկային մեթոդներով մոլունգ դաժանությամբ բազմաթիվ տասնամյակների ընթացքում ձնշում էին հայե-

թին Հարազատ Հողում — Թյուրքա-Հայաստանում: 19-րդ դարի ընթացքում և 20-րդ դարի սկզբին թյուրքերը բազմից կազմակերպել են Հայերի կոտորածներ ու ջարգեր, Հայերի, որոնք իրենց կուտակայով մի պլոտ բարձր էին կանգնած իրենց ճշշողներից՝ թյուրքերից: Հայերը, ամբողջ քաղաքակիրք աշխարհը, երբեք չեն մոռանա 1894—96 թվերին թյուրքական սովորան Արդուկ Համեդի կազմակերպած Հայ բնակչության ֆիզիկական — մասսայական բնաշնչովը, վսնայելով ոչ երեխաներին, ոչ կանանց ոչ ծերունիներին: Ճենց այդ ժամանակ դաշիւցին ամենի քան 300 հազար Հայեր: Հրկիզվեց ու այրվեց ավելի քան 3 հազար Հայ զուուլ: Անապատան մնացած տասնյակ հազար հայեր, ենթարկվելով բնաշնչության սպառնալիքի, փրկվեցին փախչելով Կովկաս, Մուսամատան և Եգրոպայի ու Ամերիկայի երկրները, կազմելով արտասահմանյան Հայ գաղութներ:

Սակայն հայերի համար էլ ավելի սար-
ուափելի օրեր եկան 1914—1918 թվերի
առաջին համաշխարհային պատերազմի
տարիներին։ Հայ ժողովուրդը այն ժամա-
նակ ամենաակտիվ կերպով մտանակցում
էր պատերազմին դաշնակիցների կողմում,
հույս ունենալով իր զավակների արյան
գնով հասնել իր ճակատագրի լուծման,
տղատագրմանը թյուրքական տաելի լծից,
իր ազատության և անկախության վերա-
կանգնմանը։ Սակայն զավադած երիտա-
սարդ թյուրքերը, Սուլթան Համիդի արյու-
նու քաղաքականության շարունակողները,
մեթոդաբար իրագործելով իրենց մարդատ-
յաց քաղաքականությունը հայերի վերա-
բերմաբ, 1915 թվի գարնանից սադիստ-
ներին յուրահատուկ սառնարյուն ցինիկու-
թյամբ ձեռնամուխ եղան հայերի պատմու-
թյան մեջ չտեսնված համատարած կուտ-
րածին և նրանց արտաքսման հայրենի օ-
ջախներից։

Դա ամբողջ ժողովրդի բնաշընչ-
ման հրեշտավոր ծրագիր էր: Ամա-
յացվեց և ավերակույտի վերածվեց
ամբողջ թյուրքահայաստանը, ավելի
քան 300 հազար հայ կոտորվեց:
Նույնքան հայեր զոհվեցին Արաբական ա-
նապատի և Միջագետքի ճանապարհներին,
որտեղ նրանց թյուրքերը, գերմանացիների
թելագրությամբ, մղձավանշալին զույման
ներում քշում էին Բաղդատի երկաթուղու-
անապատային շրջանները բնակչությունը:
Համար Մի քանի հարյուր հազար երեսա-

Ների, կանանց ու ծերունիների թյուրքերը
բնաշնչման սպառնալիքի տակ, - հարկա-
դրեցին մահմետականություն ընդունել:

Առանձնաւուել գաժանությաւը տան.
շամահ արվեցին ու սպանվեցին թյուրքա-
հայերի մտավորականության ամենասակած-
նավոր ներկայացուցիչները, որոնց թվում
հայ նշանավոր բանաստեղծներ Դանիել
Վարուժանը, Սիմեոն Մոն, Հայտնի գրող Նո-
վելիստ Գրիգոր Զոհրաբը: Հայ ժողովրդի
դաշիճների զոհ դարձավ նաև Հանճարեղ
Կոմիտասը: Թյուրքերը նրան բանտ նետե-
ցին սարսափելի պայմաններում և, եթե
նրան տանում էին մահապատժի, նա տե-
սավ անպաշտպան երեխանների, կանանց ո-
ծերումնիների անպատմելի տանջանքները
ու տառապանքները, իր ժողովրդի մեծա-
գույն տառապանքները, որոնք գնցեցին
նրան ու Հասցրին խելագարության:

Այդ անօրինակ կոտորածի հետևանքով
թյուրքահայաստանում ապրող հոկու և
հետ միլիոն հայերից առաջին համաշխար-
հային պատերազմի տարիներին կոտորվեց,
մեոցվեց և բռնությամբ կրոնափոխ արվեց
մոտ մեկ միլիոն հայ: Մնացածները, ավե-
լի քան մեկ միլիոն մարդ, բնագնչութեամից
խուսափելու համար լքեցին հարազատ օ-
չախները իրենց հայրերի հինավորց հողե-
րը և որպես թափառական գաղթականներ
ցրվեցին աճրող աշխարհով մեհ:

Թյուրքահայաստանից փախած Հենց այս
գաղթականներն են, որ կազմում են ար-
տասահմանի հայ բնակչության հիշող մե-
ծամբասնությունը:

Մեծ տերությունների՝ Անդլիայի, Ֆրան-
իիայի, ԱՄՆ-ի այն ժամանակվա կտուավա-
րությունները բազմիցս հանդեմ էին գա-
լիս հայտարարություններ և խոստումներ
անելով գաժանորեն տուժած թյուքքահա-
յերին օգնություն ցույց տալու, նրանց հ-
րավունքները պաշտպանելու, նրանց ան-
սահման տառապանքների ու թշվառու-
թյունների մեղավորներին պատճելու մա-
սին։ Սակայն այդ բոլոր խոստություններն ու
դեկլարացիանները մնացին թղթի վրա, իոկ
հայրենիք վերադառնալու մասին հայ գաղ-
թականների հույսները այդպիս էլ ի դերն
եւան։ Ավելին, արտասահմանյան մի շարք
երկրներում հայ գաղթականներն ընկան
տնտեսական ծանր պայմանների մեջ ա-
ռանց քաղաքական ու քաղաքացիական
տարրական իրավունքների, և միայն իրենց
ընդունակության և իրենց ֆիզիկական գո-
յությունը պահպանելու ձգտման ու կուլ-

տուրայի շնորհիվ նրանք փրկվեցին մահվան սպառնալիքից:

Եվ այժմ դեռևս արտասահմանաւան շատ երկրներում, առանձնապես Թյուրքիայում, Հունաստանում, Իրանում հայերը զուրկեն առարտական ազատությունից, քաղաքական ու քաղաքացիական տարրական իրավունքներից, հաճախ հետապնդման ու հայածանքի ենթարկվելով ուսակցիոներների և ողջական իշխանությունների կողմից:

Այս է մեր արտասահմանյան եղբայրների վիճակը:

Միայն Հոկտեմբերյան Մեծ ռազլուցիցից հաղթանակը և Հայաստանում սովորական իշխանության հաստատումը արտասահմանյան հայերի սրտերում ունեած հույս ներշնչեցին հայրենիք վերադառնալու մասին: Հազար անգամ իրավացի էր ընկեր Ստալինը, երբ դեռևս 1918 թվի հունվարին գրում էր, որ «այժմ ամենքի համար զարդ է, որ Ռուսաստանի ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի բախտը սերտորեն կապված է Հոկտեմբերյան ուրուցիչի բախտի հետ»:

Սովետական իշխանության շնորհիվ, ուստի մեծ ժողովրդի եղբայրական օջնության շնորհիվ, Համբկ(Ք)Պ Կենտկոմի, Սովետական Կառավարության և անձամբ ընկեր Ստալինի ամենօրյա հոգատարության շնորհիվ հայ ժողովուրդը, Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի ղեկավարությամբ իր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը դարձրեց ծաղկուն երկիր, զարգացած արդյունաբերություն, առաջավոր գյուղատնտեսություն և ծաղկող կուլտուրա, գիտություն ու արվեստ ունեցող երկիր:

Հենց դրա շնորհիվ Սովետական Հայաս-

տանը այժմ Հնարավորություն ունի բնդունելու և աշխատանք տալու տասնյակ հազարավոր բազմաշարչար զավակներին:

Այսօր մենք հրապարակում ենք Հայկական ՍՍՌ Ժողովության որոշումը՝ ներդադիր հայերի ընդունման և տեղափորձան կոմիտեի հազմակերպելու մասին:

Ճիշտ է, Սովետական Հայաստանը համարականի պատճառներով, այժմ կարող է ըստունել օտարության մեջ ապրող իր զավակների և դուստրերի մի մասը միայն Բայց այն անսահման խանդավառությունը և ուրախությունը, որով մեր սեսազերթիկացի աշխատավորները ընդունեցին ՍՍՌ Միության Ժողովության որոշումը, ցույց է տալիս, որ նրանք պատրաստ են գրկարաց ընդունելու իրենց արյունակից եղբայրներին և քույրերին:

Մեր ուսապուրիկայի պարտիական, սովորական և հասարակական կազմակերպությունների առաջ, ամբողջ աշխատավորության առաջ կանգնած է պատասխանատու, ոչ հեշտ, բայց շնորհակալ խնդիր բարձր կազմակերպվածությամբ սախառապատրաստվել և իրագործել քաղաքական հակայական կարևորություն ունեցող՝ Սովետական Կառավարության որոշումը:

Մեր ուսապուրիկայի յուրաքանչյուր աշխատավոր, յուրաքանչյուր հայրենասեր պետք է բազմակողմանի օգնություն ցույց տա հայրենիք վերադարձող մեր հայրենակիցներին ընդունելու և տեղափորելու գործին:

Բարի գաղուստ իրենց ազատ, երջանիկ ոսցիալիստական հայրենիք մերադարձող մեր հարազատ եղբայրներին:

(«Սովետ. Հայ», դեկտ., № 264, 1945 թ.)

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՑ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՄԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՍՍՌ Ժողովության պատմական որոշումը արտասահմանի հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապահցությամբ ձեռնարկվող միջցոցառուների մասին Հայաստանի աշխատավորներն ընդունեցին մեծ գոհունակությամբ ու ինանդավառությամբ: Հայաստանի մայրաքաղաքում, Կենտրականում, Կիրովականում և այլ քաղաքների ու շրջանների ձեռնարկություններում, հիմնարկություններում, կունողներում աշխատավորներն իրենց ջերմ ոլույթներում ողջունում են ժողոմովետի:

Որոշումը և իրենց երախատավորաթյունն ու գոհունակությունն արտահայտում Սովետական կառավարությանը, Հայ ժողովրդի ազատարար մեծ Ստալինին:

Ստորև զետեղում ենք աշխատավորության ելույթները, որ քաղում ենք «Սովետական» թերթից (գեկ. 4, 1945 թ.):

Երևանի Զերժինսկու անվան Դաշտահագործիքիշնական գործարանի աեխունող Հիլանյանը ասաց.

— Սովետական կառավարության պատմական որոշումը անսահման ուրախու-

թյամբ է լցրել մեր սրտերը, Հայրենիքից դրկված մեր բազմաշարչար եղբայրներն ու քույրերը մայր Հայրենիք, Սովհուական Հայաստան վերագրանալու հնարավորություն ստացան: Մենք գրկարաց կընդունենք նրանց և ձեռք ձեռքի տված կշարունակենք մեր հոյակապ կյանքի կառուցման աշխատանքները:

Ծրեղերագործ ընկ. Գ. Դայանը իր ելույթում ասաց.

Կատարվեց օտար երկրներում կարիքի ու թշվառության մեջ գեղեցոյ մեր հոյ եղբայրների բաղձանքը՝ վերագրանալ իրենց Հայրենիքը՝ Սովետական Հայաստան, որտեղ նրանք լայն հնարավորություններ կունենան ապրելու մեզ նման օրսամ և երշանիկ, խաղաղ ստեղծագործական կյանքով:

Մեխանիկական ցեխի պհան Շախմալյանը խոսում է արտասահմանում ապրած իր ծանր կյանքի մասին: Դալով Սովետական Հայաստան, նրա համար բացվեց աշխատանքի լայն առարկեղ և այժմ նա ապրում է ունենոր, հանգիստ և ապահով կյանքով: Նա շերմորեն ողջունում է սովետական կառավարության որոշումը և շնորհակալություն է հայտնում նեճ Ստալինին արտասահմանում ապրող հայերի Հայրենիք վերադառնալու ցանկության նեղառչելու համար:

Անչափ ուրախ եմ սովետական կառավարության այս որոշման հանար, առում է խառաս Գ. Դուլյանը: Իմ շատ բարեկամներ այժմ գտնվում են արտասահմանում, նրանք միշտ երազել են մերադառնալ իրենց իսկական Հայրենիքը: Միայն սովետական իշխանության պայմաններում իրականացավ հայրենագուրի եղբայրներին իղձը: Վերադառնալով Սովետական Հայաստան, նրանք մեզ հետ կկազմեն մի միասնական կոլեկտիվ և կապեն սրջանիկ կյանքով: Սովետական կառավարությունը:

Հոդ է տանում նրանց վերադարձի և բնակարանային պայմանների մասին: Մենք մեր անհուն հրախտագիտությունն ու շնորհակալությունն ենք հայտնում սովետական կառավարությանը և նրա զեկավար մեծ Ստալինին հայ ժողովադի նկատմամբ ցուցաբերած ջերմ հոգածագործության համար:


Երեանի Մետարսի գործարանի՝ Ֆրանսիացից ներգաղթած ստախանովական բանվորուհի բրիգադիր Նվարդ Քլյանը ասաց.

Անսահման է ուրախությունս: Ժողկամսովետի այս պատմական որոշումը մեծ հնարավորություն է տալիս արտասահմանում գտնվող մեր տարագիր Հայրենակացներին վերադառնալու իրենց Հայրենիքը: Խեճ ծանոթ է Հայենիքի կարուսը ևս չեմ կարող մոռանալ մեր կառավարության ինձ ցույց տված հոգածար վերակրթունքը: Երբ ես եկա Հայաստան: Այժմ ես ապրում եմ երջանիկ և ուրախ կրանքով: Առվեսան արևի տակ ստալինյան ոգով դաստիարակվում են չեմ երեխաները: Նրանք իրենց երջանիկ կրանքի համար պարտական են մեծ Ստալինին:

Այսուհետեւ ելույթ ունեցավ 1929 թվին Հռևմաստանից ներգաղթած, սովորանովական բանվորուհի Ս. Ափամյանց,

Խոսք շեմ գտնում արտահայտելու իմ ուրախությունը. Հիշում եմ, թե ինչպես ինձ քաջում էր Հայրենիքիս կարուսն ու սերը, իմ իղձը կատարվեց 29 նոյեմբերի, նրբ ես եկա Հայաստան: Ինձ համար բացվեց նոր, երջանիկ կյանքի մի ուղի, այսօր ես ողջունում եմ Հայրենակացներին և սպասում նրանց տեսակցությանը:

Մեկը մյուսի ետևից ելույթներով հանդիս եկան ներգաղթած ստախանովական վարպետ Ն. Շնորհյանը, ստախանովական բանվորուհի Ն. Վարդանյանը և շատ ուրիշները: Նրանք բոլորն էլ ողջունում էին սովետական կառավարության պատմական որոշումը:



ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍ ՄԵՐ ԹԱՆԿԱԳԻՆ ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ

Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու մասին ՍՍՌԴ ժողովը մեր բոլորի սրտերը լցնում է շատ մեծ ուրախությամբ։ Անվերապահ խնդությամբ ողջունում ենք այս նշանակալից ակտը։ Ոչ մի ազնիվ հայ բացի ցնծագին գնահատականից, ուրիշ վերաբերմանը չի կարող ունենալ այս որոշման հանդեպ։

Բնությունների, կոտորածների և հայրենիքից վտարումների հետևանքով՝ հայ ժողովրդի կեսը ցրված է երկոր երեսին, ակայն ոչ մի թշնամական ուժ չի կարողացել մեղքնել հայերի ազգային միասնության զգացումը։ Հանգցնել նրանց սերն ու կարուց դեպի հայրենիքը և վերստին հայրենիքում հավաքվելու կեզրոնահակ ձգտումը ու մտածումը։ Գաղութահայության հայրենաբաղձ հայացքները Սովետական Հայաստան են ուղղված, ուր ապրում են և աշխատում իր արյունակից եղբայրները։ Թափառական հայ բազմությունները մի անպարտելի տեսչանք ունեն—օր առաջ

թողնել օտար երկրները, ուր նրանք մաշում են իրենց կյանքը, և գաղ Հայրենիք, միանալ իրենց եղբայրներին, միասին աշխատել ու կառուցել, իմաստավորել իրենց իրենց որդիների գոյությունը, վայելել իրենց վաստակը միահամուռ ջանքով ծաղկեցրած Հայրենիքում։

Մեր վերադարձող եղբայրների սիրակարուող զգացմունքներին, մենք Սովետական Հայաստանի հայերս, կդիմավորենք նույն եղբայրակարուող զգացմունքներով։ Դաժան Հակատագրով իրարից բաժանված քույրեր և եղբայրներ, որ կովել ենք զանազան ճակատներում մեր թշնամիների գեմ, մեր ընդհանուր նպատակի համար Հայրենիքի և ազատության, ազգային և մարդկային միևնույն իդեալների, այսօր երկու իրավատեր հարազատներ գրկաբաց միավում ենք իրար ազատագրված հայերի տան մեջ։ Սրտագին բարի գալուստ մեր թանկադին հարազատներին։

ԱՎԵՏԻՔ ԽՍԱՀԱՅՑԱՆ

(«Սով. Հայաստան» № 260 1945 թ.)

ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՁԵՅ

Այն օրից, երբ տաճկական յաթաղանից հազիվ ազատված, ձեր սիրտն արյունով ու ձեր աչքերը արցունքով լցված հայրենի տան ծխացող կրակներից փախութ ապաստան որոնելու օտար աստղերի տակ, — սպասում էինք ձեզ։

Կոտորվեցին ձեր հայրեն ու մայրերը, ձեր հարազատ քույրերը, տաճկակուն հարսմաներին զոհ շգնալու կամ լաիր սրիկաների ձեռքը շընկնելու համար երասին աւելիքներին անձնատուր եղան։ դուք նրանց սրբազն դիակները կոխոտելով անցաք, զնացիք օտար հորիզոններ։

Քառորդ դար մոռացության անդունդը վլորվեց, բայց դուք շմոռացաք ձեր երկիրը, ձեր մարմնական վերքերը բուժվեցին, բայց ձեր ոզին շրուժվեց, դուք միշտ հիշում էիք

հայրենի երկիրը։ Եվ այն միջոցին, երբ այրվում էիք գործարանների մրոտ ծիփ ու հրավառ վառարանի առաջ, հայրենի տան կարուն էլ ձեր սիրտն էր այրում։

Ծնորչիվ մեծ Ստալինի մեր ու ձեր սրտի իզգը կատարվեց։ դուք իրավունք և արտոնություն ստացաք Հայրենիք վերադառնալու։

Մեր սրտերը հույզերով, մեր աշքերը լույսերով, մեր հոգիներն անձկալի կարուտով ու մեր ձեռքերը ծաղկի պատկներով լցված սպասում ենք ձեզ։

Հ. ՍՃԱՌՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գիտուրյանների Ակադեմիայի իսկական անդամ։

(«Սով. Հայաստան» № 260 1945 թ.)

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՆԸ

Միության ժողկոմսովեաի որոշումը արտասահմանում գտնվող հայերի կամավոր վերադարձի մասին, ունի պատմական մեծ նշանակություն: Թյուրքահայաստանից մեծ թվով հայեր իր ժամանակին ստիպված են եղել տարազովել արտասահման: Արտասահմանում գտնվող բոլոր իսկական հայրենական հայերը այժմ հնարավորություն ունեն վերադառնալ իրենց հայրենիքը և ամբողջ հայ ժողովրդի հետ միասին անցնել ստեղծագործ աշխատանքի:

Ես ուրախ եմ ողջունելու մեր հղբայր-

ներին հայրենի հողում և ցանկանալ նըրանց, որ նրանք որքան կարելի է շուտ դդան սովետական մարդու ամբողջ բերկրանքը, պարձանքն ու վեհությունը, որպես Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպոբլիկայի ազատ քաղաքացիները:

Ա.Ր.Ա.Մ ԽԱ.23.ՏԲ.3.Ա.Ն

Ստալինյան մրցանակի լաւութեատ, ՌՍՖՍՌ և Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր:

(«Սով. Հայաստան» № 260 1945 թ.)

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ

Դեռ 1921 թվին, երբ ես Կ. Պոլսից մեկնեցի Վիեննա, քանդակագործական բարձրագույն կրթություն ստանալու նպատակով, իմ միակ հույսն ու երազանքն այն էր, որ ակադեմիան ալարտելուց հետո ապրեմ ու ստեղծագործեմ իմ հարազատ Հայրենիքում՝ ազատագրված Առվելական Հայաստանում:

Արտասահմանյան կյանքի կոմֆորտուն ու արտաքին շքեղ փայլը ինձ երրիք չին գրազել. ես դիտակցում էի, որ այստեղ երկրում, կառուցվում է մարդկային հասարակության բարձր ձևը հանդիսացող նոր, սոցիալիստական կյանք, տնտեսություն, կուլտուրա: Այդ նորի կառուցմանը մասնակցելու պատիմն ու հաճույքն էր, որ քաշում էր ինձ դեպի իմ հարազատ հայրենի հողը:

Ակադեմիան ավարտելուց հետո, ինչպես որոշել էի, 1925 թվին՝ 23 տարեկան հասելում, ես եկա Սովետական Հայաստանի մայրաքաղաք՝ Երևան, ուր մինչև օրս ապրում, ստեղծագործում եմ:

Այդ օրվանից ինձ համար, ստեղծագործական եռանդով լի երիտասարդին համար, սկսեց վառ հեռանկարով պստկված մի լան ասպարեզ:

1926 թվից սկսած, թե Երևան քաղաքում և թե Չարավատ հայրենիքը, մեր մեծ առաջնորդներ լենինի և Ստալինի, ուսուուցիոն գործիչների մոնումենտներն ու պորտրետները: Մասնակցեցի Հայաստանում և

Միության կոնտրունական՝ քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսին, համամիութենական,

և անդական հուշարձանների կոնկուրսներին, քանդակեցի հայ անցյալ և ներկա կովառություն խոշորագույն գեղեցիքի, Հայրենական պատերազմի հերոս Հայ սակմիկների պորտրետներ և այլն: Այժմ ինձ հանձնարարված է կազմակերպել Հայաստանում պատմության մեջ առաջին անգամ բացվող կերպարվեստի բարձրագույն կրթական հիմնարկը՝ Գեղարվեստական ինստիտուտը:

Իմ ստեղծագործական և հասարակական գործունեության համար ես 1935 թվին Հայկական ՍՍՌ կառավարության կողմից արժանացած արվեստի վաստակավոր գործչ կոչման, ՍՍՌՄ Գերազույն Սովետի նախագահության կողմից կրկնակի շքանշանի՝ առաջինը 1939 թվին, իսկ երկրորդը վերջին Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյա փառապանձ Հորելյանի առթիվ:

Հայ արվեստագետի իդեալները կարող են միայն կենսագործվել և շունչ առնել սովետական կարգերի պայմաններում, սովետական հարազատ երկրում:

Զկա հայ կերպարվեստի այլ օջախ, քանի եր հարազատ հայրենիքը: Հայ ժողովունիկ կերպարվեստը սովետական պետականության անմիջական գեկավարություն և հոգատարության ներքո ապրում է իր վերանունդը:

Զմասնակցել անմիջականորեն այդ մեծ վերելքին, չստեղծագործել հայրենի հողի վրա, նշանակում է անմաս մնալ Հայ ժողովունի մեծ գործից:

Ծառ անգամ իմ հաջողությունների առիվ ես հիշել եմ իմ երիտասարդ տաղանդավոր այն ընկերներին, որոնք արտասահմանում զիրվեցին և հնարավորություն չունեցան աճել ու զարգանալ Հայրենիքում, ծառայել ժողովրդին:

Այժմ այդ հնարավորությունը մեր պետությունն ստեղծում է լայնորեն: Նրանք չալու են նվիրվելու սոցիալիստական շինարարության պատմական մեծ դործին և

մասնակից են գառնալու մեծ վերածննդին: ՍՍՌՄ Ժողովածովետի պատմական որոշումը արտասահմանի մեր հայրենակիցների համար բացում է նոր դարավլուխ, նոր երջանիկ կյանքի համար, կուլտուրական վերելքի համար՝ հարազատ հողում, Առվիտական Հայաստանում:

ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Արքեստի վաստակավոր գործիչ
(«Սովետ. Հայաստան» № 260, 1945 թ.)

ՆՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՆ ՎԵՐԱԴԱՌՈՒՄ

Նրանք Հայրենիք են վերադառնում, Հայրենիք, որի մի մասը ավերված է թշնամու ձեռքով, որտեղից նրանց անջատեց սրի ու սարսափի զարհուրանքը միայն: Նրանք այժմ ճանաչում են, և իրոք ունեն այժմ միայն մի Հայրենիք—Սովետական Հայաստան: Միայն Սովետական Հայաստանն է, իրականն ու հնարավորը: Միայն Սովետական Հայաստանն է, որ պիտի ապրի, միայն Սովետական Հայաստանի բախտի հետ կարող է իր կյանքն ու ապագայի հույսերը կապել համայն հայությունը:

Հայրենիքները գյուղին չեն կառուցվում, Հայրենիքը պիտք է փորձել ստեղծել, որ կարելի լինի ձեռք բերել այն ծանրակշիռ հմառատությունը, թե որքան դժվարին և տաժանելի գործ է այդ Հայրենիք ձեռք բերելը: Հայության արյունալի պատմության օրինակը ու խրատը գոնե Հայրերը լավ պիտի իմանան: Դյուրին է կորցնել Հայրենիքը, բայց զժվար է վերագտնել այն, երբեմն էլ անկարելի... Անշաւշտ Հայությունը դուրին ու անպայքար չկորցրեց իր հայրենիքի մեծագույն մասը: Արյունով ու ջրտինքով պաշտպանեց Հազարամյակներ Հաշվող իր Հայրենիքը: Սակայն պատմությունը խնայել չէր կարող միշտ, Պատմությունը լրի հայությանը: Եթ Հայության կյանքը կիսրգիր ընդմիշտ, եթե նոր պատմության Հրաշտափորդ ձեռքը չմեկներ գեպի Հայությունը և նորից շինարակոչեր գեպի կյանքը:

Այս, սրի ու սարսափի զարհուրանքը միայն անջատեց Հայությանը իր հայրենի-

քից: Հայկական բանաստեղծությունը հատուկ երգերի հատորներ ունի «զարիպի երգեր», որոնք սրտակակիծ ովքեր են Հայունագուրկ Հայության, որոնց հայրենապաշտ սիրուց իգուր տենչացել է, մեղմել իր հայրենաբաղծության ցավը: Ինչ օտար երկրների շահախնդրության խոսք կարող էր լինել այն հայության մասին, որ երեք հազար տարի արյուն թափեց իր հայրենիքը պաշտպանելու և անտեղ մնալու համար... եվ մնաց էլ...

Հայրենագուրկ հայությունը հայրենիք է միերագունում: Դա ամենաբնական գործն է: Բնու ունի հայությունը օտար երկինքների տակ, հազար ու մի պատրանքների հնութեա: Նա պիտի ապրի իր հայրենիքում: Չանա, ստեղծագործի իր սեփական տանը: Այստեղ միայն իմաստ ունի նրա կյանքը:

ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի արտասահմանից Հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապտկությամբ ձեռնարկվող միջոցառումները բարձրագույն մեծահոգությանը՝ աննախընթաց մեծագործության մի ակտ է: Զգում ենք մեծ առաջնորդ ընկեր Ստալինի մեծ սրտի շերմությունը այդ գործի մեջ: Նա փրկել է շատ Հայրենիքներ, ձաղկեցրեց շատ ժողովրդներ, փրկել ու ծաղկեցնում է նաև Սովետական Հայաստանու: Բող զատուն և ծաղկի տարագիր Հայությունը:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՐԻՔՃԱՅՆ

(«Սովետ. Հայաստան» № 260, 1945 թ.)

ՄԻՐՈՎ ԵՎ ԳՐԿԱՐԱՑ ԿՆԴՐԻՆԵՆՔ

Արտասահմանից հայերի Սովորական Հայաստան վերադառնալու մասին ՍՍՌՄ ժողովածովելու որոշումը պատճական մի թրագարձություն է: Մենք սրտանց ողջունում ենք մեր կառավարության այս արդար որոշումը: Սովորական Կառավարությունը այս որոշումով հնարավորություն է ստեղծում զարերով հալածված, տարագիր ու բնավեր դարձած հայերին վերադառնալու իրենց Հայրենիք, միանալու Սովորական Հայաստանի իր եղբայրներին, մասնակից դառնալու խաղաղ, շինարար, աղատ ստեղծագործ աշխատանքի, ապրելու, գործելու իր իսկ հայրենիքում Սովորական Հայաստանում: Նրանք հնարավորություն կստանան ստեղծելու նոր համամարդկային ավելի մեծ արժեքներ:

Սրտանց ողջունում ենք, մեր կառավարության այս որոշումը: Սովորական կառավարությունը, ինչպես միշտ, այս հարցում ևս ցուցաբերեց իր մարդասիրական վերաբերմունքը:

Այսօր, այս որոշումով արտասահմանի հայերը, մեր արյունակիցներն ու հայրենակիցները հնարավորություն են ստանում վերադառնալու Հայաստան: Այս որոշումով տարագիր՝ հայ ժողովրդի երազած իղձերի կատարման սկիզբն է դրվում:

Մենք զրկաբաց ու սիրով կը նպաստենք արտասահմանի մեր եղբայրներին:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

ԺԱՂԱՎԵՊԱԿԱՆ ԸՆԿԱՐԴ

(«Սովոր. Հայաստան» № 260, 1945 թ.)

ԱՍԱԼԻՆՅԱՆ ԿՈՆՍԻՏՈՒՅԹԻԱՅԻ ԱՐԵՎԻ ՏԱԿ

Ես պատկանում եմ այն երջանիկների թվին, որոնք առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին թյուրքահայաստանում կազմակերպված հայկական բարբարոսական ջարդերից պատավեցին և ապաստանում հոստատեց սովորական իշխանություն: Այս եղավ հայ ժողովրդի պատճական կյանքի ամենամեծ եղելությունը, որից անցել է արգեն 25 տարի: Բազմաթիվ հայ մանուկներ և պատանիներ հնարավորություն ստացան իրենց ձգություններին ու ընդունակություններին համապատասխան կրթություն և մասնագիտություն ձեռք բերելու:

Իմ կյանքի օրինակը շատ բնորոշ է, ներկայացնում է Հազարամորներին: Ես իմ միջնակարգ և բարձրագույն կրթությունը ստացել եմ Սովորական Հայաստանում: Համալսարանում սովորելու տարիներին ես ու պահպատճակած էի պետական թոշակով, ուսումնական ավարտելուց հետո ինձ պահպատճական ասպիրանտուրանում՝ սովորելու: Ասպիրանտուրան պարտեցի պաշտպանությունից դիմումում դիմումում գրականության մասին:

Գործությունը՝ վերնագրով և ստացած ֆիլոդիական գիտությունների՝ թիկնածուի աստիճան, ապա և հայ զրականության պատճության ամբիոնի դոցենտի կոչում: Արդեն 15 տարի է, ինչ երեանի Մոլոտովի անվան պետական համալսարանում դասաւոսում եմ հայ Հեն զրականության պատճություն առարկան: Այս տարվա գարնանը՝ «Գրիգոր Նարեկացի» վերնագրով իմ ուսումնասիրությունը՝ համալսարանում պաշտպանեցի իբրև դոկտորական դիմումը և ստացած նորութիւնների դոկտորի բարձրագույն գիտական աստիճան: Այնուհետև համալսարանի գիտական խորհուրդը ինձ շնորհեց հայ զրականության պատճության ամբիոնի պրոֆեսորի կոչում:

Ունեմ հրամարակած մեծ թվով գիտական աշխատություններ և միջնակարգ զրագուների համար զրականության դասագրք քեր:

Մանկավարժական գործունեության և դիմումական աճման ընթացքում ինչպես են այնպիսի միջնակարգ համար զրականության դասագրք քեր:

Այժմ, երբ ՍՍՌՄ ժողովրդական կոմի-

սարների Սովետը կայացրել է պատմական մեծ նշանակություն ունեցող որոշում՝ արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին, արտասահմանյան մեր եզրայրների համար ստեղծվում է Սովետական Հայաստան գաղու և իրենց կյանքը լավագույն կերպով

տնօրինելու լայն հնարավորությունները Մենք գրկաբաց կրնդունենք նրանց և կանենք ամեն ինչ, որպեսզի նրանք արագ կերպով իրենց մասնակցությունը ցուցաբերեն մեր սքանչելի Հայրենիքի երշանիկ կյանքին:

ՊՐՈՖ. Մ. ՄԿՐՅԱՆ
«Սովետ. Հայաստան» № 260, 1945 թ.)

ՄԵՆՔ ԱՆՀԱՄԲԵՐ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ

Անհուն բերկրանքով ու գոհոնակությամբ կարդացի ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումը՝ արտասահմանյան հայերին Սովետական Հայաստան բնդունելու մասին:

Ես նույնպես այն հայերի թվին եմ պատկանում, որոնք թողել էին իրենց հայրենի հողը և թափառում էին օտար երկրներում:

1927 թվին ինձ հաջողվեց վերադառնալ մայր Հայաստան: Այդ ժամանակ նոր Արարեկիր ավանում կային միայն մի քանի տնակներ: Ծնորջիվ սովետական իշխանության մարդասեր ու հյուրքնկալ վերաբերմունքի, թյուրքիայից եկած հայերը բոլոր պայմաններն ու հնարավորությունները ըստացան նոր Արարեկիր ավանը կառուցելու և քարեկարգելու համար: Շուտով աճեց ու բարգավաճեց մեր բոլորիս սիրելի Արարեկիրը: Կառուցվեցին գործարաններ ու արտելներ, գեղեցիկ բնակարաններ, աճեցին ամեն տեսակ պատառու ծառեր, խաղողի այգիներ և աճա այսօր Արարեկիրը անճանաչելի է դարձել: Սովետական Հայաստանը մեզ ընդունեց հարազատ մոր նման, սի-

րով ու գրկաբաց, աշխատելու, սովորելու, ստեղծագործելու համար մեզ տվեցին բոլոր հնարավորությունները: Այդ ժամանակ ես մի փոքրիկ աղջիկ էի, երբ աշխատանքի մտա Տրիկոտաժ արտելում: Պարտիան և կառավարությունը ինձ համար սովորելու լայն հնարավորություններ ստեղծեցին: Ես ձեռք բերեցի միջնակարգ և ապա բարձրագույն կրթություն, որից հետո վերադարձա հարազատ «Արարեկիր» արտելը և այժմ աշխատում եմ, որպես արտելի վարչության նախագահ:

Ահա թե ինչպիսի հնարավորություններ կան մեր սովետական հայրենիքում կանանց ու տղամարդկանց ընդունակությունները զարգացնելու և մեր հարազատ ժողովրդին ծառայելու համար:

Մենք անհամբեր սպասում ենք արտասահմանյան մեր տարագիր եղբայրների ու քույրերի վերադարձին: Բարի գալուստ մեր հարազատներին:

ՄԱՐԻ ԽԵՐԻԲԵԿՅԱՆ
«Արարեկիր» արտելի վարչության
նախագահ
«Սով. Հայաստ.» № 260 1945 թ.)



ԵՐԵՎԱՆ

Արարատի ագամանդե աշքի տակ,
Փալլիում ևս հանց մատանու գոհար ակ,
իմ երեա՞ն, չքնազ ոստա՞ն հայկական:

Դարդ տուփից ես հարսնաշորե՞րդ կարել,
Հակինթ լույսի աստղեր կրծքին քո շարել,
իմ երեա՞ն, իմ վարդարա՞ն հայկական:

Հովտում լեռանց շուրջպար բռնած երկնի մեջ,
Դու նստում ես նորահարսի նման պերճ,
իմ երեա՞ն, իմ ծառաստա՞ն հայկական:

Մեղր գեղձի, սաթ խաղողի հայրենիք,
Հեղեղվել ես զու գետերով մրգերի,—
իմ երեա՞ն, իմ մրգաստա՞ն հայկական:

Ամենուրեք, ուր կա գեթ մի հայորդի,
Նրա մայրն ես, Հույսն ես նրա հուր սրտի,
իմ երեա՞ն, իմ հանգրվա՞ն հայկական:

Մոյր Արարսի այն ափերից շարունակ
Քեզ են թախծում երեք գերլած ծիծեռնակ—
Դարս, Անի, Վահ, երեք օրրան հայկական:

Հեռուներից՝ համբերի պես տարագիր,
Տոն կդառնան պանդուխտ որդիրդ, երկի՛ր,—
իմ Հայտատան, իմ ապաստան հայկական:

Դեռ ափերին այս քարաշատ, գովանի,
Կիսուանան նոր քաղաքներ գեղանի,
իմ երեա՞ն, իմ օթևա՞ն հայկական:

Ուր եղել իմ, երդս քեզ է երազել,
Հրազդանի անուշ աղմո՞ւկը լսել,
իմ երեա՞ն, ոսկե վրան հայկական:

Աշնանային բարդիներդ քնքարթի
Բուկիներ են տեղում համբին իմ թեթե,
իմ երեա՞ն, ոսկե վրան հայկական:

Սիրոս լիբր երգով, սիրով մի անձիր,
Ես կարոտի համբով նկա քեզ այցի,
իմ երեա՞ն, իմ երդարա՞ն հայկական

Խոյեմբեւ, 1945 թ.

ԱՇՈՏ ԳՐԱՎԻ

(«Սով. Հայ.» № 264, 1945 թ.)

ՍՓՅՈՒԹՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Տուն դասնալու լոր տնեմ ձեզ, ի՞մ եղբայրներ հայրենաբաղձ,
Մեր հնավուց կաղնուց պոկլած դուք տերեներ զեռ ցանուցիր,
Որ թափառուց եք դարեղար ձեր տրտմաշուք սրտում պահած,—
Պատկերն հայոց հայրենիքի, որպես երազ մի լուսածիր:

Գիտեմ հեռվում, օտար երկրի ոչ մի արև ձեզ չժպտաց
Եվ հողն օտար ձեր կարուտի, ձեր տրտմության լացով է թաց.
Թողե՛ք հեռու աշխարհներին որբությունը անտուն մարդու,
Եկե՛ք, խոնջած ի՞մ անտոններ, հայրենի տան դռներն ին բաց:

Եկե՛ք ծաղկուն օրբանը ձեր, որ կյանք առել մոխիրներից
Ու դալարում է երփնավառ, որպես շքնաղ եղեմ այգի,
Ուր հնչում է սրտալարար հայկալեզու երգն անթախիծ,
Եվ ուր տերն ին և ինքնիշխան կտրիճ թոռները մեր Հայկի:

Եկե՛ք, սիրով կանչում ին ձեզ մեր պատական արտն ու արոր;
Կանչում ին ձեզ մեր սարերի անուշ հովերն մեղմօրոր,
Մեր աղբյուրները լուսաշիթ, մեր օջախները հուրհրան
Եվ մանուկները դալարուն, որպես գարնան արտուտ ու լոր:

Մեծ մեծագործ Առաջնորդի ձեռքն է կանչում ձեզ հայրաբար,
Առաջնորդի, որ մեզ տվեց և՛ հայրենիք, և՛ ինքնություն,
Զեզ էլ կտա նա շեն օջախ, կտա ովի ստեղծարար:
Եկե՛ք, շքնաղ մեր աշխարհի Առաջնորդն է ձեզ կանչում տուն:

ԱշԱՎԵՒ

(«Սովետ. Հայաս.», դեկտ. 14, 1945 թ.)





ՀԱՅՈՅ ԵԿԵՊԵՑԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ս. թ. նոյեմբերի 7-ին Ս. էջմիածնի Մայր տաճարում Հոկտեմբերյան ռեղլուցիայի 27-րդ տարեդարձի օրը, ս. պատարագ մատուցվեց, որից հետո կատարվեց Հանրապետական մաղթանք: Պատարագուածքը տարած եղանակ կարդ: Ազնավորյանը:

Քարոզ խոսեց գերաշնորհ տ. Կարապետ եպիսկոպոսի. Թումանյանը, որը բացատրեց Հոկտեմբերյան ռեղլուցիայի ազատարար դերը և ռեղլուցիայի հետ կապեց նաև մեր ժողովրդի վերածնունդն ու ազատագրումը նոյեմբերյան ռեղլուցիայի միջոցով:

Ս. թ. նոյեմբերի 7-ին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում ս. պատարագ մատուցվեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեղլուցիայի 27-րդ տարեդարձի առթիվ: Պատարագից հետո կատարվեց Հանրապետական մաղթանք:

Պատարագի գերաշնորհ տ. Ռուբեն եպիսկոպոսի. Դրամբյանը քարոզ խոսեց և բացառեց Հոկտեմբերյան ռեղլուցիայի ազատարար նշանակովումը բոլոր ճնշված ժողովրդների համար:

Առանձնապես կանգ առնելով հայ ժողովրդի ազատագրման և հայ պետականության ստեղծման ու կազմակերպման խընդիրների վրա, նշեց այն մեծ օժանդակությունը, որ սուս մեծ ժողովուրդը մատուցեց հայ ժողովրդին, փրկելով նրան վերջնական ընտանչումից:

Սույն թվի նոյեմբերի 1-ին տեղի ունեցած Ս. էջմիածնի Հոգևոր ճեմարանի բացումը:

Գերաշնորհ տ. Ներսես եպիսկոպոս Արքահամբյանի գլխավորությամբ կատարվեց բացման հանդեսը:

Աղջույնի խոսքով հանդես եկան գերաշնորհ տ. Ռուբեն եպիսկոպոս Դրամբյանը և ճեմարանի տեսուչ պ. Մինաս Մինասյանը: Բացման հանդեսին ներկա էին Ս. էջմիածնի բոլոր միաբանները, Հոգևոր ճեմարանի սաները, ուսուցչական և տեխնիկական անձնակազմը:

Նոյեմբերի 2-ից սկսվեցին կանոնավոր պարագնունքները:

Սույն թվի նոյեմբերի 10-ին Արմավիրից Ս. էջմիածնի ժամանեց գերաշնորհ տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը Վեցին զեկուցելու Հյուսիսային Կովկասի եկեղեցական գործերի մասին: Տ. Սուրեն եպիսկոպոսը իր թեմում բաց է արել 3 նոր եկեղեցի:

Սույն թվի նոյեմբերի 15-ին գերաշնորհ տ. Կարապետ եպիսկոպոս Թումանյանը մեկնեց Ռուսովով-Նախիջևան որպես թեմական առաջնորդ:

ՀԵՌԱԳՐՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՅ ԿԱՐԱՎՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ին

Մենք, Դամասկոսի հայերս, թվով մի քանի հազար մարդ, այսօր, կիրակի, օգոստոսի 19-ին Հավաքվելով առաջնորդաւան, լսեցինք Հայաստանից վերադարձած եկեղեցական ժողովի պատգամավորներ պ. պ. Եփրեմ Ելեպյանի, Գևորգ Բաբայանի

և դր պ. Կարապետականի հաղորդագրությունները էջմիածնի ժողովի և Սով. Հայաստանի հաջողությունների մասին: Կարծում ենք, որ արտահայտում ենք Սիրիայի հարյուր հազարավոր հայերի միահամուռ ցանկությունը, խանգամառությամբ ողջունելով Զերդ Վեհափառության ընտրությունն էջմիածնի գահին:

Հնդունեցեք մեր անկեղծ շնորհակալությունը Հայրենական մեծ պատերազմի ընթացքում Զեր գովական աշխատանքի համար, աշխատանք, որ Դուք այժմ էլ անխոնչ շարունակում եք:

Մենք աղոթում ենք ամենակալին Զեր երկար կյանք և առողջություն շնորհելու, որպեսզի Դուք նպաստեք ամբողջ աշխարհի հայության հավաքագրմանը Մայր Հայրենիքում՝ Ա. Էջմիածնի շուրջը:

Միտինգի նախագահության կողմից

Նախագահ ԱՐՏԻՆ ՄԱՂԵՅԱՆ

Քարտուղար ՀԱԿՈՅ ԽԱՇՄԱՆՅԱՆ

«Հայ ազգային ճակատի կիոնի շրջանի մասնաճյուղը» հետեւյալ գրությունն է ուղղել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին.

«ՆՈՐԻՆ ՎԵՃԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ

S. S. ԳԵՎՈՐԳ Զ

ԱԶԴՅԱՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Վեհափառ Հայր,

Նորին սրբազն օծության Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ընտրության և Հայաստանյաց եկեղեցվո Ս. Էջմիածնի Մայր Աթոռին գահակալության առթիվ Ֆրանսահայ Ազգային Ընդհանուր Միության «Ազգային ճակատ», Կենտրոնական Ֆրանսայի Շրջանային կենտրոնական Վարչությունն հանուն իր թեմին կուգա շնորհավորելու իր Արժանընտիր Հոգմոր նոր Պետը, սրտանց մաղթելով նորին Վեհափառության արկշատություն և կարողություն:

Հայաստանյաց եկեղեցվո նորընտիր հպիսկոպոսապետը վատահ կրնա ըլլալ ի սփյուռք ցրված իր հոտին անկեղծ սիրուն դեպի իր եկեղեցին և անոր սուրբ ավանդությունները:

Վեհափառ Տեր, մեր գաղութին սրտարուխ փափագն է տեսնել հայ եկեղեցին իր իսկական բարձրության վրա:

Թեմիս Հայորդիները անհունորեն երջանիկ պիտի գգան ինքոյինքին, երբ օր մը ուշ կամ կանուսի, իրականացած տեսնեն իրենց դարավոր և կարուտալից երազները՝ հաստատիլ իրենց պաշտելի Հայրենիքին՝ Սովետական Հայաստանի սահմաններին ներս և իրենց անիտոնչ աշխատանքով սատար համարական անոր վերելքին և մեծության համար:

Արդ, Վեհափառ Տեր, երկյուղածությամբ կուգանք Վեհափառությանդ օծյալ

Սուրբ Աջոյն, Հայցելով Զեր Հայրական Սուրբ օրհնությունը:

Որդիական ամենախոնարհ Հարգանքներով

Նախագահ

Ա. ԱԶԲԱՋՅԱՆ

Քարտուղար՝

ՀՈՎՍԵՓ ՏԵՅԿՐՄԵՆՉՅԱՆ

Բուժաբեստից, Ռումինիայի Հայոց թեմական առաջնորդի տեղապահ գերապատիկ տ. Վաղգեն Վարդապետը Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Գեվորգ Զինուար իր առ 8-ն սեպտեմբեր 1945 թ. № 4466 գրության մեջ Հայտնում է հետևյալը.

Վեհափառ Տեր,

Այսու կը հաստատեմ իմ 23 հունիս 1945 թվակիր գրությունը, որով պատիվ ունեցաղեկուցանելու Զերդ Վեհափառության գաղութին մեջ ստեղծված ոգևորության մասին մեր վերապարձեն հետո:

«Այդ ոգևորության արգյունքներն մին եղակ այն, որ մեր ժողովուրդը և թեմական իշխանությունը ավելի և ավելի մոտ կզգան ինքինքնին Մայր Հայրենիքին և Մայր Աթոռին:

«Ինչպես իմ Ս. Էջմիածնին եղած ատեն արդեն հաղորդած էի Զերդ Վեհափառության, այստեղ մենք հիվանդանոց մը ունենք պատերազմի վիրավորներու համար, որ այժմ փակվեցավ:

«Մեր բոլորիս ցանկությունն ըլլալով սույն հիվանդանոցի ամբողջ կահավորումը նվիրել մեր Հայրենիքին, Թեմական Խորհուրդը որոշեց և պատշաճ միջոցներ ձեռք առավ, որ մոտ ատենին այս հիվանդանոցի բոլոր մեքենաները, գործիքները ու կահավորումը գեպի Հայաստան փոխադրվեն Խումինիստ «Հայաստանյան ճակատի» Հայրենասիրական կազմակերպության միջոցով Հայաստանի կառավարության տրամադրության տակ գրվելու նպատակով հիվանդանոցի մը համար»:

Քերոսիթ-Անթիլյասից Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Առաջինը հեռագրում է. «Հայտնում ենք մեր շնորհավորանքները հիմարանի բացման առթիվ»:

ԲԵՐՐՈՎԹԻց գերաշնորհ առ. Արտավազդ
արքեպ. Սուրբ Եանը Ամենայն Հայոց Վե-

հափառ կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զին
ուղղութ հեռագրով շնորհավորում է Հեմա-
րանի բացումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԵՍՊՈՆՖԼԻԿԱՅԻ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԵԴԱՐՁԻ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՈՒՆՈՎ
ԱՍԱՑՎԱԾ ՀԵՌԱԴՐՆԵՐԻՑ**

ԱԹԵՆՔԻՑ

Էջմիածին.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՎՈՐԳ Զին

Զերդ Վեհափառության ցուցմոնքի Հա-
մաձայն տոնեցինք Սովորական Հայաս-
տանի 25-րդ տարեդարձը: Այդ կապակցու-
թյամբ կենտրոնական տաճարում անձամբ
ես բազմաթիվ ազոթողների ներկայությամբ
հանդիսավոր արարողություն կատարեցի:
Ժամերգությունից հետո քարող եղավ և
լսվեց ազգային կոմիտեի կողմից կազմա-
կերպված զեկուցում Հայաստանի Ռես-
պուբլիկայի հաջորժությունների և շինարա-
րության մասին:

Նոյեմբերի 29-ին բոլոր դպրոցները փակ
էին և ուսուցիչները բացատրում էին այդ
օրվա նշանակությունը:

Արքեպիսկոպոս ՄԱԶԼՈՒՄՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

ԷջՄԻԱԾԻՆ, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԵՎՈՐԳ Զին

Համաձայն Վեհափառությանդ Հեռագրա-
կան կարգադրության այսօր, նոյեմբերի
քսանիննին, Թեհրանի նորակառուց Աստ-
վածածնի եկեղեցում բազմահազար աղո-
թողների ներկայությամբ Հայաստանի Ռես-
պուբլիկայի քսանիննիքը քարոզեցի
Հայաստանի Ռեսպուբլիկայի կուլտուրա-
կան, տնտեսական, շինարարական բուռն
վերելքի մասին:

Իրանա-Հնդկաստանի Հայության և իմ
կողմից շերմորեն շնորհավորելով Հայաս-
տանի Ռեսպուբլիկայի փառապանծ քսան-

հինգամյակը, ցանկանում ենք Ռեսպուբլի-
կային անասանություն և իր հետագա աշ-
խատանքներում հաջողություն:

Իշանա-Հնդկաստանի քեմի առաջնորդ
ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՍՈՒԻՐ ԷջՄԻԱԾԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ
ԽՈՐՀՐԴԻՑ

Նորին Վեհափառության բարձր կարգա-
դրության և Գերագույն Հոգման Խորհրդիկ
Հեռագրական առաջադրության համաձայն
նոյեմբերի 29-ին Ս. Գևորգ եկեղեցում
հոգմանականության և խուն բազմության
սերկայությամբ Սովորական Հայաստանի
25-րդ պանծալի տարեդարձի առթիվ կա-
տարվեց ո. պատարագ և Հանրապետական
մաղթանք: Խուն օրը Ախալցխայի Ս. Գրի-
գոր Լուսավորիչ և Ախալքալաքի Ս. Խաչ ե-
կեղեցիներում կատարվել է ո. պատարագ
և մաղթանք: Պատարագ մատուցի ինքա
Հայաստանի պահպանության և անսասա-
նության հիշատակումից առաջ բանաստեղ-
ծի «Ընդ ատեղով ի՞նչ կա սիրուն» տողե-
րը բնարան ընտրելով դարեր տառապող,
գարեդար նահատակվող Հայաստանի վե-
րածնդյան 25-ամյա փառապանծ տարե-
դարձը հանդիս բերի իր բոլոր փառքով ու
փայլով, յուր աննախընթաց առաջադիմու-
թյամբ: Հոգով միշտ արի, վսիմին սիրա-
հար, ստեղծագործով, Հրաշակերտով ու
անընդհատ շինարար Հայը սովետական իշ-
խանության փողփողող դրոշակի ներքո, մո-
ռուցությունից պարծանքի արժանի դար-
ձած, ցնձագին տոնում է Հայրենիքի մերա-
ծնդյան 25-ամյա տարեդարձը: Փառք քա-
ջակարութ Հային, Համերժ փառք տոնական
Հայաստանին: Դեպի մայր Հայրենիք, դեպի
Սովորական Հայաստան է թոշում Հայի

սիրուն ու հոգին այս երջանկավետ օրը, դեպի ցանկալի Հայաստան, մեր պաշտելի նախնաց օրրանը, որի հողի ու ջրի կարուտն ու փափակը սրբում ուկեվառ արևի ծագման 25-ամյակն է այսօր տոնում և ուխտում նվիրաբերել յուր էությունը նրա բարօրության սուրբ սեղանին։ Միացյալ Հայաստան փափակելի վեհանումը լսելու տենչանքը հարուցանելով ավարտեցի խոսքս բարեխնամ ուս ազգին, Հայաստանի փրսկի հանճարեղ Ստալինին Հայտնելով Վրաստանի հայության գերխոնարհ երախտագիտական զգացմունքը մայր Հայրենիքն կյանք ու լուս պարգևելու համար, այս լի հույս, որ Գերապանծ Ստալինի մեծագույն արդարամտությամբ և իմաստությամբ կասակի ազատառենչ հայ ազգի բաղձանքը՝ տեսնել նվիրական Միացյալ Հայաստանի վերածնունդն ևս։

Ապա սրտահույզ հնչեց Հայաստանի և եղրարական ուսապուլիկաների պահպանության և անսասանության սրտադին տղերսն առ Բարձրյալը։ Սուրբ պատարագից հետո ամենայն հանդիսավորությամբ կատավեց Հանրապետական մադթանք։ Մադթանքը ամբարտվեց Պահպանից ով Փոկիչ մինացոր Հովանին հայցելով Սովետական Հայաստանին և Հայաստանի անսահման ժամանակ ցնծացող ու միսիթարմող հայության յուսաշող ժամանությանը հարոս սուրբ էցմիածնին, վեհաշնորհ Գահակալին և յուր հոտին։

Պանծալի տոնի առթիվ բաղդ ունեցած հեռագործ շնորհավորել համայնքների և նվաստիս կողմից անգուստական տոնը ազդիս Վեհափառ Հարապետին և որդիական ակնածությամբ ամենախոնարհարար խօնդրել արժանի անել Վրաստանի հայերի սիրազեղ շնորհավորանքը և հայրենասիրական ցերմ զգացմունքները հայտնել Հայաստանի կառավարությանը բերկարի տոնի առթիվ։

Անկարող եմ ձայնակից ըինել Գերադույն Հոգեւոր կորհրդիդ օրհությունը միշտ վայելող մատաղ սերնդի երդ ու կանչին և շասել զավակներիս հետ մայր Արաքսի քոյլը Կուր գիտի ափերից։

Փա՛ռք քեզ, միշտ փառք, հերոսական Հայաստան, հանճարեղ դու ճարտարապործ, շինարար, ժողովուրդների սուրբ դաշինքով ստալինյան դու ծաղկում ես և կերտում լույս ապագադ։

Սահակ ավագ հահ. ՍՍՀԱԿՅԱՆ

Առաջնորդական Փոխանորդ Վրաստանի

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

ԷջՄԻԱԾԻՆ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ.ԻՆ

Սովետական Հայաստանի 25-րդ տարեկարձի ամենահանդիսավոր օրը Ռումինիայի հայկական թեմի անունից հղում եմ Ձեզ և Զեր միջոցով հայկական կառավարությանը մեր սրտաբուխ ողջունները։

Կեցեց հայ ժողովուրդը և Սովետական Հայաստանը ուս մեծ ժողովուրդի հետ անքակտելի եղբայրական կապի մեջ։

ՎԱԶԳԵՆ ՎՈՐ. ԲԱԼՃՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻՑ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ.ԻՆ

Սովետական Հայաստանի 25-րդ տարեկարձի կապակցությամբ Աղեքսանդրիայի հայերի կազմակերպած տոնակատարության կոմիտեն Ձեր վեհափառության ու Ձեր ամբողջ հոգևորականությանն է հղում իր խորին հարգանքները այն անսասան հավատքով, որ Ձեր աղոթքների շնորհիվ ազգի օրինական ձգտումները միանգամայն պիտք է իրականանան։

Խոմիտեի կազմակերպողների անունից
ՎԱՐԴԱՆ ԶԱՆԳՅԱՆ

ԲՈՒԽԵՆՈՍ-ԱՅՅԵՍԻՑ

ԷՋՄԻԱԾԻՆ, ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԵՎՈՐԳ Զ.ԻՆ

Հայկական համագումարը աշխարհական պատգամավոր Բագչեցյանից սրտառուց հաջողմունքով լսեց բանվոր դասակարգի հաջողությունների, էցմիածնի ազգային եկեղեցու ժողովի և սիրելի Հայրենիքի առաջադիմության մասին։

Արգենտինյան Ռիսպոբլիկայի Հայկական Միությունը հղում է իր չերմեռանդ աղոթքները Մայր Աթոռի և Սովետական Հայաստանի հավերժ ծաղկեցն համար։

Համագումարի նախագահ Ա. ՍՍՐԳՄՅԱՆ



ԴԱԶՎԻՆԻՑ

Դազվինի (Բրան) հայ համայնքը և Ազգային խորհուրդը Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին ուղարկել է հետևյալ հեռագիրը՝ ընդունված Սովետական Հայաստանի 25-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում.

ՆՈՐԻՆ ՍՐՅՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Դազվինի հայ համայնքը հղում է Զեզիր անկեղծ և սրտագին շնորհավորանքները Հայաստանում սովետական իշխանության հաստատման 25-րդ տարեդարձի առթիվ: Խորապես և անսահմանորեն հիացած հնքայն վիթխարի նվաճումներով, որ Հայաստանը ձեռք է բերել սովետական իշխանության օրով:

Հայ ժողովուրդը՝ վերածնված Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռազմուցիայի շնորհիվ ամուր և հաստատ ընթանում է դեպի առաջ, հաղթանակից դեպի նոր հաղթանակ Սովետական Միության ժողովուրդների եղբայրական բնտանիքի մեջ:

Թող Աստված օրհնի նրանց ստեղծագործ աշխատանքը ի բարօրություն Մայր Հայրենիքի:

Աշոտ Մելիքյան, Մարտիկ Ավետիսյան, Մկրտիչ Տեր-Նիկողոսյան, Ներսես Ավետիսյան, Տեր Մեսրոպյան Քահանա, Շավարշյան Մարգիս, Երվանդ Գաարյան

Մ. թ. նոյեմբերի 25-ին Սովետական Հայաստանի 25-ամյակի տարեկարձին Ա. Լոմիածնի Մայր տաճարում մատուց լուս պատարագ, որից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք: Պատարագում էր գերաշնորհ տ. Ներսես եպիսկոպոս Արքայամբանը, որը հանգամանորեն բնորոշեց Նոյեմբերյան ռեսուրսիայի փրկարար դերը, մեր ժողովրդի պահպան հան և նրա պետականության ստեղծման գործում: Քարոզի վերջում նա կոչ արեց հավատացյալներին ամբողջ ուժերով նվիրվել Հայրենիքի միանության և նցրա զարգացման պատմական մեծ գործին:



Սույն թվի նոյեմբերի 25-ին Երևանի Ս. Աստվածածին եկեղեցում ն. պատարաց մատուցվեց Սովետական Հայաստանի 25-ամյակի տոնակատարության առնշությամբ: Պատարագից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք: Պատարագի գերաշնորհ Ռուբեն եպիսկոպոս Դրամբյանը իր բարողում մեկնաբանեց հայ ժողովուրդի պատարագման հարցը կապված նոյեմբերյան ռեսուրսիայի հետ: Նա կոչ ուղղեց ժողովուրդին՝ էլ ամելի փարվելու հայ ժողովուրդի պետականությանը և ամբողջ ուժերը նվիրել մեր ժողովրդի միանությունը և պետականությունն ամբոցներուն ու զարգացնելում:



ԷՉՄԵԱԾԻՆ

Հայոց երկնքի արփիվույն պես պայծառ
Մեր հոգիոց մեջը կը շողաս լոին,
Եվ կը փարատես մեր մտաց խավար,
Ո՞վ դու լուսատու մերն էջմիածին:

Զերթ ակունքն Հայոց զինջ ու մաքրագույն
Թու ազգեցությունք մեր մեջ կը հոսին
Սրբելով մեր մեջը լզգացմունք տմոյն,
Կենդանի աղբյուր, վե՛հ էջմիածին:

Սառնամանիք բիրտ, մըրրիկ քայքայիչ
Եկեր անցեր են վրա բու խաշին,
Բայց ժայռմ անսասան կեցեր ես կրկին,
Ո՞վ հավերժական մեծ էջմիածին:

Հայոց ծաղկանց պես կը ծիս ամեն
Մեջը դարերուն եա ձմբան ցրտին,
Նոր թույր կըզգենու, նոր բույր խնկեղեն,
Գեղաբողբոջ դու կյանք էջմիածին:

Անժամանակ կոթողն Հայոց Արարատ,
Ու մեկ հեղեղ իսկ հասեր գագաթին,
Բարբարիկ ազգեր—քանդիչ հեղեղատ—
Չըկրցին շարժել հիմդ, էջմիածին:

Լերանց պես Հայոց կանգնիս երկնաբարձ,
Մեզ կուտաս ընդմիշտ ներշնչման ոգին.
Սանդուփ և կըլլաս երկնասլաց,
Կը տանիս մեզ վեր, բա՛րձր էջմիածին:

Զայնասփյուռ մի ես անվերջ հեռարձակ,
Երգ մը ոմիս մեզի դաշն ու սրտագին,
Կը խոսիս մեզի ամեն ժամանակ
Բա՛ր բանանք մեր սիրտ, սէ՛ր էջմիածին:

Համայն Հայության լոյս—կրակարան,
Կալծ մը ոմի քեզմե անձնյուր հայ հոգին,
Երկրի որ անկյունն են թափառական
Քեզմով կը տաքնան, բո՛ց էջմիածին:

Տաճար հոյակապ, տեղի սրբազն,
Ուր իշակ ինքը Փրկիչն աշխարհին,
Տըվակ Հայոցը պարծանք մը աննըման,
Անժառ անոն մը՝ Սուրբ էջմիածին:

Ամերիկա

ՀՈՎՀԱՆ ՀՈՅԿԱԶ





ՀՅՄԱԶԳԱՑԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎԱՐՆԵՐԻ ՏՊԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎԱՐՆ
ԳԵՐ. Տ. ԱՌԵՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՌԱԴԻՈ-ԵԼՈՒՅԹԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

Լիբանանի հայոց առաջնորդ գեր. տ.
Արքավազդ արքեպիսկոպոսը Հայաստանից
վերադառնալով իր պաշտոնատեղին, իր
տպավորությունները Հայաստանի մասին
ուղղուելով հաղորդել է սփյուռքի հայության։ Գեր. տ. Արքավազդ արքեպիսկոպոսի քարոզը զետեղում ենք նույնությամբ՝ վերցնելով «Զարթոնք» թերթից.
(2634, 1945 թիվ)։

ԽՈԲՀՅՈՒՅՆ ՀԱՅՈՍԱՆ

«Քանզի մենք շատերուն պես չենք՝ ու-
րսունք Աստծո խոսքին վաճառականները
կուզեն բլլալ, այլ միայն անկեղծությամբ,
Յստուծու առցի Քրիստոսով պիտի խո-
սինք։ ...Ոչ թե մելանով կուզեմ գրել ու
բանով խոսիլ, ոչ թե քարեղեն տախտակնե-
րու վրա, այլ ձեր սրտին մարմնեղեն տախ-
տակներուն վրա։»

(Բ. Կորթ. 17)

Բարեկեալ հանդիպումով մը այս առա-
վոտ բոլոր հայ եկեղեցիներեն կարդացվե-
ցավ Պողոս առաքյալի այն համարը՝ որ
իմ խոսքերու ուղղությունը պիտի ճշտեր։
Վասն զի ես ալ, Առաքյալին պես, պիտի
չուզեմ խոսի վաճառական բլլալ, այլ խո-
սի ճշմարտությունը միայն ու իմ խոսքերն
քանդակել ոչ թե բարեղեն տախտակներու
վրա, այլ իմ ունկնդիրներուն սրտի մարմ-
նեղեն տախտակներուն վրա։

Խորհուրդ կնշանակե ուղիղ միտք, ի-
մաստություն, դատողություն, իրատեսու-
թյուն ու հեռատեսություն։ Հակառակը կը լ-
լա անխորհուրդ, անիմաստ ու անհեռա-
տես։ Կըսենք հաճախ՝ ինչ անխորհուրդ
մարդ է, սա ինչ անխորհուրդ գործ է, որ
համագոր է անխորհուրդի հորիդային։
Հայաստան, անկախ իր պաշտոնական նը-
շանակութենեն, հայտնաբերե Հայաստան
մը խորհուրդներով, այսինքն իմաստուն- և

հեռատես խորհրդականներով, պետական
իմաստուն ժողովականներով ու պաշտոնա-
տարներով կառավարվող։ Ու ես այդ խոր-
հուրդն ու իմաստությունը տեսա իմ Հա-
յաստան և Մայր Աթոռ գտնվածն բովան-
դակ միջոցին, խորհուրդ մը՝ որ հաջողեցավ
ամբողջ քառորդ դար խազաղության, բարօ-
րության և բարձր ու մնայուն մշակույթի
բացառիկ շրջան մը ապահովել հայրենիքի
բոլոր զավակներուն և սրտագին գոհուա-
կություն՝ սփյուռքի բոլոր իրատես հայե-
րուն։ Այդ իմաստուն խորհուրդով էր, որ
հայ եկեղեցին հոգանակություղ ու ներկայաց-
նող Ազգընտիր Տեղակալը, Գելվորդ Մորա-
գան, կրցավ մինակը, ծերունի, հավատա-
րիմ միակ միաբանով մը, անցնիլ բավա-
կան գմբարին շրջաններե ու, պարագաները
իրենց խսկությանը մեջ դիտած, հայ եկե-
ղեցու նավը փոթորկու ծովերու վրային
անցնելով հասցնել ապահով նավահան-
դիսա ու կարճ ատենի մեջ կազմել փորբիկ,
բայց եռանդուն ու հավատարիմ միաբանու-
թյուն մը՝ ամբողջ տասն վարդապետներով,
որոնց հինգը, արտասահմանի այլ հինգերու
հետ եափսկոպոս ձեռնադրվեցան հովիսի
1-ին։ Հայ եկեղեցու պիտին իմաստուն
խորհուրդով կազմվեցավ «Աստունցի Դա-
վիթ» հրասալլային զորացունը՝ որ անկամ
մոն ալ նապացուցը տվակ ցեղին դրուցա-
նական ոգիին ու տիրեցերանոչակ գարձուց
հայ զորավարներուն ու մարդիկներուն դի-
մադրական կարողությունը։

Ու որպես զի Մայր Աթոռը կարենա իր
սիրտին ձայնը արձանագրել հայկական բո-
լոր կենտրոնացումներուն մեջ ու առիթ տալ-
նորակագմ միաբանության և հայրենիքի-
գրականագետներուն իրենց մտքի հղացքը ի-
հանդես բերելու կրոնական հանդեսի մը
մեջ ևս, այդ միևնույն խորհրդալին իմաս-
տությունը ահա երկրորդ տարին է, որ

«Եղմիածին» պաշտոնաթերթը կդնե իր մը-
տավոր որդիներու տրամադրության տակ:
Բայց այսքան չէ միայն Մայր Աթոռի ի-
մաստությունը, այլև պատմական դեմք
դարձած Տեղակալը, պետք էր մտածեր նաև
Հայ եկեղեցին օժտելու հոգինոր Ճեմարանով
որ, տպարանով մը և տարիների ի վեր
զգացված բոլոր պակասներու լրացումով:
Ու այս իմաստուն և քաղաքավար ու հար-
մարող քաղաքականության շնորհիվ էր, որ
շրջակա բոլոր շենքերը, բացի Գեվորգյան
Ճեմարանի շենքերին՝ որոնք իրու ճիվան-
դանոց կծառայեն Հայ և խորհրդային վկրա-
վորներու: Մինակ մնացած անձ մը կարւ-
զացավ ընել այս բոլորը, և վստահ իր
հոգնիլ ու հուսահատիլ շգիտցող սարդու
անսպառ կորովին՝ Մոսկվա մնցավ ի
խնդիր ավելի մեծ ու Հավերժական ակնկա-
լությանց պսակումին: Ու էրր Քրեմլինի
պալատին մեջ նստեցավ դարուս մեծագույն



Արտավազդ արքեպիսկոպոս

Մայր Աթոռ կրցավ իր կարիքները բացատ-
րել երեան ու մինչև Մոսկվա, որոնք սիրով
Վեհարանին վերադառնուցին պետական—
զինվորական սպասարկությանց Հատկաց-
ված բոլոր եկեղեցիները, վանքերն ու վան-
քերու սեփական այգիները և Մայր Տաճարի

Հանձարին ու բարերարին մուտք, մաքա-
չախտ Մտալին իմաստորեն կարդաց իր
հոգեկորական հյուրի սրտին մեջ Հայ տա-
ռապած ցեղին բովանդակ ակնկալություն-
ները, արդարություն գտնելու իր տենչը:
Բայց պետք էր տեսնել, թե որպիսի կաբ-

վագլորոթյամբ և խորհուրդով կըցեր էր
աշխարհի ամենեն չեռու վալլութեն իսկ
քերել, Մայր Տաճարի սրտին վրա ընենել
հիեղեցական ու աշխարհական վաթունի
ավելի պատգամավորներ, անոնց ցուց
տալու համար անհնարին հրաշքը, և անոնց
ու Հայաստանի նույնքան և ավելի թվով
երեսփոխաններով վերցնելու տարիներեւ ի
վեր Մայր Աթոռը ծածկող սուզի քողը:

Կուզեկի ըսել նույնպես, որ ես այդ խոր-
հությը զոր գնահատեր էի տարիների
ի վեր, ի հեռաւատ, տեսա Հայաստանի
վարչական կազմին վրա: Իբր շոշափելի
արդյունք այդ իմաստության, ահա քառորդ
դարե ի վեր Հայաստանի սահմանները
խաղաղ ու ապահով: Ու ապահով սահմաննե
մը ներս միայն կարելի էր ավերված և
չաջորդական պատերազմներու հետևանքով
նվազած հայրենիք մը կենդանացնել, փու-
նիկի մը նման, իր մոլիբդերուն ու ոս-
կրակուլտերու վրա: Ու մենք տեսանք

վերածնված, երիտասարդ ու կենսունակ
հայրենիքը, ուր իմ տպավորությունն այն
եղավ, թե միակ ծնողներու զավակները
կը բնան եղած ըլլալ երկրին բոլոր հայու-
դիները, բոլորն ալ սնած միատեսակ զա-
ղափարաբանությամբ, չուրաքանչյուրը բո-
լորին համար ու քուր հայրենիքը իր զա-
փակներուն համար: Ու նման պայմաններու
և իմաստուն վարչականության մը մակա-
նին տակ շատ բնական էր, որ Հրաշալի
Հարություն մը պիտի փթթեր գիտության,
դպրության և սովեստի, մասնավորաբար
երեան մայրաբազարին և գլխավոր քաղաք-
ներու մեջ զանոնք վերածելավ հվյապական
ուստաններուց

Առաջին և մեր բոլորին տեսած ու
շոշափածները մեր երիտասարդ հայրե-
ներն այս իր պայտմբ խորհուրդի և
ինքանուն տղաթյան, կորումի և անհոգա-
ցուու շահերեւուն:

ԱՐՏԱՎԵՐԴԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑՎԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ, 20 Հոկտեմբերի (ՏԱՐՍ).— Եշմիածնում տեղի ունեցած հայ եկեղեցական ժողովի ամերիկյան երեք պատգամավոր, որոնք Սովետական Հայաստանում և Եվրոպայի ու Մերձավոր Արևելի հայ համայնքներում կատարած չորս ամսվա ուղեկորությունից հետո վերջերս վերադարձել են ԱՄՆ, Հոկտեմբերի 18-ին ելույթ են ունեցել «Ամերիկյան Հայկական Ազգային Խորհրդի» կողմից կազմակերպված պրես-կոնֆերանսում։ Նրանք բարձր դնահատական են տվել Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացման և լուսավորության բնագավառում ձևաբերության հաջողություններին։ Պատգամափորները ժողովը բնութագրել են որպես պատմական իրադարձություն հայ եկեղեցու կյանքում։ Նրանք կոչ են արել Սովետական Հայաստան վերադարձնել ամբողջ աշխարհում ցրված մեկ ու կես միլիոն հայերին և այդ նպատակով պահանջել, որ վերադարձնեն Սովետական Հայաստանին թյուրքիայի կազմի մեջ մտցված հայկական բոլղորդներ։

Պատգամավորներ Ծերպյանը, Սելյանը,

Համկալյանը իրենց հայտարարությանց մէջ
սշել են օհքիածնում նորերս տեղի անհցած
ժողովից ցույց է տալիս, որ Սովետական
Հայաստանում գոյուրյուն ունի կրոնի ա-
զատուրյուն։ Ժողովում բոլոր փինարանու-
րունները տեղի էին ունենում ազատ և
անկախ պարագաներում՝ առանց պետու-
րյան միջամտուրյան, որը ցարական ուժի-
մի ժամանակ գոյուրյուն ունեցած դրու-
րյան կատարյալ հակապատկերն է, եր
դարբ հաստատում էր այսպես կոչված
պատգամավորների ընտրուրյունը։ Հայկա-
կան պատմության մէջ առաջին անգամ
աշխարհի բոլոր հայ համայնքները մասնա-
կցել են ժողովին։

Պատգամավորները նկարագրել են Սովետական Հայաստանի ձեռք բերած նվազումները։ Նրանք նշել են, որ Սովետական Հայաստանի բնակչությունը ցարական ռեժիմի տապալումից հետո կրկնապատկվել է և որ Սովետական Հայաստանում «սուհղծվել» են այնպիսի մամշտարի արդյունաբերություն և կուտարա, որոնք գերազանցում են մարդկացին երեակայությունը։ Ընդգծելով Սովետական Հայաստանի տրն-

տեսական զարգացման հաջողությունները, պատգամավորները ասել են. «Սովետական Հայաստանը մեծ առաջադիմուրյան է հասել նաև լուսավորության, գիտության, աշխատի և գրականության բնագավառում։ Երկում որուել առաջ բնակչության միայն 15 տոկոսն էր գրագիտ, ներկայումս անգրագիտությունը ամրողովին վերացված է։ Պատգամավորները նշել են այն խոշոր դերը, որ Հայերը խաղացել են Սովետական Միության Հայրենական պատերազմում։

Պատգամավորները նշել են, որ Ազգերի լիգան ընդունում էր Հայերի իրավունքները թյուրբիայի կազմի մեջ մտնող Հայկական հաճանգների նկատմամբ։ «Բոլոր Հայերը և առհասարակ ամբողջ քրիստոնեական աշխարհը, — ամփած է Հայտարարության մեջ, Հավատում են, որ ամերիկացիները Հավատարիմ կմնան Վիլսոնի տրադիցիաներին և անկեղծողն կաջակցեն Հայ ժողովրդի արդարացի պահանջներին նրան պատմական հողերի վերաբերմամբ»։

Պատասխանելով Հարցերին՝ պատգա-

մավոր Զանկալյանը, որը Հանդիսանում է ամերիկյան բանակի պաշտոնաթող կապետան և գործարար շրջանների ականավոր ներկայացուցիչ, գովարանել է ժողովը որպես ամենագեղմուգրատական ժողով և բարձր գնահատական է ավել Սովետական կառավարության հյուրընկալությանը։ Պատգամավոր Թերզյանը, որը Հանդիսանում է «Ամերիկայի Հայկական Ազգային Խորհրդի» նախագահ, Հայտարարել է, որ խորհրդությունը մտադիր է ամբողջ երկրում կամպանիա անցկացնել թյուրբիայի կազմի մեջ մտնող Հայկական բոլոր տերիտորիաները Սովետական Հայաստանին վերադարձնելու համար։ Պատգամավորների խորհրդի փոխնախագահ Սելյանը թյուրբական տիրապետության տակ գտնվող Հայերի աղետալից դրությունը Հակագրել է Սովետական Հայաստանի բնակչության միջա-կին։

(«Սովետ. Հայաստան», 23 Հոկտ., 1945 թ., № 226)

~~~~~

## ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՖԱՅԱՆ ՄՐԱԶԱՆԻ ՀԵՏ

Առիթն ունեցանք, տեսակցիու Կալի- ֆրինիայի Առաջնորդ Մամբրե և պիտկոսոս Դալֆայանի հետ, որը վերադառնալով Կաբողիկոսական ընտրությունից արդև ստացել էր նորընտիր Հայրապետից արքակիսուառության տիտղոս։ Երան ընկերակցում էին Կալիֆրինիայի Տ. Կարապետ քահանա Դալֆայանը և պ. Առաքել Յազգայան։ Գալի- ֆայան սրբազնը Միացյալ նահանգներից մեկնել էր Ս. Էջմիածին Նյու-Յորքի պատ- գամավորների հետ միասին՝ Տիրան ծայ- րադույն վարդապետ Մանուկյան, որը նույնպես համբկուառության առաջնօն ստացավ, Հ. Բ. Բ. Միության Նյու- Յորքի կենտրոնական վարչության փոխ- առտենապետ պ. Հայկ Քավուքչյան և կա- պիտան Զիմ Զանկալյան, Նյու-Յորքի Հյուր- պատգամավորներ, ազգային խորհրդի ան- դամներ՝ պ. Պետրոս Թերզյան՝ առտենապետ և «Լրաբեր» թիրթի խմբագրապետ, ոլ. Պատ- րիկ Սելյան՝ փոխ առտենապետ ազգային խորհրդի։

Մենք մի շարք Հարցումներ ուղղեցինք

սրբազն հորը, որոնց պատասխանեց խիստ սիրալիքից։

Հ. — Ի՞նչպես ընդունեցին ձեզ Խորհրդա- ցին Հայաստանում։

Պ. — Մեր նավը Օդեսա պիտի երթար, ույց Քոնստանցա ելավ, ուր Սովետ Միու- թյան ներկայացուցիչը մեզ Համար հոգաց մասնավոր ճեպընթաց թուքրէց միկնելու համար։ Հիանալի բնդունելություն ցույց տրվեց մեզ Բուքրէշում Սովետական Միու- թյան ներկայացուցիչ Դոնգուլովի կողմից, որն ամեն կերպով հեշտացրեց մեր Համ- բրությունը։ Նա Հատուկ ստվառնակով մեզ առաքեց Երևան, Երևանում ամեն- կարդարություն կղել էր արդեն և մեզ ընդու- նեցին գրկարաց։

Հ. — Քանի պատգամավորներ կային։

Պ. — 112 պատգամավորներ ներկա էին արտասահմանյան բոլոր թեմերի հողմից— րացի իրաք։

Հ. — Ի՞նչպես եղալ ընտրությունը և օձման հանդեսը։

Պ. — Ընտրությունը տեղի ունեցավ Հու- նիս 22-ին, ուրբաթ, կեսօրից հետու իսկ օծումը 24 Հունիսին մեծ Հանդիսավորու- թյամբ։ Միաձայնորդն ընտրվեց Հայոց

Հայրապետ Գևորգ Արքեպիսկոպոս Գևորեք-  
շյան:

Հ.— Ի՞նչ տրամադրության մեջ է Մայր  
Երկրի ժաղովուրդը:

Պ.— Ըստհանուր առմամբ ժողովուրդը  
շատ խանդավառված է, տեսնելով, որ եկե-  
զեցին գրավում է իր բարձր զիրքը: Շատ  
գոհ է որ Գևորգ Ե-րդի պես դիվանագետ,  
կարող մի անձ Հայրապետական աթոռի  
վրա է: Եռուսպ կրացվի Գևորգյան, Ճեմա-  
րտնը առաջիկա սեպտեմբեր ամսին: Ար-  
դեն ունի 40 սաներ, որդեգրված արտա-  
սահմանյան և Մայր Երկրի թեմերի համար:  
Հ.— Ի՞նչ տպավորություններ առնեցաք  
Հայաստանում:

Պ.— Իմ տպավորությունը հիացմունքից  
դատ ուրիշ բան չէ, քանի որ միայն 25  
տարվա մեջ գուրս գալով 600 տարիների  
ավերակներից, պետք է խոստովանենք, եր-  
բեք շենք ունեցել նման մի շենք զարգա-  
ցում: Մենք այսուղ տեսնում ենք օպերան,  
ակադեմիան, արվեստագետներ և այլն:  
Պետք է շեշտել, որ երիտասարդ սերնդի  
մեջ բազմաթիվ են երկսեռ գիտնականներ  
և հատկապես իգական սեռը բիմիացի:  
Բժշկության և այլ ճյուղերի մեջ: Այս բո-  
լորը ցայտուն ապացույց են տալիս Հա-  
յաստանի հիասքանչ վերելիքի:

Հ.— Ի՞նչ է ձեր կարծիքը Ամերիկայի  
Ազգային Խորհրդի դեկլարացիայի մասին:

Պ.— Մենք բոլորս կողմնակից և համա-  
ձայն ենք այդ դեկլարացիային և որը շատ  
լավ ընդունելություն գտավ Մայր Հայրե-  
նիքի աշխատավորության կողմից:

Հ.— Ի՞նչ պիտի լինի գաղութահայության  
դիրքը այս պարագային:

Պ.— Ամերիկահայությունը՝ միշտ ի հայտ  
է եկել բարոյական և նյութական աշակ-  
ցություններով: Ամենապիսավորը նոր սե-  
սունդիվ մեջ Հայրենասիրությունը վառ պա-  
հելու աշխատանքն է, որ հետապնդվում է ու  
ուիտի հետապնդի և մենք հավա-  
տում ենք, որ առանց խտրականու-  
թյան, առանց զանազանության ամեն  
հայ պիտի բոլորի Սովոր Կառավարության  
շուրջ և իր բարոյական և նյութական ա-  
շակցությունը անվերապահորեն որածադրեն,  
որպեսզի մեր ապահա ցեղի համար ապա-  
հովենք մեծ ընդարձակ մի հայրենիք: Հայ

ազգը այսօր պետք ունի իր բոլոր զավակ-  
ների միության և համագործակցության:

Հ.— Ի՞նչքան է հայության թիվը Կալի-  
ֆորնիայում և ի՞նչ է նրանց վիճակը:

Պ.— Ամբողջ Կալիֆորնիայում 40—50.000  
հայեր կան: Ֆրեզնոյում նրանց թիվը հաս-  
նում է 7—10.000-ի, բոլորն էլ լավ պայ-  
մանների մեջ են: Նրանք առևտրականներ  
են, ագրարակապաններ, մեծ թվով տարված  
և պատերազմի դիմադրական տիխատանք-  
ներով, ունեն պահածոների, զինու, չոր  
պառզների գործարաններ: 1931—1933-ի  
շրջանում Ֆրեզնոյի շրջակայրի հայությու-  
նը գրեթե ամեն ինչ կորցրեց: սակայն  
վերսկսելով իր աշխատանքը հասույց շատ  
հայուն ու բարձր զիրքի. այսօր բոլորն էլ  
կրեթե կալվածատերեր են: Ֆրեզնոյում ու-  
սենք 2 շաբաթաթերթեր, «Նոր օր» և «Աս-  
ուղարելու»:

Հ.— Սրբագան հայր, Կը բ եթ մեկնելու:

Պ.— Անշուշտ երկար շի պիտի մնայի,  
սակայն ինձ հյուրասիրող պատվական բա-  
րեսիրտ Ռուման Խսաեփը, որը ձեր արժա-  
նավոր պատգամավորն էր կաթողիկոսա-  
կան ընտրության և որը նորընտիր հայրա-  
պետի կնքահայրն եղավ ու արժանացավ  
Կրիտոր Լուսավորչի առաջին տասիննի  
շքանշանին, մի մեծ պատիվ՝ մանավանդ  
ու նրանից առաջ այդ շքանշանը հաստա-  
տելու օրից մինչ այժմ միայն երկու հոգի  
ին ստացել և ինքը երրորդ անձն էր, իր  
կես միլիոն թուման արժող փառապանծ  
հկեղեցին լրացրել է և կիրակի 15 հուլիսին  
պիտի օծի կիլիկիո Կաթողիկոսի, երու-  
սաղէմի Պատրիարքի և այլ առաջնորդներու  
ներկայությամբ, սիրով և ուրախությամբ  
մնացել եմ, որ մասնակից լինեմ այդ օծ-  
ման փառահեղ ծիսակատարության: Եվ  
մի միջակա զգացված եմ ու շնորհակալ պ-  
ռուման Խսաեփի այսքան սրտաթաղ հյուրա-  
սիրությունից: Օծումից անմիջապես հայու-  
թիւնի մեկնեմ:

Հ. Գ.

Ծնորհակալություն հայունելով նորին  
Սրբագնության իր տված տեղեկություն-  
ների համար մեկնեցինք խիստ լույս տպա-  
փորություններով:

(«Վերածնունդ» հուլիս, 153—1284):

## ՄԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՆԻ ՊԱՏԴԱՄԱՎՈՐ ԲԱՐԵՐԱՐ ՌՈՄԱՆ ԽՈՍԵՎԻ ՀԵՏ

Վերջապես առիթ ունեցանք մի օր մի ժամ խլելու բազմազբազ պ. Խոման Խանկաղյա և նա խիստ ոգևորված ու սիրալիրուրեն պատասխանեց մեր տված հարցումներին:

— Ի՞նչպես կարողացաք թողնել ձեր բոլոր գործերն ու մեկնել Ս. էջմիածին:

«Եատ դժվարություններով, մի կերպ կարգադրեցի, որպեսզի կատաշեի ինձ վրա որված սրբազն պարտագանությունը: Դործերիս պատճառով էր, որ ուշացաւ Մեկնեցի Հունիս 18-ին, գիշերը՝ ժամը 12-ին իմ սեփական լինքուն մեքենայով, որը տանում էի նվիրելու նոր ընտրվելիք աթողիկոսին:

«Կհս օրից հետո ժամը 1-ին հասանք թափրիզ: Մելիք-Թանգյան սրբազնը և թափրիզի թեմականն ինձ հյուրասիրեցին մինչև ժամի 7: Գիշերը, ժամի 11-ին Սովետական Զուգա էի, ուր ներկայացա կամհնտանտին: Նա քնած էր, զարթնեց և ընդունեց ինձ մեծ սիրալիրությամբ: Ասաց, որ կարգադրված էր ինձ թողնել անցնել իմ մեքենայով, բայց քանի որ սահմանը փակվում էր, ժամի 9-ին, ուստի պարտավոր էի մնալ մինչև առավոտ: Մինչդեռ, ինչպես ինձ ասված էր, ես ակնկալում էի, որ հեռախոսած լինեին այս առթիվ բայց նա ուեղեկություն չուներ: Երբ ընթրում էինք, շտապ մի Վիլիս մեքենա եկավ, որի մեջ գտնվում էր պատգամարեր մի պաշտոնյա: Հեռախոսը փշացած լինելու հետևանոր ուղարկել էին նրան թափրիզից հայտնելու, որ սահմանը բացեն և թողնեն ինձ մեկնել:

«Անցա սահմանը, ինձ ընդունեց ինտուրիստի կառավարիչը և ճանապարհեց նրեւան:

«Երեսանում մեծ պատվով ընդունեց ինձ դարձյալ ինտուրիստի կառավարիչը և տեսավորեց եվրոպական տիպի մի հիմնալի հյուրանոցում տրամադրելով ինձ մի մեծ սրահ, մի սենյակ և իր բաղնիքը:

«Ես 30 տարի առաջ եղել էի երեանում: Դա մի բաղար էր, որն ավելի շուտ մեծ կուղի էր նմանում: Խակ այժմ, ինչպես տեսա և տեղեկացա, աննկարազբեկի բարեփոխության է ենթարկվել, և, չափազանդրած չեմ իինի, եթե ասեմ, որ դարձել է մի փորիկ Փարիզ:

«20 տարիների ընթացքում ունես մեծ ժողովրդի օգնությամբ Սովետական Հայաստանում նախ բան Հայրենական պա-

տերազմը մեծ թափ ու թուշը է առել հանրապետության զյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը, առողջապահությունը, գիտությունն ու արվեստը:

«Ծնորչիվ Սովետական Հայաստանի աշխատավորության անձնազու ճիգրի իրականացել է երկրի մեքենայացումը, զործա-



Քարեւար Խոման Խանեվը և իրանա-Հնդկական թագավոր Վահան Եպիսկոպոս Կոստանդնյանը Խանի պատգամավորների նետ

րանների և էլեկտրոկայանների շինարարությունը, կարրեսի, ձեթի, օճառի, սինտեսիկ կառւզովի, կոնսերվի, պղնձաձովման և մեքենաշինության և այլ գործարանները:

«Զարգացել է տեկստիլ արդյունաբերությունը, մանվածքային, շթի և ալլ: Կառուցվել են կոշիկի, գուլպայի, սորիկոտաժի և շատ ուրիշ գործարաններ:

«Անտառարդյունաբերությունը, ձկնարկային արդյունաբերությունը, հիդրոկայանների կառուցումը, երկրի բնական հարստությունների օգտագործումը, շինանյութերի արտադրությունը, կոնյակի և գինիների, ծխա-

խոտի գործարանները և բազմաթիվ այլ ձևնարկությունները ոչ միայն ապահովել են Հանրապետության ներքին պահանջները, այլև օգտակարության նպաստել են Սովետական Միության ուրիշ վայրերին արտահանելով տուփ, ցեմենտ, կարբիտ, կառւուկ, ուղինձ, գինի, կոնյակ, բամբակի կատրեղին, տրիկոտաժ, ծխախոտ և այլն, փոխարենը ներմուծելով մեքենաներ, կտորներ, ներկդրություն, երկաթ, պողպատ և այլն:

«Պատերազմի իսկ օրերին ստեղծվել են ՅԵ-ի շափ նոր գործարաններ՝ ժամացույցի և այլն և արտադրվել են մեծ թվով նոր իրեր:

«Վերաշինվել են Հայկական գյուղերը Սովետական վարչաձևի տակ: Հայ գյուղացին ազատվել է իր նախկին թշվառությունից և նրանիկ կյանքի դռները բացվել են նրա առաջ շնորհիվ սովետական իրավակարգի: Հողը օգտագործվել է աշխատավորության կողմից: Անհատական ցան ու ցրիվ տնտեսությունների փոխարեն գյուղացիները միացել են կոլեկտիվ անտեսություններում: Կարգագործվել է ոռոգման խնդիրը: Կառուցվել են մի շաբթ ջրանցքներ և մշակվել նոր հողամասեր, մեծ շափով աճել բարդացել է բերքատվությունը:

«Առաջացել է նաև անասնապահությունը և նրա հարակից կարիքները:

«Դյուլում նահանգամասական կյանքը փոխվելով կոլտնտեսականի՝ կուլտուրան, լուսավորությունն ու գիտությունը ներկ են մտել այնտեղ մեծ շափով:

«Մայր Հայրենիքի մշակույթը՝ արվեստը, կրթությունը և գիտությունը նախապատերագմական 20 տարիների շրջանում մեծ և կարևոր թոփք են ունեցել: Ամենուր հիմնվել են դպրոցներ, մտցվել է լոթուաժյա պարտադիր ուսում, այլևս շկա ոչ մի անդրագիտ, հաստատվել են ֆակուլտետներ, զանազան ինստիտուտներ: Բարձրագույն դպրոցներից ջրանավարտ են եղի մեծաթիվ մասնագետներ: Բազմապատկվել ու կրկին կրկնապատկվել են գրադարանները:

«Փթթել ու ծաղկել են գիտությունն ու արվեստը, Հայ Հնադարյան մշակույթը: Ստեղծվել է Հայկական Ակադեմիան, ուսումնամիտրվել ու վերահրատարակվել են Հայ անվանի Հեղինակների ստեղծագործությունները: Հիմնալիորեն կազմակերպվել է Մատենադարանը, որը շտեմարանն է Հնադարյան ձեռագրերի:

«Գրականությունը, թատրոնը, օպերան, ժողովրդական երգերը, պարը, երաժշտու-

թյունը աննկարագրելի առաջադիմություն են ունեցել մայր Հայրենիքում և կազմում են մեր ժողովրդի փառքն ու պարձանքը:

«Սովետական Հայաստանում մեծ ուղարկության առարկա է դարձել ժողովուրդի առողջապահությունը. այս ուղղությամբ ստեղծվել են մի շաբթ կարևոր հիմնարկներ, հիմնադրություններ: Ուժեղ և ազգու պայքար է մզկել բոլոր համաձարակների դեմ: Առողջապահական բոլոր պայմանները տարածվել են գյուղերում, ուր հաստատվել են մանկամասություններ: Ընդհանուր առմամբ Սովետ Հայաստանում մեծապես զարգացել է բժշկական գիտությունը:

«Կուղեքի մասնավորապես շեշտակ իբրև մի օրինակ երեանի Կենդանաբանական պարտեզի մասին: Ես որ եղել եմ հիմնապայի գրեթե բոլոր մայրաքաղաքներում և զիտեմ, որ ամենագեղեցիկ կենդանաբանական պարտեզը գտնվում է Հռոմում իր սբանին տեսքով և ձևակերպմամբ, պիտի անկեղծորին խոստովանվեմ, որ հենց այդ իսկ տեսակետից երեանի մեր Կենդանաբանական պարտեզը ոչնչով ետ չի մնում իր բնական տեսքով և գեղեցկությամբ: Եվ զարգանալին այն է, որ այդ պարտեզը ստեղծվել է Հայրենական պատերազմի օրերում, միայն երեք տարվա ընթացքում և ունի արդեն բավական կենդանիներ:

«Այսօր Սովետական Հայաստանը միանգամայն հակոտնեական է վաղեմի խղճուեավերագծ, անմշակ, քար ու քանդ Հայաստանի: Այսօր լույսն ու գիտությունը, արմեսն ու ճատարաբիւսուր, երերագործությունն ու շինարարությունը իրենց թերեն են տարածել մեր լքնադ հայրենիքի վրա:

«Այսօր ամեն մի հայ, կին թե այր, մեծ թե փոքր, բոլորն էլ գլուխները բարձր, գիտակից ու հպարտ են, որ իրենց փոքրին Հայաստանը աջակցությունն ու հովանին է վայելում մեծ Սովետական Միության, որի հանճարեղ Ղեկավարն ու Առաջնորդն է Ժեներալիստ Ստալինը: Ես շատերի հետ իրուցի և տեսա ու լսեցի, որ նրանց բոլորի սրտերում ու հոգու մեջ լավագույն տեղն է գրավել Մեծ ՍՏԱԼԻՆԾ! Իր հայրական խնամատար սիրում:

«Հայրենական պատերազմի ընթացքին հայ ժողովուրդը Սովետական Հայաստանում ոտքի կանգնեց. մեծ թե փոքր, երիտասարդ թե ծեր, այր թե կին, սազմագուում թե թիկունքում, և Հերոսաբար կովեց հաշիստ զավթիչ գերմանացիների ու նրանց արբանյակների դեմ, որոնք հասել էին

մինչև Կովկասյան լեռնաշղթան ու սպառ-  
սում էին անգամ Սովորական Հայաստա-  
նին: Սակայն հայ ժողովուրդը իր զոհաբե-  
րություններով, թիկունքի և ճակատի իր  
ճարունակով պատվավոր տեղ գրավեց Սո-

վետական Միության մյուս ժողովուրդների  
կողքին, ֆաշիզմի և հիտլերիզմի չափախ-  
ման փառապանծ հաղթանակի մեջ:

(«Ինքանունով», Յովիս, թիվ 160—1291)

## ԲՈՅ ՆՈՐԵԿ

Եյս առավոտ Հայաստան էի, իսկ կեսօ-  
րին արդեն Թեհրան եմ, և յի մեկնած  
Թեհրաննեն կուգեմ Հայաստանի մեծ ժո-  
ղովրդին հայտնել ձեր միջոցով իմ շնոր-  
հավորություններս և շնորհակալություններս  
այն մեծ արժանիքներուն և արդյունքին,  
որ տեսա և բոլոր այն մեծ հյուրասիրու-  
թյան համար, որ ցուցուցին ինձ, երբ  
ընտրությանց առթիվ երևան դանդիցաւ:

Եատ շիտակ է այն խոսքը, որ մեր մեծ  
բանաստեղծ Ավետիք հսահակյանը ըստ  
«Ամպ» մնայում է, վատը գնայում:

Բնական է ժամանակ շունեցած շատ  
շատ տեսնելու, քանի որ ընտրությանց

Տեսա երիտասարդ նկարիչներ, քանդա-  
կագործներ իրենց գեղեցիկ արտահայտու-  
թյուններով, կողքին արդեն վազուց աշ-  
խարհաշոշակ վարպետներու:

Տեսա երիտասարդ բժիշկներ իրենց  
ալեհեր մենայուններուն հետ, տեսա թանգա-  
րանը իր պատմական հայ հնություններով,  
տեսա մանուկներ և պատանիներ, որոնք  
իրենց ժամաներով ոչ միայն հմայեցին  
մեզ, այլ նաև ապացուցին թե մեկ մեկ  
ապագա հանձարներ են, տեսա և լսեցի  
հայկական օպերան, որ հպարտորեն կրնա  
իր տեղը գրավել լավագույնիս հետ, տեսա  
հայ թատրոնը իր տիտաններով, տեսա



Լոնդոնի պատգամավորներ

խնդիրը կար, բայց տեսա կրցածիս շափ, թե լավը և թե վատը, տեսա դպրոցներ, տեսա համասլարանը և անոնց արդյունքը՝ գործնական, տեսա երիտասարդ տղաք, որոնք արդեն խոշոր և լուրջ գործեր ըս-  
տանձնած են, տեսա ինքը երիտասարդ բէթորը համալսարանին, որ հակառակ իր երեք տասնյակ տարիներուն, արդեն իսկ Տիտանի մեծ գործը կը կատարե 60-ամյա-  
յի մը գիտակցությամբ:

Հայկական պարերգ հայ աղջիկներով՝ գե-  
ղանի և հայ տարազներով, տեսա հայ սի-  
նեման, որ շատ հաջող կերպով իլ միճակի է  
մրցելու լավագույնիս հետ, տեսա հայ  
մարզիկները գեղեցիկ, շնորհալի և առողջ  
սարմիններով, տեսա Արարատի գինիի և  
կոնյակի ֆաքրիկան, տեսա վերշապես  
Հայաստանի հողը, որմե պստիկ պարկ մը  
էնտս Լոնդոն կտանիմ, բոլորին պտղուց մո  
տալու համար և խմեցի երեվանի կյանք:

պարզող ջուրը, բաներ, որոնք տարիներ առաջ, գոյն ինձ համար երազ էին...

Տեսա նաև փառավոր և խոշոր շենքեր՝ ինչպես նաև հին խրճիթներ և տնակներ, որոնք վերի բոլոր գեղեցկությանց դեմ արատներ են, բայց ապահով եմ, որ եթե պատերազմը շըլլար, այդ բոլորն աստիճանաբար արդեն փոփոխված կըլլային:

Տեսա հարյուրավոր ասֆալտե փողոցներ, տեսա գիշերը լուսավորված երեվանը—կույսի քաղաք, շնորհիվ հայուավարության հայթայթած շատ աժան էլեկտրիկ ուժին, որ ինքնեն արդեն աշխարհահռչակ է:

Շատ բաներ կան ըսելիք, բայց թերևն ապագային ի վիճակի ըլլամ գրքույի ձևով մը հրապարակ գալու, բայց կուզիմ սա ըսել, որ Հայաստանի մեջ գտնվող գիտական, գեղարվեստական մուզիկի և մարմամարդական—մարզերու ամբողջությունը ի վիճակի է բաղդատվելու նվրոպալի

լավագույն և առաջադեմ ազգերու հետ և նույնիսկ առանց շափազանցության ըսել թե մրցումի պարագային, առաջնությունը իյնա շատ մը բաժիներու մեջ հային:

Վերջացնելի առաջ կուզիմ ըսել, որ ամեն հայ այսօր կրնա ինքինք հապարո զգալ ասանկ փառավոր Հայաստանի մը դոյության համար և ի սրտե շնորհավորել ներկա Սովետ հայ կառավարությունը, որ անոր գոյությունը կարելիացուց, շնորհիլ իր մեծ աշխատանքին, շնորհիվ մեծ Սովետ Միության, մեծ ուս աղպին և ի մասնավորի Մեծ ՍՏԱԼԻՆԸ:

Կեցցե Հայ ազգը, կեցցե Սովետ Հայաստանը, կեցցե Սովետ Միությունը, կեց Մեծ ՍՏԱԼԻՆԸ:

Ս. Ն. ՔՅՈՒՐՔՃՅԱՆ

Լոնդոնի հայերեն մին:

(«Վերածնունդ» հովիս, թիվ 152—1283)

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐՈՒ ԵՎ ԱՅՑԵԼՈՒՆԵՐՈՒ ԶԵԿՈՒՅՑԸ

### ՄԻԹԻՆԿԻ ԲԱՑՈՒՄԸ

Կիրակի, Հունիս 8-ին.

Մայրաքաղաքիս սինէմա «Սքալա» հըմկա սրահը հանդիսավոր տեսարան մը կպարզե: Շուրջ 2000 հայուհիներ ու հայեր փութով եկած էին ունկնդրելու ոռմանահայ կաթող. պատվիրակներու և իրենց ընկեցակցող այցելուներու գեկուցքը: Հայաստանյան ճակատի տեղական Կոմիտեն սրահն ու բեմը զարդարած է ոռման ու սրբետական դրոշակներով, Ռոմանիո, Սովետական Միության և Սովետական Հայաստանի գինանշաններով: Բեմին վրա գեղարվեստական մեծադիր նկարները Միհա թագավորի, Լենինի, Սպարապետ Ստալինի, Սովետ. Հայաստանի նախագահ Մացակ Պապյանի և Սովետ. Հայաստանի կոմինիստ կուսակցության քարտուղար Հարությունյանի:

Փամը 10-ին գոռ ծափահարություններ կողջունեն Սովետ. դեսպանատան ավագ—քարտուղար ընկ. Տոնկուլի մուտքը:

Բեմ կրաքարանն ու նախագահության սեղանին շուրջ տեղ կգրավեն ընկ. Վ. Դանիելյան, Վագգեն վրոց և ընկերներ՝ տոքտ. Տիբացյան, Ա. Աբքերյան, Մուշեղ Մկրտչյան, Տ. Տեր-Գրիգորյան, Հ. Ալվաճյան, Կ. Սագրայան, Ա. Նազարյան, Մ. Խաչերյան, Գ. Եղիգարյան և Հ. Պապյան—վերջին երկուքը իր թարգմաններ:

Ծնկ. Տոնկուլովը բեմ կը հրավիրվի իրը պատվո նախագահ միթինի:

Բեմ կհրավիրվի նաև Կարմիր Բանակի գնդապետ Մկրտչյանց, ողջունելով ծափերով:

Հ. Ճ. Տեղ. Կոմիտեի նախագահ ընկ. Շ. Կոյուրճյան բարի գալուստ մաղթելով պատվիրակներուն խոսքը կու տա Հ. Ճ. Շ. Կենտ. Կոմիտեի նախագահ ընկ. Վ. Դանիելյանի, որ կարտասանե բացման հետեւալ ճառը.—

### ԾՆԿ. Վ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՃԱՌԸ

Սիրելի քույրեր և եղբայրներ,

Կրերեմ ձեզի մեր սիրելի Հայաստանի կուսակրիչներու և ժողովրդի սիրալիր, եղբայրական համբուլցիները, ինչպես դուք, նմանապես անոնք կարուր կը քաշին գաղութահայ իրենց քույրերուն և եղբայրներուն ու գրկարաց կոպասն ներգաղթյունը պատի երթանք ապրելու հոն, ուր Սովետական Միության ամեն մեկ անհատը կապրի իր երկրի հողին վրա ազատ ու երջանիկ:

Երբ հունիս 16-ի առավոտյան ժամը 5-ին բնակարաններ մեկնեցա դեպի Պըմեաստ օդակայանը, 38 աստիճան տաքու-

թյուն ունեի. բարեկամներու արգելք ըլլալ կուզեին, որ շմեկնիմ հիվանդ վիճակի մեջ Ոչ ոք մտիկ շըրի ու մեկնեցա:

Մեր սիրելի Տոնկուլովը մեղի մեծ պատիվ ընելով հկած էր օդակայան մեզի բարի ճանապարհ մաղթելու, Գիտնալով, որ գ օրի ի վեր հիվանդ պառկած էի, առողջությունս հարցուց:

— Հիվանդ կժեկնիմ, բայց առողջ պիտի վերադառնամ, — պատասխանեցի:

Եած էր բարոյական մեծ պատասխանատվություն, պետք էր որ երթայի, որպեսզի Հշպրիտ տեղեկություններ բերենք ձեզի: Արնաք գտահաջ ըլլալ, որ ևս ու ընկերներս ձեզի ճշգրիտ լուրեր պիտի տանք: Էնկ. Դանիելյան ամփոփ տեղեկություններ կու տա մեր հայրենիքի վերելքի և պատերազմի ընթացքին հայ ժողովողի հերոսական կեցվածքի մասին, թվելով հայ անվանի զորականներու անունները: Աւ-



Խումբինիայի քեմի առաջնորդական փոխանորդ Վազգեն վարդապետը  
աշխարհիկ պատգամավորների հետ

Խնդաց և իրավունք տվալու:  
Գիտեի, որ պիտի երթայի մեր սիրելի Ս. Հայաստանի հողի վրա ամրս մը ապրելու, անոր օդը շնչելու և խմիլու երեխանի անուշ ջուրը, մեր եղբայրներուն մոտ:

Այդպես ալ եղավ, հիվանդ մեկնեցա, առողջ վերադարձա:

Իմ և Հ. Ճ.-ի ընկերներուն վրա դըր-

սումնական բարձր հիմնարկներու և թատրոններու նկարագրությունը ընել է վերջ, երսէ: —

«Երեվանը ունի շուրջ 300 շքեղ շենքեր, որոնց մեջ աշքառու է կառավարական սլալատը: Այդ շենքի մեջ, արտասահմանյան պատվիրակներուն ի պատիվ, Արտաքին Գործերու նախարարը ընկ. Կարապետյան սարքեց ճաշկերույթ մը, ուր

ներկա էին մեր կառավարության բոլոր  
անդամները»:

Եկարագրելե վերջ գոնյաքի և պինե-  
կործության «Արարատ» թրըսթի ընտիր  
արտադրությունները կեզդափակե իր Հա-  
ռոր հետևյալ խոսքերով.

«Ուրեմն իրավունք տվեք ինձի բակլու,  
որ մեր Հայաստանը շատ տեսակետներով  
իրնա պատվով կանգնիլ նույնինկ մեծ  
տերություններու կողքին»:

Արու կպարտինք այս բոլորը, ո՞վ ա-  
զատեց հայ ժողովուրդը թշնամիներու  
հանկեն. ո՞վ կովեցավ մեզի Համար և  
անկախություն տվավ մեր Հայրենիքին:  
Ո՞վ կանգնած է մեր կողքին պաշտպան իր  
երկաթե բազուկով!

Անկասկած ոռւս մեծ ժողովուրդը: Այս  
բոլոր Հաջողությունները արդյունքն է Հե-  
նինի-Ստալինի ազգային իմաստուն քա-  
ղաքականության:

Ապրի, շատ ապրի Պատրաստ  
ԱՏԱԼԻՆԸ, մեր մեծ Հայրը:

Ապրին Ռուս մեծ ժողովուրդը և Սո-  
վետական Միության եղբայրական ժողո-  
վուրդները:

Ապրի՝ մեր Հայաստանը և իր նախա-  
զա՞ր՝ ընկ. Պապյանը:

Ապրի՝ Ռոմանիո Միջա թագավորը և  
ոսման ժողովուրդը:

Որոտալից ծափեր կը նդիմանեն վերջին  
խոսքերը:

\*\*\*

### Ս.Ռ.ԶՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՎԱՐՁԱՅ ՎԱՐԴԱՓԵՏԻ ՃԱԹԸ

Սիրելի՝ Հայրենակիցներ,  
Ճշմարիտ է, ոչ երազ է և ոչ ալ պա-  
տրանք, Հայաստանն կուգանք: Տեսանք  
մեր մայր Հայրենիքը, տեսանք Մասիսն ու  
Սրագածը, տեսանք մեր երկնքի կապույտը,  
խմեցնք մեր երկրի ջուրը և ոսկեվազ  
դինին, տեսանք Երեմանը և վարդագույն  
քարե շինված կառավարության շենքը, ուր  
ժողովրդի վարդագույն ապագան կհյուսի՛,  
տեսանք մանավանդ մեր Հարազատ ժողո-  
վուրդը, մեր ազնիվ, աշխատող, ստեղծա-  
դործող մեր հերոս ժողովուրդը, որ մեղ  
գրկարաց. և սրտաբաց ընդունեց անհուն  
կարոտով և սիրով տոգորված:

Բայց իմ զգացումներուն բնթացքը  
պետք է կեցնեմ ու ձեզի խոսիմ ամփոփ  
կերպով Ս. էջմիածնի և մեր նորընտիր  
Հայրապետի մասին:

Ս. էջմիածնը և մեր եկեղեցի Մայր

Աթոռը այսօր կը վերածնին և վերաշն-  
վող Հայրենիքի մը կողքին կումենանք ահա-  
նակ վերաշխիցու հեկեղեցի մը:

Գալութահայ Հավատացյալ ժողովուր-  
դը կրնա ուրախութենան ցնծալ, որովհե-  
տե մեր եկեղեցին, Ս. էջմիածնը արօք  
հեղինակություններ են Հարգված և սիրված  
Հաստատություններ ոչ միայն հայ ժողո-  
վուրդի կողմեն, այլ նաև հայ պետության  
և Սովետ վերին իշխանությանց կողմեն:

Այս բոլորը սակայն կը պարտինք մեր  
նորընտիր Հայրապետին Դեկոր Զ. Կաթո-  
ղիկոսին, անոր վայելած հեղինակության,  
անոր տարած աշխատանքին, անոր Հավա-  
տարմության Հանդեպ մեծ և ազնիվ ուսու-  
ժողովրդին, անոր նվիրումին հանգեց սո-  
վիտական իշխանության:

Մեր Հայրապետը այն իմաստուն և  
հնատես եկեղեցականը եղավ, որ տեսալ  
ին հայ ժողովով փրկությունը ոռւս ժո-  
ղովուրդի և Սովետական իշխանության  
Հաղթանակին մեջն է:

Եկ ահա այս մեծ Հայրենառերը այսօր  
իր կեցվածքին ու աշխատանքին պտուղը  
կրացի և որով կշահին նաև մեր եկեղեցին  
և մեր ժողովուրդը:

Այսօր Գևորգ Զ Կաթողիկոսը շահած  
է սիրով այն մեծ զեկավարին, որ Ստա-  
լին է:

Ապրի 19-ին Սպարապետ ԱՏԱԼԻՆԸ  
ընդունեց մեր Հայրապետը, որ իրեն ներ-  
կայացուց հուշագիր մը:

Կեներալիսիմ ԱՏԱԼԻՆԸ յսելով նոտ  
իննդրանքները ըսած է «Այս մեր եկե-  
ղեցի Հիմնաբարը, որուն վրա պիտի կա-  
ռուցանենք մեր նոր կյանքը, իսկ Մեծ  
Ստալինի անունը Հավիտյան պիտի մնա  
Հաղարամյա Ս. էջմիածնի մեջ»:

Վեհափառ ցուցնելով մեզի պատմա-  
կան այս թուղթը ըսավ.— «Ա՞ս մեր եկե-  
ղեցի Հիմնաբարը, որուն վրա պիտի կա-  
ռուցանենք մեր նոր կյանքը, իսկ Մեծ  
Ստալինի անունը Հավիտյան պիտի մնա  
Հաղարամյա Ս. էջմիածնի մեջ»:

\*\*\*

### ԲՆԿ. Ա. ՍԵՅԵԲՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Հայրենակիցներ,

Վատահ եմ, որ սրտի անջուն բերկրան-  
քով մտիկ պիտի ընկեր իմ արտասանա-  
խոսքերը, որոնք ցույց պիտի տան, թի  
ի՞նչ զգացի մեր մայր Հայրենիքին մեջ:

Նախան տեսածներս պատմել ձեր բո-  
չորդի ներկայությամբ Հրապարակավ խորին  
շնորհակալությունս կը հայտնիմ ընկեր

Տոնկուլովին, որուն ջանքերուն շնորհիվ  
և ալ իրավունք ստացա մեկնելու մեր  
բոլորին սիրելի հայրենի մայրաքաղաքը՝  
Երեխան:

Մեզի եղած ընդունելության ձեփ մատ-  
սին միայն սա ըսեմ, որ մեր սիրելի եղ-  
բայրներն ու քույրերը այնշափ գրկաբաց  
և անկեղծ ընդունեցին մեզ, որ բնավ չ-  
ինք կրնար երևակայել նույնը նաև  
Հայաստանի ժողովուրդը իր մտքն չէր  
ասցուցած մեր միջոցավ զգալ գաղթահա-  
յության սերը դեպի մայր հայրենիքը:

Առաջին առթիվ այցելեցինք կառավարա-  
կան շենքը, որ իր մեծությամբ և շքեղու-  
թյամբ կը գերազանցե շատերու տեսած-  
ները. Հոն նստող պաշտոնյաներ գիշեր ու  
ցորեկ անդադար կաշխատեին Երկրի և  
ժողովուրդի բարիքին համար. Անկե կանց-  
նինք օպերայի շենքը, որուն գեղեցկության ի  
տես մեզի հետ եկող պատգամավորներին  
շատեր ապշեցան, պատմելով, որ աչս  
կարգի օպերա մը շատ քիչ կը գտնվի Եվրո-  
պայի զանազան քաղաքներու մեջ: Եթե  
երեք յուրաքանչյուր հիմնարկության մա-  
սին զատ պատմել Հարկ ոյլար, օրեր  
պէտք են, որ կարենամ տեսածներս պատ-  
ճել:

Ահա սիրելի հայրենակիցներ, այս աշուն-  
ի գործը կը պարտինք Սովիտական իշխան-  
ության և ոռու մեծ ժողովուրդին եղ-  
բայրական աշակցության, որմեն օգտվելր վ  
հայ ժողովուրդը իր շինարար ընդունակու-  
թյամբ այսքան կարճ ժամանակվա ընթաց-  
քին մի քանի անգամ մեծցուց երեխան  
քաղաքը:

Իսկ ամենակարևորը այն զգացումն է,  
որը մեր ժողովուրդը ցուց տվավ գաղու-  
թահայ հյուրերուն Հանդեպ, դասակար-  
դային խարություն շնորհով, ըլլա հարուստ  
կամ բարեկեցիկ, միայն թե լինի մաքուր  
հայ, որուն համար Մայր Հայրենիքի  
դռները միշտ բաց են, որ երթա իր բաժնը  
բերե երկրի շինարարական գործին:

Այսպես, սիրելի հայրենակիցներ, մեր  
բոլորին պարտականությունն է, որ ամեն  
մեկ հայ իր ուժի ներածին շահով օգտա-  
կար ըլլա, դրկելով Հոն այն ամենը, ինչ  
որ կարիք կը զգա մեր հայրենիքը:

Մի՛ մոռնաք, որ 4 տարվա պատե-  
րազմը, ինչպես ամբողջ աշխաղչի, նույնը  
նաև իր աղղեցությունը ձգած է մեր  
հայրենիքի վրա, շատ մը շենքեր կիսատ  
ձված էին, որոնք ներկայիս լրացնելու և  
նորեր շինելու կը ձեռնարկին, վստահ ըլ-  
լալավ որ շատ կարճ տարիներու ընթացքին

այնքան պիտի զարգանա մեր հայրենիքը,  
որ շատերուն համար անճանաչնի դառնա:

Վերջացնելով խոսքս կսեմ կեցցե Սո-  
վետ Միությունը և անոր մասը՝ Սովետ  
Հայաստանը, կեցցե շինարար հայ ժողո-  
վուրդը և կեցցե մեզ հայրենիքալող ուս-  
մին ազնիվ ժողովուրդը:

\*\*\*

### ԲՆԿԵՐ Տ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՅԸ

Իբր Առաջանահայ Երիտասարդության  
ներկայացուցիչը ինձ մասնավորապես հե-  
տաքրքրեց մեր հայրենիքի երիտասարդ  
սերունդը:

Հայաստանի նյութական առաջադիմու-  
թյունը, սոցիալիստական շինարարությու-  
նը, սովետական վարչական ծանոթ էին  
ինձի ինչպես ամեն հայասեր հայու հա-  
մար: Մեր այցելության առթիվ համոզվեցա  
որ ստացված տեղեկությունները ճշգրիտ  
էին, բայց ոչ լրիվ, քանի որ բազմաթիվ  
նոր շինարարություններ մեզի համար ան-  
ձանոթ մնացեց էին: Ինչ որ սակայն ա-  
վելի հիմնարդքորեր, այն ալ երիտասարդու-  
թյան դաստիարակությունը, կազմակեր-  
պությունը և հոգին էր: Ոչ մեկ երկրի  
մեջ այնքան շատ կարուրություն կտրվի  
երիտասարդության, որքան Սովետ Միու-  
թյան մեջ և Սովետ. Պատության գուրգու-  
րանքը երիտասարդներու հանդեպ անսահ-  
ման է: Այս բոլորը ձեզ ծանոթ է անշուշտ,  
բայց ինչ որ անձանոթ կմնար, այն ալ  
դաստիարակության արդյունքները և պե-  
տական հոգատարության հիմնարդներն  
էին:

Կիսուտվանիմ, որ առաջին իսկ հան-  
դիպումն գպրոցական և համալսարանական,  
երիտասարդության հետ վրաս խոր տպա-  
վորություն մը ձգեց: Ինչ որ ավելի ուրա-  
խալի է, այն ալ տաղանդավոր երիտա-  
սարդության մեծ թիվն է: Այսպես, առու-  
շին հերթին այցելեցինք Կրուսպայի ան-  
վան աղջիկներու տասնամյա զգրոցը:  
Դասուցանոցի մեջ փոքր հանդիսության  
մը ընթացքին եկայիթ ունեցան քանի ո՞ր  
շբանավարտուհիներ, հայկական բանա-  
ստեղծություններով և բոլորն ալ թատերա-  
կան մեծ տաղանդ ի հայտ բերին մանա-  
վանդ մին Դոնարա Խաչատրյանը, երբ  
արտասանեց Ա. Խաչակիյանին, այնքան  
հուզեց լուզները, որ ի վերջո բոլոր հյու-  
րերու և զպրոցի ուսուցչուհիներու աշքերը  
արցունքով լցվեցան: Ծանոթացա նույն-  
պես երկու 15 տարեկան պատանիներու

հնու, որոնք հետո շեքսպիրյան՝ դարձուածքներով կը խոսեին և Համլեթին ամբողջ հատվածներ կարող էին գոց ադտասանել Հանդիպեցա երիտասարդ ուսանող, ուսանողութիւներու, որոնք հիմնական որէն ուսումնասիրած էին արևելահայ և արևմտահայ գրականությունը, ուսւա գրականությունը և ոչ նվազ ծանոթություններ ունեին արևմտյան նվառպայի գրականութենքն. կճանճնային Հովհ. Թումանյանը, Բագդին, Պետրոս Դուրյանը, Պարոնյանը, հնչպես և Պուշկինը և Տոլստոյը, Շեքսպիրը և Շիլերը: Բայց երիտասարդության միայն գիտությունը և տաղանդը չէ, որ հարգանք կպատճառէ, այլ և նկարագիրը ու անոր անկեղծությունը, լրջությունը, խորությունը, ազնվությունը, ընտիր կը թությունը, ու չափազանցած չեմ ըլլար, եթե հայտարարեմ, որ մեր հայրենիքի երիտասարդությունը գերազանց է արևմտյան նվառպայի առաջացյալ ազգերու երիտասարդությունը:

Այս եզրակացության հասնելե վերջ աշխատեցա լուսաբանել ինձ համար այս սրանչելի արդյունքին պատճառները, Պրատեցա մանկամսուրները, մանկապարտեզները, ուսումնասիրեցի պիոններական կաղմակերպությունը, կոմերիտմիությունը, համալսարանները, ուսանողական կյանքը. և իմ մեջ այն համոզումը զոյացավ, որ հայ երիտասարդության այս աննախրնթաց առաջադիմությունը կպարահնը մասնափորութես սովորական կառումարության և համայնավագի կուսակցության շանքերուն Հանրապետության պյունիքի 70 առհարյուրը հատկացված է ժողովրդի լուսավորության: Հայաստանը ունի ներկայիւ 11 բարձրագույն դպրոցներ 10 հազար ուսանողներով և 1134 ալ դպրոցներ 240 հազար աշակերտներով, միայն Երևանի մեջ ունինք 40 տասնամբա դպրոցներ, այսինքն նախակրթական և լիսէ միասին:

Միջնակարգ և բարձրագույն դպրոցներու դասադրքերը ամբողջովին հայերն են և ամեն մի առարկայի վերաբերյալ մասնադիտական բառերը նույնակես հայացուցած են, ներկա եղա միջնակարգ դպրոցի, տրնտեսագիտական և բիոլոգիական ֆարութերներու, Կոլլեջենինիկի դասընթացներու և քննություններու, հակառակ որ կարգ մը նույնութեր ծանոթ էին ինձ, չէի կրնար հետեւ բացառություններուն, որովհետ նոր հայերն բառերը բոլորավին անհականի կմնային ինձի:

Կան զանագան միջնակարգ դպրոցներ, ամեննեն տարածվածը տեսական տասնամ-

յա դպրոցն է, ուր երեխաները կստանան բնդանուր կրթություն, բայց կրնան իրենց սիրած առարկաներով ավելի զբաղվի ցերեկի վերջերը. այսպես կը կազմվին դրական շրջանակներ, մաթեմատիկայի, ֆիզիկո-քիմիայի, գեղարվեստի, մարդաբանի շրջանակներ:

Մեծ հետաքրքրություն պատճառեցին երաժշտական դպրոցները նույնպես տառնամյա:

Այս տիպի դպրոցները ավարտողները կհետեւին, սովորաբար կոնսերվատորիան 5 տարի— ուրեմն քննամենը 15 տարի երաժշտական կրթություն կստանան, դառնալով իսկական արվեստագետներ, առիթունացան այս դպրոցներու ձեռք բերած արդյունքները, հայկական գիլհարմոնիայի դահլիճին մեջ բերած արդյունքները, հայկական գիլհարմոնիայի գուշլիճին մեջ կազմակերպված համերգի մը բնթացրին փոքրիկ երեխաներ նվազեցին դասական կտորները, հասուն երաժշտագետներու շարժվածքով և հմտությամբ:

Դացի այս մասնագիտական դպրոցներին կան նաև ուրիշ միջին աստիճանի դպրոցներ, տեխնիկումներ, որոնք կապարաստն անհնիկական մասնագետներ, ինչպես շինարար, ճարտարապետ, տեքստիլիստ, բժշկական տեխնիկներ, գասընթացը կտես 4 տարի, իսկ ընդունվելու համար, անհրաժեշտ է ունենալ գոնե 7 դասարանի վկայական, տեխնիկումներու ավարտողները կարող են շարունակել իրենց մասնագիտությունը բարձրագույն հաստատություններու մեջ:

Ուսանողությունը կառավարության և նորովրդի մասնավոր գուրգուրանքին կարևոնանա, ամեն ուսանող կստանա ամսաթոշակ, գուրսեն եկող ուսանողները կարդին հատուկ հանրակացարաններու մեջ՝ առանց ոչ մեկ վարձի: Ուսանողները կը ձաւագիտ հատուկ հաշարաններ չնշին ծախսով մը՝ ամսական մոտավորապես 60 առքի:

Ուսանողությունը կկազմե հանրապետության ամենալավ դաստիարակված նարքը: Ուսանողները հավատարիմ սովոր հպատակներ են և բավ հայեր, հայ շունչը, հայ Հոգին կը տիրապետե ամենուրիք:

Դպրոցական դաստիարակության զուգընթաց կարգանա նաև պիոններական դաստիարակությունը, 7 տարեկաննեն սկսյալ ըստը երեխաները կհամարվեն պիոնների:

Պիոններական կազմակերպությունը կօժանդակի դպրոցին, կը պատրաստե ապա-

գա մասնագետները և սովետ քաղաքացիները:

Հայաստանի ամենաբավական կարգակերպված հաստատություններու մին մարմնակրթությունն է: Ներկա եղանք ֆիզկուլտուրայի տան մեջ մարզական հանդեսի մը, տառնյակ աղջիկներ և տղաներ կատարեցին ամենագժամկետ ոլիմպիադական շարժումներ. Հայաստանի մարզիկները բարձր զնահատանքի արժանացած են և կորավեն ամբողջ Սովետ Միության մեջ երկրորդ տեղը, Մոսկվային վերց: Բազմաթիվ մարզական քլուաններ գոյացվուն ունեն, ինչպես՝ Սպարտակը, Դինամոն և այլն:

Ֆիզկուլտուրնիկներու կեցվածքը և կարգապահությունը արժանի է հիացումի. ներկա էինք Երևան—Խարկով փուղբաղ մրցումին:

Քննչանուր առժամբ պետք է ըստ, որ այնտեղ երիտասարդությունը շատ ավելի լուրջ է:

Հայաստանի երիտասարդությունը պետք է ըլլա մեր վառ օրինակը: Լույսը կու դա Արեկըն նաև երիտասարդության համար ուղուններ:

\*\*\*

### Բնկ. 2. ԱՅՎԱՃՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Սիրելի՛ ընկերներ և ընկերութիւններ.

Ս. Հայաստանի բանվորներու և բանվորութիւններու կողմէ ձեզ բերած եմ շերմ ուղուններ:

Սիրելի՛ ընկերներ, մեր տպագորությունները մանրամասն ձեզ բացատրել, անշուշտ, օրերու և ժամերու կկարուի. ուստի այդ կթողում ընկ. Տիրացանին, որ մանրամասն ձեզ գոհացնե իր գոչով ու բանախոսություններով: Ես միայն կրնա՞մ ձեզ հարտնել, որ Ս. Հայաստանի բանվորն ու բանվորութիւնն և կոլխոզնիկները բոլորն ալ ուրախ են և իրենց հագեկան տրամադրությունը շատ բարձր է: Թե ինչո՞ւ ուրախ են, ուրախ են, որովհետեւ կկատարեն իրենց պարտականությունը հանդեպ իրենց հայրենիքին, այս 4 տարվա հսկա պատերազմի ընթացքին:

Անոնք ուրախ են, որովհետեւ իրենց հարփածալին աշխատանքի, իրենց ինայուղության, իրենց բրտնիքի և Կարմիր Բանակի զոհարերություններուն վարձատրությունը ստացած կհամարեն ֆաշիզմի շախափումով:

Ուրախ է հայ բանվորը, որովհետեւ իր

բրտինքը թափեց, այս շրմ տարվա ընթացքին իր արդյունքը տվավ:

Անոնք ուրախ են, որովհետեւ այն ճիպը, որ կթափեր ֆաշիզմը ջախչախելու համար, այսօր ընդհակառակը այդ աշխատանքը կթափե մեր երկրի վերաշինության և առաջադիմության համար:

Սիրելի՛ ընկերներ, մեկ երկու օրինակ տամ մեր բանվորա-գյուղացիության հարվածային աշխատանքի մասին, որուն մեջ մեծ դեր կատարած է հայ կինը: Ինչպես զիակեք, ամեն պատերազմի ժամանակ ամեն մեկ պատերազմիկ երկրի արդյունաբերությունը կպակասի, մինչդեռ այս պատերազմի ընթացքին, շնորհիվ մեր բանվորա-գյուղացիության հարվածային աշխատանքին, պարծանքով կրնա՞մք հայտարարել հարյուր քան տոկոսով ավելացած է: Եվ ան այդ հայտարարե սրոտի բոլոր գոհունակությամբ իր պարտքը կատարած ըլլալուն համար:

Են առաջ տարած է այս պատերազմի ընթացքին որոշ շափով նաև շինարարություն, ինչպես որ պատասխան է պետական մեծ պալատը, լենինի հապալարակին վրա, ուս սկսած է Դվինի կոլխոզներու թատրոնի շինքը և ավարտած է դեռ ուրիշներ, որոնք մենք առիթ շունեցանք տեսնելու:

Անոնք ուրախ են, որովհետեւ իրագործած են Ս. Միության Մեծն Առաջնորդ Սպարապետ ՍՍԱԼԻՆԻ և Ս. Հայաստանի Առաջնորդ Հարությունյանի սա նշանաբանը՝ «Ամեն ինչ ճակատի համար և ամեն ինչ հաղթանակի համար» և ան տված է յուր բրտինքը, յուր արյունը, յուր խնայողությունը և ամեն ինչ, և առոր համար ալ ան հաջողած է և շախչախած Հիթերի իժին զլուխը:

Սիրելի՛ ընկերներ, Ս. Հայաստանի բանվորն ու բանվորութիւնն մեկ բաղճանք ևս ունի, այդ է՝ արտասահմանի հայությունը տեսնել վերադարձած յուր սիրելի Ս. Հայրենիքը և ատոր կսպասե ան գրկաբաց:

Ուստի բոլոր սրոտով գոշենք՝ կեցցե Ս. Միության և Ս. Հայաստանի բանվորն ու բանվորութիւնն, որոնք ամեն շանք թափեցին, որպեսի հաղթեն ֆաշիզմին և ազատադրեն ամբողջ մարդկությունը:

\*\*\*

Ընկ. Շահեն Կյուրծյան կը կարդա Ս. Հայաստան մեկնող այցելու ընկերներին Մուշեղ Մկրտչյանի օրատերին մեջ երկու

ուսանողներու կողմէ վերջին բոպեին գըր-  
փած հետեւյալ ողջույնի խոսքերը.—

Ողջույն Զեզ, մեր թանկագին Հայրենա-  
կիցներ:

«Մենք Հայ ժողովոդի Հարավաստ զավակ-  
նելու, Հայաստանի ծաղկածիծաղ բնության  
մեջ մեծացած երջանիկ աղջկներս ցան-  
կանում ենք, երազում ենք զառնալ դերա-  
սանուհիներ, որպեսզի ավելի և ավելի վեր  
բարձրացնենք և զարգացնենք Հայ ժողո-  
վորդի կովտուրան և արվեստը:»

«Մենք ցանկանում ենք զուտ և հաջողու-  
թյամբ ավարտել դպրոցը և ամբողջովին  
նվիրվել մեր սիրած ու փայտիայած գործին,  
արվեստին: Մենք մեր անմահ խաղով  
ցույց կտանք դարերով տանջված արյու-  
նակից և այլազգի ոսովներից Հալածված  
Հայ ժողովոդի դարավոր վիշտը, զրկանք-  
ները և երբեմնի փառաշեղ կյանքը:»

«Մենք ցանկանում ենք Զեզ, մեր սիրելի  
և թանկագին քույրեր՝ և եղբայրներ, մեր  
պանդուստ Հայրենակիցներ, մերադարձ  
ձեր Հայրենիք Հայաստանը, Սցմիտական  
Հայաստանը:»

«Զեզ Հետ միասին մենք ավելի և ավելի  
մեր կրարձրացնենք մեր պանծալի Հայրե-  
նիքի՝ Հայաստանի կովտուրան և արվես-  
տը: Մենք, 15 տարեկան աղջկներս չե-  
տպադա մեր պարտքը պիտի կատարենք  
Հանդեպ մեր սիրելի Հայրենիքին, դառնա-  
ւով դերասանուհիներ: Մենք կկերտենք ան-  
մահ կերպարներ, կառացնեանելք, որ  
մեր Հայ ժողովուրդն էլ ունի դառնաւի  
զավակներ: Մենք ցանկանում ենք դառնաւի  
դերասանուհիներ և երազում ենք կերտել  
անմահ կերպարներ, որոնց պատկը պետք  
է Հանդիսանա «Համեթ»-ը:»

«Ողջույն Զեզ, մեր թանկագին Հայրենա-  
կիցներ, դուք շատ եք ձեր Հայրենիքի  
կարուր քաշել, բայց ոչնչ, Հայրենիքը  
կանչում է ձեզ և վերադառնալով Հայրենիք  
կմոռանաք ամեն մի զրկանք նրա մայրա-  
կան գրկի մեջ:»

«Յանկանում ենք բարի վերադարձ, Հայ  
ժողություն և առողջություն:»

Ապագա դերասանուհիներ

Նինել և Ժենիկ:

«Մենք ծնվել ենք 1929 թվին, Սովետական  
Հայաստանի մայրաքաղաք Երևանում, 4  
տարեկան հասակում Հաճախել ենք ման-  
կապարտեզ, որտեղ մնացել ենք 3 տարի,  
7 տարեկան հասակից մինչև այժմ սովո-  
րում ենք դպրոցում: Այս տարի Հաչողու-  
թյամբ ավարտելով 8-րդ դասարանը փոխա-

վեցինք 9-րդ դասարան: Մեզ զաստիարա-  
կել և ոգեշնչել է լենինյան-ստալինյան  
պարտիան, նա մեզ սովորեցրել է սիրել  
Հայրենիքը և Հարկավոր գեպօւմ կյանքը  
շնուայել նրա համար:»

25 Հունիսի 1945

երեան

\* \* \*

— ԲԵԿ. ԴԱԿՏ. ՏԻՐԱԾՅԱՆԻ  
ՔԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Սիրելի՝ Հայրենակիցներ,

Հայրենիքի և մեր կառավարության  
չեղապին ողջույները կը բերեմ ձեզն:  
Ամենայն Հայոց նորբնտիր Կաթողիկոսի  
Գիվորդ Զ-ի օրհնությունները կը բերեմ ձե-  
զի: Մեծ բանաստեղծներ Ավետիք Խա-  
չակյանի, Դերենիկ Դեմիքճյանի, տաղան-  
գավոր նկարիչ Մարտիրոս Սարյանի, մեծ  
դերասան Արմեն Արմենյանի և ասոնց եղ-  
բարակից ընկերներու ու ամբողջ Հայ ժո-  
ղովոդի եղբարական բարեները կը բերեմ  
ձեզի:

Եուոր պատգամավորներուս առաջին պաշ-  
տոնական ընդունելության Գեղորդ Արքի-  
պիս, Զեղորեքցան ըրավ իր լոթը տարինե-  
րու տեղակալության հաշվեալությունո,  
որմե տեսանք, թե տեղակալ սրբազանը  
Հայոց եկեղեցին առաջնորդեր է ճիշտ ուղ-  
ղությամբ, կանգնելով Հայ պետության ու  
Հայ ժողովոդի կողքին և մասավանդ Հայ-  
րենական մեծ պատերազմին Հայ եկեղե-  
ցին Տեղակալի իմաստուն առաջնորդու-  
թյամբ իր և Հայ ժողովոդի առավելագույն  
մասնակցությունն է ապահովեր Ս. Միու-  
թյան մղած սոսկալի մարտին, ընդդեմ  
ֆաշիստ զավթիչներու Մենք պատգամա-  
վորներս միաբերան տվինք Սրբազան Տե-  
ղակալին մեր կատարյալ Համաձայնությու-  
նը, իր տարած քաղաքականության համար  
—անվերջ կեցցեներու ու ծափերու տարա-  
փին տակ:»

Ելու նույն վստահությունը արտահայտե-  
ցինք մենք ընտրության հանդիսավոր ժա-  
մուն, երբ զինքը միաձայնությամբ Ամե-  
նայն Հայոց Կաթողիկոս ընտրեցինք իրու  
արժանապրագույնը:

Մինչև արցունքները հուզիչ էր տեսարա-  
նը, երբ էշմիածնի կամարներուն տակ  
Հայտարարվեցավ ընտրության արդյունքը  
և երբ 76-ամյա նորբնտիր Կաթողիկոսը  
հորդառատ արցունքները աշքին, գիրկը  
նետիցավ Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գա-  
րեգին Հովսեփյանի և այս երկու ալեհեր

ծերումիները գրկախառնված մնացին պահը:

Հայրենիքի մասին ըսելիքներ շատ շատ են, սիրելի հայրենակիցներ: Մանրամասնություններ դուք պիտի կարդաք «Պահակ»-ի էջերնեւ: Այստեղ խիստ հակիրճ պիտի պատմեմ:

Երևանը գտա իբրև բոլորովին նոր, եփրապական քաղաք մը, լայն ասֆալտե փողոցներով, հսկա մոնումենտալ շենքերով, որոնց շատ շատերը հայկական ճարտարապետության լավագույն գործեր: Քաղաքը բնդարձակված աներեակայելի շափերով, բովի ավաններեն շատերը արդեն կցված կարելի է համարել անոր, այնպես որ շատ շուտով Մհեծ—Երևան մը պիտի ունենանք իս միլիոն բնակչությամբ:

Ավելի հետաքրքրական և ուրախալի է, սակայն, մեր հայրենիքին մեջ տիրող ազգային-հոգիկան կյանքը: Առողջ կուլտուրան, ոչ ազգեստիվ ազգային գաղափարաբանություն մըն է հոն տիրողը: Գաղութահայության անբովանդակ ազգայնականությունը շկա հոն: Հայաստան իր համալսարանով, օպերայով, թատրոններով, թանգարաններով և տասնյակ այլ ազգային հաստատություններով կուսումնասիրե, կտորացնե մեր հին ու նոր ազգային արժեքները և իր ապագան կերտե այդ ազգային արժեքներու վրա:

Առողջ պիտի բացատրել նաև մեր ժողովրդի աննման ու հերոսական կեցվածքը Հայրենական պատերազմի շորս տարիներուն: «Ամեն բան ուզմանակատի համար» բնաբանը վստահ եմ թե միմիայն Մ. Միության և մեր Հայրենիքին մեջ այնքան արժատորեն գործադրված է: Մեր ժողովուրդը իր ամբողջական մասնակցությունը բերմած է Հայրենական պատերազմին, և այսօր հապարտությամբ կհիշե իր գոհաբերության տարիները և կուտա նաև երբեմն հատկանշական մանրամասնություններ: Այսպես, կենինականի հյուսվածքեղենի գործարանը Հայրենական պատերազմի շորս տարիներու ընթացքին Կարմիր փառապահն Բանակին տված է 84 միլիոն մետր հագուստի կերպաս: Խսկ Հայաստանի 29 շրջաններեն Դամարուի շրջանը բանակին մատակարարած է այդ շորս տարիներուն վեց հազար վագոն մթերք:

Մանրամասնություններու մեջ շեմ ու էքը մտնել: Հայրենի ժողովրդի վերաբերմունքի մասին դեպի գաղութահայությունը

այսքան կուզեմ ըսկե, որ այդ վերաբերմունքը եղբայրական է բառիս ամենահարազատ իմաստով: Հայրենի ժողովուրդը դրկարաց կոպասն իր գուրսի բոլոր եղայրներուն:

\*\*\*

### ՖԻԼՄԵՐՈՒ ՅՈՒՅԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանախոսություններեն վերջ ցուցադրվեցն երկու ֆիլմեր, առաջինը՝ Մայիս մեկի տոնակատարությունները Մոսկվայի մեջ, իսկ երկրորդը՝ 1939 թվին Մոսկվայի մեջ տիղի ունեցած հայկական արվեստի տասնօրյակի երաժշտական և հայկական պարագաներու հանդիսություններեն քանի մը տեսարան, ուր գեղեցկորն պատկերացված էն «Կոմիտաս» քառյակը, «Ալմաստ» օպերային քանի մը տեսարան ու երևանի Փիլարմոնիայի պարի անսամպլեի խմբակն պարերը:

\*\*\*

### ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՍՍԱ ՄԱՍՈՒԵԼԻՆ

Ռոման— սովոր բարեկամության «Առևուս» միությունը, ցանկանալով ոռման հասարակությունը ևս ծանոթացնել կաթող. ընտրությանց առիվ գումարված եկեղեցական ժողովի աշխատանքներուն, ինչպես նաև Սովետական Հայաստանի ծաղկյալ կացության, իր հոյակապ պալատին մեջ Չորեքշաբթի հովհանի 11-ին սարքած էր մամուլի կոնֆերանս մը, ուր ի ներկայության ոռման բոլոր թերթերու ներկայացուցիչներուն մեր պատվիրակներն ու այցելուները տվին շահնեկան տեղեկություններ, որոնք հովհանի 12-ին ընդարձակորեն լուսատիսական բոլոր թերթերու մեջ:

Կոնֆերանսնեն վերջ «Հայաստանյան հակատ»-ի բաժակ մը գինիով հյուրասիրվեցան ներկաները, որոնք իրարու հետ մտերմիկ խոսակցություններով շարունակեցին մտքերու փոխանակումները.

«Առևուս»-ի նախագահ պր. պրոֆ. Փարչոն և ներկա ոռման լրագրողները մեծ հետաքրքրությամբ և գոհումակությամբ ունինդրեցին մեր պատվիրակները, հիմնի հայտնելով Սովետական Հայաստանի բացառիկ հաջողություններու վերաբերմությունը:

(«Պահակ» հունիս 15, թիվ 15—16):



**ՊՈԽՎԵՐԵՀԵՑ ԸՅԻՍՔՀԵԿԵՆ ՊԵՏՎԻՐԵԿ Գ-Բ. Գ. ԹԱՓԻՔՊԱՅԵՑԻ  
ՀԵՅԵՍԵՆ ԿԵՏԵՐԵՒ ԻՐ ԱՅՅԵԼՈՒԹՅԵՆ ՄՌՈՒ**

Պովկարիայության անունով՝ Էջմիածնի ժողովին մասնակցող փլովտիվարնակ պր. Պ. Թոփաքաջյան հետեւյալ հայտառարությունները ըրած է մեր խմբագրին:

«Հայաստանի մեջ մեր սպասածեն շատ սպիտի սրտագին ընդունելություն գտանք: Մեզ ընդունեցին եղբայրական ողջագուրումներով: Մեր այցելությունը ունեցավ նաև այն օգոստը, որ փարատեց դադութակյարությունը մասին Հայաստանի մեջ գոյացած այն կարծիքը, թե ան ուժացած է հայրենիքն».

Բախտ ունեցա այցելելու երեվանի համատարանը, որ իր զանազան ճյուղերով պատիվ կրերէ Հայ ժողովրդին: Ներկա գտնվեցա թատերական ներկայացումի: Մեր թատրոնը իր շենքով և գեղարվեստով բարձր է և հիանալի:

Այցելեցի «Արարատ» գինիի և կոնյակի: Պորժարանը: Տեսա Քանաքեռի ջրաէլեկտրակայանը, որուն համար ծախք եղած է 125 միլիոն բուլի: Հոյակապ և արդիական ձեռնարկ մը, որ լույս և էներգիա հայացայթե երկրին: Թէև արձակուրդի շրջանին մեջ, սակայն առիթը ունեցանք տեսնելու երևանի նախնական և միջնակարգ վարժարաններն երկուքը: Առողջապահական շենքեր, մանկավարժական ամեն պայմաններ լրացնող դպրոցներ են: Հսկա

և հանրօգուտ հաստատություն մըն է նաև «Մարի Նուպար» ակնարուժարանը: Այցելեցի Օշական, Աշտարակ, Ռսկեվազ, Նոր-Արաբկիր գյուղերը: Անոնց փողոցներն ալ ասֆալթե են և փողոսպները լավ կազմակերպված: Ամեն գյուղ ունի իր ընթերցարանը, դպրոցը և մշակութային հաստատությունները: Հիվանդանոցներ, մանկամատրներ և հանչային հաստատություններ կծառային ժողովուրդի բարօրության: Ժողովուրդը առույգ, կայտառ և դռն է իր վիճակին: «Մարի Նուպար» ակնարուժարանի մեջ տեսանք գինվորական մը և կին մը, որոնց աշքերը բոլորովին դարձմանված են կուրութենե: Բաղդ ունեցանք տեսակցություն ունենալու ժողովրդական կոմիսարներու հետ, որոնք պատասխանեցին պատվիրակներու բոլոր հարցումներուն: Հայաստանի վարիչները ներգաղթի հարցն ալ կը քննին սրտացավությամբ և պետական մարդու վայել լրջությամբ: Հայաստանի բոլոր պետական, գիտական և մշակութային գործիչները լուրջ զարգացած և համակրելի անձնավորություններ են: Ինչ որ ուրիշ ազգեր չեն կրցած ընել հարցուր տարվա մեջ, Հայաստանի ժողովուրդը ըրած է 25 տարվան մեջ:

(«Երևան» հունիս 25, թիվ 67).

**ՊՈԽՎԵՐԵՀԵՑ ՊԵՏՎԵՄԵԼՈՐԵՐՈՒ ՏՊԵԼՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Էջմիածնի եկեղեցական ժողովին մեջ պուկարահայությունը ներկայացնող պատգամավորները հետեւյալ հայտարարությունը ները ըրին մեր խմբագրին: Առաջնորդ Տ. Դրիգոր Էկիսկոպոսը հայտարարեց: —

«Ճամբորությունը անցավ շատ հաճելի և հանգիստ, Մրգիս—Մոսկվա, Պաքու Բիթլիս, Երեվան գծով: Ամեն կողմ սրտազեղ ընդունելություն պետական ներկայացուցիչներե, որոնցմե դիմավորվեցավ պատգամավորությունը, կայտաններու մեջ և առաջնորդվեցավ ամենաշքել Հյուրանոց

ներ, հետաքրքրվելով մեր համբորդության մասին: —

Սովետական Խշիանությունները բոլոր պատգամավորներու հանդեպ վերաբերվեցան մեծ հարգանքով ու անմոռանալի հոգածությամբ: Հոգենոր պաշտամունքների խորհուրդի նախագահություն կազմված է, ժողովրդական կոմիսարներու խորհուրդին կից թե Մոսկվա և թե Երևան, որոնք իրենց հարգելի նախագահներով և պաշտոնյաներով ամեն տեղ շփման մեջ գտնվեցան պատգամավորներուն: Հետ, շուալլելով ամեն դյուրություն, որուն նմանին չենք

Հանդիպած որևէ երկրի մեջ և որևէ տեղ,  
Ազգային-Եկեղեցական ժողովը բացվե-  
ցավ ըստ որոշման Հունիսի 16-ին։ Օրա-  
կարգի նյութ ելող բոլոր խնդիրները լուծ-  
վեցան կատարյալ համաձայնությամբ և  
աննախընթաց սկսորությամբ։ Կիլիկիո S.  
Գարեգին կաթողիկոսն ու Մայր Աթոռու  
Տեղակալ S. Գիլորդ Արքեպ. Զերքըցան,  
այժմ Նորքնտիր Կաթողիկոս Ամենյան  
Հայոց, իրենց խոհական և իմաստուն

նաբերական, ջարտարագվեստական, մշակութային գեղարվեստական վերելքին մեկ բառորդն անդամ:

Հպարտ պետք է ըլլանք Հայաստանով։  
Սովորացայ աշխարհական պատգամավոր  
ընկ. Գևորգ Մեծքթուազյան իր կարգին հայ-  
տարարեց։

— «Առաջին անգամ չէ, որ կայցելեմ Սովետ. Հայաստան։ Մոտավորապես 10 տարի առաջ դարձայ գտնված եմ Հայա-



Բուղարիայի քեմի առաջնորդ՝ Գրիգոր Եպիսկոպոսը. Կարտապետյանը  
աշխարհիկ պատգամավորների ենթ

վարչագիտությամբ ժողովն առաջնորդեցին ցանկացված հաջողության:

Ծատ կարծ մնացի Երեվան, Վեհ. Հայրապետին հրաւանով գրական աշխատանքի կանչված ըլլալով Ա. Էջմածնու վանքին մեկ զրկվեցա այցելելե այն վայրերն ու հաստատությունները զորս տեսնելով և վայելելով բախտավոր եղան մասնավորաբար աշխարհական պատգամավորներ, որոնք Երեվան մնացին միշտ Այսու հանդերձ տեսնելու բախտն ունեցած քիչերես իսկ կրած տպավորությունս ամենալավ է, մեծ և գերազանց Դպրոց, համալսարան, թանգարան, թատրոն, կինո, զորս տեսնելու առիթն ունեցած հսկայական աշխատանքներու արդյունք են, ու ոչ միայն պատիվ կրերեն Սովետական Հայպատանին և Հայժողովուրդին, այլև նախանձ կշարժեն առաջադեմ երկրներու, որոնք իրենց պետականության առաջին քանակին հաջողած ունենալ մեր Հայրենիքին արդյու-

տանի մեջ: Նախորդ և ներկա այցելություններուս միջև տարբերությունը այնքան մեծ է, որ մի զարմանաք, եթե ըստմ, թե Երևանը անձանաշելի գտա: Ոչ միայն երեվանը: Այցելեցի նաև նոր Մալաթիա, նոր Սեբաստիա, Դվին և Արտաշատ գյուղերը, որոնց կոլիսովները հիմնալի տպավորություն կրթողուն ականատեսին վրա: Առողջապահական բնակարաններ, մաքուր փողոցներ և զյուղերու միջև ասֆալթային ճամբաններ արդիական ավաններու վերածած են զանոնք Տնտեսական, գիտական և մանավանդ մշակութային մարզերու մեջ մեր հայրենիքը հսկայաբայլ առաջադիմած է: Հակառակ պատերազմական պայմաններուն, ժողովուրդը կենսուրախ, առողջ և հավատավոր իր ապագայի մասին կիերանե բարօր կյանք մը: Պատգամավորները հիմացած վերադարձան իրենց վայրերը Հայաստանի իրականությամբ ոգևորելու համար գաղղութաշայքանգվածները: Կուղեմ առիթեն օգուզել

Հայտնելու մեր սրբագին շնորհակալու-  
թյունները Սովետական իշխանությանց  
Հայաստանի կառավարության, Ամենայն  
Հայոց կաթողիկոսին և Հայաստանի ժողո-  
վուրդին, որոնք սիրավիր գուրգուրանքով  
շրջապատեցին արտասահմանի պատգամա-  
վորները, Հայկական Կյուրասիրությամբ  
պատվելով մեզ: Մասնավոր հաճույքով

պեսք է Հիշեմ Արփասահնանի հետ կուվառու-  
թական կապի ընկերությունը, որուն արժա-  
նագոր նախագահ ընկ. Մարիա Պետրոս-  
յան ազնիվ գտնվեցավ գոհացնելու մեր  
բոլոր խնդիրները: Ճամբրովությունը  
անջնջելի պիտի մնա իմ Հիշողության ս-  
մեց»:

(«Երիվան» հուլիս 14, 64, 1945թ.)

ՀԱԿ. ԳԵՎՈՐԳ ՄԵԶԹՈՒԻԳՅԱՆՆ ԶԵԿՈՒՅՑԸ ՍՈՓԻԱՅԻ ՀԵՅՈՒԹՅՈՒՆ

ի զմիածնի եկիդցական ժողովին մէջ  
պովկարահայության աշխարհական պատ-  
գամավոր ընկ. Դ. Մեքթուաճյան անցյալ  
երկու շաբաթի երեկոյան ժամը 7—30-ին  
զեկուց մը ըրավ Սոֆիայի հայ հասարա-  
կության առջև «Երևան» հառաջ. միության  
ակումբին մէջ. Հայրենաբազմ բազմություն  
մը փութացած էր լսելու ծաղկող հայրենի-  
քի մասին ընկերոջ կրած տպայիրություն-  
ները. Ընկ. Մեքթուաճյան իր զեկուցը  
սկսավ հետեւյալ պարզ, բայց հստակ  
հայտարարությամբ.

ներու մեջ հաստառված են և մասնագետ-  
ներու հսկողության ներքեւ կդրսեն ման-  
կամսուրներ, մանկապարտեզներ, դպրոց-  
ներ և ընթերցարաններ։ Հայաստանի էլեկ-  
տրոկայանները կշարունակեն ույժ և լույս  
հայտայթել երկրին արդյունաբերական  
հաստատություններուն գոհացնելու համար  
ժողովրդին օրեւ օր աճող պահանջները,  
ընկերը շոշափեց նաև ներդադիր և ար-  
տասահմանն հայ ուսանողություն զրկելու  
մասին Հայաստանի վարիչներուն ունեցած  
տեսակետները։ Իրեւ վերջարան ընկեր  
Մեքենայան հայտարարեց հետեւյալ  
առողջ մտքերը. «Հայ ժողովուրդը իր ազա-  
տությունը կորսնցնելե ի վեր միշտ խար-  
վեցավ օտարներն։ Չունեցավ անկեղծ  
բարեկամ մը, որ օգնության ձեռք երկնցներ  
իրեն։ Միայն Ռուս մեծ ժողովուրդը ազա-  
տեց զայն կորուստե և պատեհություն տը-  
վավ անոր, որ մարդավայել կյանքի տիրա-  
նաւ։ Կեցցե Սովետ, մեծ Միությունը,  
կեցցե Սովետ Հայաստանը, կեցցե փոքր  
ազգերու ազատարար և պաշտպան Մեծ  
ՍՍԱԼԻՆԾ»։ Բուռն ծախահարություններով  
ընդմիջող և վերջացող ճառեն հետո ներ-  
կաններու կողմե հարցումներ արսիցան,  
որոնց գոհացուցի, պատասխաններ տվափ:  
նախագահ ընկ. Գ. Դարրինյան գեղեցիկ  
խոսքերով փակեց ժողովը։

(«Երեվան» հովիս 28, թիվ 68)

## ՏԵՍԻԼՔՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԳԵՐՆՎԱՌ

Վերադարձան Փարիզի պատգամավոր-  
ները: Անոնք թուշքով անցան քանդված  
Ելիոպայի վրայեն, հասան Հայրենի նա-  
վահանգիստը, Հավիտենական Արարտի  
հանդիման մնացած անխոցելի ու անա-  
ղաբու:

Մեծ փոթորիկը չէր հասած մինչեւ զոյն

բայց անոր զավակներ գացած էին փոթո-  
ռիկը ոհմանուելու և ասեանիւ,

Անոնք ջերմեռանդ ուփտավորներու ալես  
գացին ծնրադրել Հայկական վերածնումնի  
մեջ տաճարին առջև, որ մեր ծաղկած  
մայրաքաղաք «Պաղպարիկ Երեկան»-ն է:

Տեսան քառորդ դարեւ ի վեր Հոն թափ-

ված բրտինքն ու ճիգը, տեսան ու շոշափեցին անոր արդյունքները:

Կտրեցին ոռոսական տափաստանները մինչև Մոսկվա: Ականատես հղան ինքնավստա՞հ նորահաս սերունդի մը հաստառ քայլերուն, հավատավոր աշխատանքին ու կվերադառնան բենավորված տեսիլքներով:

Հազար բան տեսան, հազար բան իմացան:

Կհաշխածվին, կշրջապատվին ամենեն: Ի՞նչ տպավորություն կրերեն, ի՞նչ ունին պատմելիք: Ինչե՞ր լսեցին:

Շվարած են մարդոց պես, որոնցմէ հաշիկ կուզեն, երբ իրենց հարստության համրանքը չեն գիտեր: Ո՞ր մեկը պիտի պատմեն, երբ այնքան շատ բան ունին պատմելիք: Ո՞ր լսածնին պիտի կրկնեն, երբ ծովու շափ բան լսեցին:

Տակավին ատեն չեն ունեցած դասավորելու կարևորագույնը կարևորեն, առաջնակարգը երկրորդականնեն դատելու նոր են վերադարձեր Երազներու Աշխարհեն ու աշքերնին կշիկեն:

Բայց ճակատագլխական շրջան մը կապրինք ու կմեռնինք լուրերու պակասեն:  
— Կռունկ մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ւ:

Պիտի համբերենիք ուրեմն: Կոռոնկները պիտի խոսին անշուշտ: Պիտի իմանանք, պիտի իմանան նաև գործութահայությունը, «Ժողովուրդ»ի ընթերցողներն ալ: Յիշ-

րած են հրատարակելի նյութեր, լուանկարներ մեր հերոսական հայրենիքնեն: Հերոսական ուազմաճակատներու վրա, հերոսական թիկունքի աշխատանքի ճակատին վրա: Կիները նույնքան նվիրված ու վճռական, որքան այրերը:

Այս հատկանիշեր, որոնք ցուց կտանը թե հայն ալ ունի մեծ ժողովուրդ դատնալու ընդունակություն:

Մեծ: Այս, բարոյական ու քաղաքական իմաստով: Ժողովուրդի մը մեծ գործեր կատարելու կարողությամբ, քնակչության ու սահմաններու ծավալով:


Եվ այս է մեր բազմահազարամյա կյանքին գաղտնիքը, մեր պատմության մեջեն ողնասյունի մը պես անցնող էական գիծը, որ անմահ տողերով բանաձևած է մեր պատմահայր Մովսես Խորենացին:

— Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքր սահմաննեալ, սակայն բազում գործք արութեան գոտնին գործեալ և ի մերում աշխարհիս:

Այսպես էր 1500 տարի առաջ, այսպես է այսօր:

Այսպես ալ պիտի մնա Հավիտենական Հայաստանը:

(«Ժողովուրդ», Ուրբաթ, 17 օդոստոսի, թիվ 263):





ԱՐՏ. ԱՎԱԳՅԱՆ

## ՆԵՐՍԻՆ ՇՆՈՐՀԱԼԻ

Ուղիղ 773 տարի է անցել պահլավոնիների իշխանական տան ժառանգ, Գրիգոր Մագիստրոսի թոռ՝ Ներսես Շնորհալու մահվանից հետո:

Այսպես են կոչել ժամանակակիցները Ներսես Դ. Կաթողիկոսին նրա բազմակողմանի, բնատուր շնորհիք, քաղաքական ու կրոնական ակտիվ գործունեության, անբասիր վարքի համար՝ նրան դասելով հայ ժողովրդի մտքի ներկայացուցիչների և կրոնական սրբերի շարքու:

Տեր և ծառա ժողովրդի, Այսպես են գնահատել նրան իր ժամանակին՝ շնորհիվ նրա ժողովրդասեր բնավորության:

Շնորհալու անունը միայն հայերի համար չէր մեծ՝ այլև այլազգիների, որոնց մասին վկայում են թե նրանց և թե մեր մատենագիրները: Շնորհալին եղել է իր ժամանակաշրջանի ամենաուշայլ մարդը և շնայած ժամանակի խավարին, շնորհիվ իր տաղանդի և խելքի, նա դարձել է մի լուսավոր ջահ, որը ճառագել է միջնադարյան խավարում և իր շողերը նետել է գալիք դարերի խորքու:

Մեծ են եղել Շնորհալու ձգտումները: Նա բուռն ցանկություն է ունեցել կրթություն ստանալու ժամանակի կուլտուրայի և գիտության կենտրոններում, դառնալ հույժ պիտանի գործիչ և ստեղծագործող մարդ, բայց ժամանակի պայմանները անկատար են թողել նրա բուռն ըդեմք՝ չնայած իր բողոքներին ու տրտումներին: Այդ են վկայում հունական կայսրին գրած նրա նամակը և պոեմներից մեկի նախերդանքի հետեւալ տողերը:—

Զի՞ հրահանգից վարժարանի  
Զեմ տակավին ներկուր բանի:  
Յաթենականըն քաղաքի.  
Զանձն իմաստիք ոչ կրթեցի

Ուր լրսարանն Պըղատոնի,  
եվ շափ ոտիւք Հոմերովնի.  
Ուր ստորոգողն Արփատուել...  
Ուր հոյլք ամեն Հըռետորի  
Ժողովարան ճարտասանի...

Շնորհալու համար Սև լեռների վանքը եղավ աթենական քաղաքը, իսկ Պլատոնի, Հոմերոսի, Արփատուելի փոխարեն՝ Տավրոսի լանջերի Կարմիր Վանքի առաջնորդ Ստեփաննոս գիտնականը և Գրիգոր Վկայակարը:

Սակայն անուսում ու անհայտ չմնաց Շնորհին: Շնորհիվ իր տաղանդի և քաղաքական այն նոր հարաբերությունների, որոնք ստեղծեցին ուուրինյանների իշխանության ժամանակ, երբ եվրոպական երկրների կողմից ճանաչվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը, Շնորհալին բարձրացավ իր դարից, նա ճանաչվեց գրացի, — դեռ ավելին, ժամանակի սովորությամբ տեղի ունեցող գիտական և գրական վեճերի ժամանակ նամի քանի անգամ զարժացնելով բոլորին պարտության մատնեց հոյն և ասորի գիտնականներին.

Այս Ներսես առաւելեալ էր իմաստութեամբ, քան զյոլովմ ի ժամանակի անդ ոչ միայն քան զվարդապետս հայոց, այլ և քան զՅունաց և յԱսորւց. այնքան՝ զի համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ ընդ ամենայն ազգս, մինչ զի իմաստասէր ոմն Կոստանդնուպօլիսեցի, անուն Թէորեալուեալ զհամբաւ նորա, բարձեալ զիրանս իւր ի վերայ գրաստուց, եկն փորձել զնա, և լսել զիմաստութիւն նորա. եկեալ զաւորս բազումն խոսեցաւ ընդ նմա, և եկիտ զնա փորձ ամենայնիւ, այլ և հոգով սրբով արցեալ. և իբրև զնաց նա ի քաղաքն Կոստանդնուպօլիսը առաջարկություն է առաջանալ այս ամենու մասին:

տանդնուպօլիս, Հարցանէին զնա և  
ասէին՝ թէ որպէս էր համբավն նոյն-  
պէս եթէ ոչ. և նա ասէ՝ որպէս լուաք,  
սոյնպէս և տեսաք. զի նոր ոմն Գրի-  
գորիոս Աստուծաբան յարոցիալ է.  
և զարմացուցանէր զամհնեսան վասն  
նորա»:

(Կիրակոս Գանձակեցի, Թիֆ. 1909, էջ 109)

Նա մեր տիսուր տարեգորության մեջ  
եղավ այն երջանիկ բացառությունը, որի  
խոսքն ույժ ու հարգ ունեցավ դրացի տի-  
րանների կողմից: Ծնորհալու ժամանակ էր,  
որ խնդիր ծաղկեց Հայ և Հույն քրիստոնյա-  
ազգերի յոթ դար տևող կրոնական առե-  
լությունը վերացնելու և ստեղծելու երկու  
ազգերի միջև կրոնական միություն: Մինչ  
Ծնորհալին Հայ կրոնավորներին դրած  
թղթերի պատասխանին էր սպասում, վե-  
րահաս մահը կտրեց նրա կյանքի թելը  
(1172) խնդիրը թողնելով անլուծելի, առ-  
կախ:

Նրա մահը խորը կոկիծ առաջացրեց Հա-  
մայն Հայության սրտերում, վշտացրեց և  
այլագիտներին, իսկ Հունական կայսրը, լսե-  
լով Ծնորհալու մահվան բոթը, Հառաչելով  
ասաց.

«Հայաստանեայք զրկվեցան իրենց կրկին  
լուսավորչէն»:

Մեծ է Ծնորհալու դերը մեր պատմության  
մեջ, առավել՝ գրականության ու երաժրշ-  
տության պատմության մեջ:

Նա թողել է մեզ գրական և երաժշտա-  
կան հարուստ ժառանգություն, քաղաքա-  
կան—պատմական, դավանաբանական  
թղթեր, Հորդորներ ու խրատներ, ներբող-  
ներ ու մեկնություններ: Սակայն գրակա-  
նության պատմության պառնասում նրան  
տեղ վաստակողը ոչ թե նրա թղթերն են,  
արշակունյաց զարմի 1600 տող շարա-  
դրանքը կամ 4000 տող կազմով «Հիսուս  
որդին»—այլ սրաի և մտքի տաղերը—120  
Հանելուկները և «Ողբ Եղեսիոյ» պոեմը,  
որի մասին ժամանակին ասվել է թե «զա-  
քահնախ ընթերցողն կշարժէ»: Թե Հանելուկ-  
ները և թե սոհմը իրենց ժողովրդականու-  
թյամբ, շերժ ու առսղ շնչով, նուրբ Հու-  
մորով հրապուրում են և այսօրվա ըն-  
թերցողին, իսկ սոհմն իր դադարական  
բովանդակութամբ ձայնակցում է արդի  
աշխարհացունց դեպքերին:

«Ողբ Եղեսիոյ»-ն ունեցել է հինգ հրա-  
տարակություն և նշանավոր «Թուղթ ընդ-  
հանրականի» հետ միասին թարգմանված  
է հվորական մի քանի լեզուներով:

«Ողբ Եղեսիոյ»-ն պատմական պոեմ է:  
Եղեսիան Միջադեմքի պատմական քաղաք-  
ներից մեկն է. նրա մասին մատենագիր-  
ները հիշատակում են, որ կառուցվել է եր-  
րորդ դարում (մ.թ.ա.): Տարբեր ժամա-  
նակներում, զանազան տիրոպների կողմից  
տարբեր անոնմներով է վերանվանվել Եղե-  
սիան: Ճողմայեցի դիմունական Պինիոս  
Ավագը անվանում է Անտիոք, մի այլ մա-  
տենագիր՝ Պալլոմեոս Խփապացին՝ Երա-  
պոլիս, որ նշանակում է սրբազան քաղաք,  
իսկ Հայ մատենագրության մեջ հիշատակ-  
ված է Ուրիշ կամ Օրհա՝ Հայ մի իշխանի  
անվամբ:

Եղեսիան սկզբում եղել է Ասորեստանի  
քաղաքներից մեկը, ապա մի քանի անգամ  
ձեռքից ձեռք է անցել—նախ Հույների,  
ապա պարսիկների ու Հոռմայեցիների ձեռ-  
քը: Ամեն մի տիրող ավելի է շենացրել  
քաղաքը և ծաղկման գագաթին է Հասել,  
երբ այն դարձել է Հայոց Աբգար թագա-  
վորի աթոռանիստը:

Ծնորհալու ապրած ժամանակաշրջանը  
միաժամանակ Եղեսիայի ծաղկման և կոր-  
ծանման ժամանակաշրջանն է, մեր գրա-  
կանության «Արծաթե դարը», որը տվել է  
մեզ ճարտարաբան ու ժամանագիր Ներսէս  
Լամբրոնացուն, պատմագիր Մատթեոս  
Առաջայեցուն, Բժիշկ Միխիթար Հերացուն,  
օրինագիտ և առակագիր Միխիթար Գոշին  
այլն:

Քաննմեկերրորդ տարին էր բոլորում  
Ծնորհալու կաթողիկոսական զահակառ-  
թյան, երբ Հալեպի Զանկի ամիրան իր  
հրոսակներով պաշարում է Եղեսիան: Զնա-  
յած քաղաքի Հերոսական դիմադրությանը  
ամիրայի զորքերը ամեն հնարով խորտա-  
կում են նրանց դիմադրությունը, խուժում  
ներս և սրի մատնում ու գերիվարում քրիս-  
տոնյա բնակչությանը:

Ահա այս պատմական եղելությունն է  
կազմում Ծնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոեմի  
բովանդակությունը, որի շարադրման կըր-  
դիցը եղել է դեպքերին մասնակից նրա եղ-  
բորորդի Ապիրատ իշխանը:

Պոեմն սկզբում է դիմանական ձեռք և  
շրավերքով:

«Ողբացէք եկեղեցիք  
Հարանուք վերին առագաստի,  
Քորք և եղբարք իմ սիրելիք  
Որք յընդհանուք՝ կողմ աշխարհի  
Քաղաք ու գեօղը՝ առհասարակ  
Ազգ և ազինք՝ որ էք երկրի,

Հաւատացեալըք Քրիստոսի  
Եվ երկրպագուք՝ նորին խաչի»:

Ապա նույն ձևով պատմական վերհիշում՝  
ներ կատարելով ողբը տարածում է նաև  
երուսաղեմի, Հռոմի, Կոստանդնուպոլիսի,  
Եզրապոսի և Անտիոքի վրա, որոնք նույն-  
պես ըմպել են Եղեսիային վիճակված դառն  
ըմպելին:

Ծնորհալին ոչ միայն ողբում է երբեմնի  
հայկական Եղեսիա քաղաքը, այլև ամբողջ  
Հայաստանի բախտը, որը մոխրակույտի  
է վերածվել արարների, հովիների, սելջուկ-  
թաթարների արշավանքների շնորհիվ, — դեռ  
ավելին, նրա ողբն ու վիշտը դառնում են  
աշխարհածավալ, երբ հոգու խորքում քըն-  
նում է աշխարհի անիրավությունները, կը-  
ոփիներն ու կոտորածները: Բայց Հայոց  
ողբն ավելի մեծ է, քան աշխարհի ցավերը,  
այդ պատճառով էլ Ծնորհալու պոեմի սե-  
վեռյալ գաղափարը Հայաստանի գրությունն  
է և նրան ազատագրված տեսնելու պայծառ  
երազը:

Նրա ողբն ու կականը դառնում են  
սրտակեղեք, երբ խոսում է Հայաստանի  
մասին: Եղեսիան և Անին, այդ «Այրի» ու  
ողբալի» քաղաքներն իրենց վիճակված  
տիսուր ճակատագրով ներկայացնում են  
Հայաստանը, իսկ Զանկի ամիրայի արում-  
րուշտ կերպարանքով՝ Հայաստանի և  
Հայերի թշնամիները:

Ռեալիստական վառ գույներով պատկե-  
րելով գեպքերի ընթացքը, դառնալով Անք  
քաղաքին, Ծնորհալին արդար հապատու-  
թյամբ, տիրաթախիծ լիրիզմով նկարա-  
գրում է Բագրատունյաց երազ ոստանը.

Բայց և ըգբեզ յայս հրավիրեմ,  
Արևելյան քաղաքդ Անի:  
Կցորդ լեռ դու իմոյս ձայնի,  
Եվ ըսփոփի՝ տարակուսի  
Քանզի երբեմն և դու էիր  
Վայելչական հարսն ի քողի.  
Մերձաւորաց յոյժ ցանկալի  
Հեռաւորաց փափագելի,  
Ծինեալ եղեր՝ տուն արքունի,  
Ընտիեալ նահանգը Շարժայի  
Բագաւորաց Բաղրատունի,  
Որ ի ցեղէն՝ Խորայէլի  
Յազգէն սիրեալ Մեծին Դաւթի  
Աստուածահօր՝ Մարգարէի...  
իսկ թագաւորք քոյ պանծալի,

Նստեալ յաթոռ՝ թագ ի գլխի...  
Հայրապետք՝ եպիսկոպոսք  
Եվ քահանայք այլք ըստ կարպի  
Յիւրաքանչիւր՝ յիւրում դասի,  
պատշաճաւոր՝ ճայն տաճարի...  
Եւ անօպուտ՝ այժմոյս քերի,  
յորոց է ոչ մի ի միջի.  
Քանզի անցին՝ ըստ երազի,  
Որպես ծաղիկ՝ ամարայնի:

Քաղցր վերհիշումները երբեմնի գեղեցիկ  
ու երշանիկ հին կյանքի տիսուր օրերում  
ավելի են դառնացնում նրա սիրու և նա  
ուզում է իր վիշտը կիսել ուրիշների հետ.

Լացէ՛ք, լացէ՛ք բարձրը ձայնիւ  
Զիս ողբացէ՛ք կողկողակի  
Եղեսիա՝ Ուռհայ քաղաք  
Որդեկորույս՝ որբ և այրի:  
Կանչէր առ ձեզ՝ ձայն կանացի,  
Կականալիր՝ ողորմելի,  
Քօլս ի գրլիսոյն՝ մերկանալով,  
Զիմ պատառեմ ծածկոյթ՝ զարդի,  
Փետրեմ ըզվարս իմ ցանկալի,  
Խըզեմ ըզհերս անխնայելի,  
Քարամբ ծեծեմ կուրծըս սրտի,  
Բաղիսեմ զերեսս իմ յապտակի.  
Նըստիմ ի սուզ ի տան մըթին,  
Որպես օրէն սգաւորի.  
Եւ փոխանակ որդուն զգեստի,  
Սև ըզգենում գոյն տիսրալի,  
Հեղում արտօսր անշափելի,  
Ցորդ և առատ՝ նըման գետիօ:

Որդեկորույս մոր պես նա ողբում է իր  
վաղեմի կյանքը, շեն ու երշանիկ համե-  
րաշխ կյանքը, բերրի հողը, ծաղկուն բու-  
րստանները, նուրբ ու գերահրաշ քան-  
դակներով զարդարուն երկնասլաց եկեղե-  
ցիները, տոնավաճառի հրապարակները և  
այլն:

Ծնորհալին վառ ու գունեղ գույներով  
նկարագրում է քաղաքին սպառնացող ամ-  
բողջ վտանգը, երկու թշնամի կողմերի  
ուղղական գործողությունները, քաղաքի  
Հերոսական պաշտպանությունը, մահը  
պարտությունից գերադասող մարդկանց,  
որոնք ողերում, հորդորում ու հույս են  
տալիս միմյանց, —

Քաջալերեր՝ հայրըդ զորդին,  
Որդիքն ի մարտ՝ պատրաստէին.

Անդ ոչ իշխան էր պատուական  
եվ ոչ կըրտսեր ի տեղ վերջին,  
Այլ միաբան և հաւասար:

Քրիստոնքա հայ, Յուլին, Հոռմայեցի,  
ասորի Հոգևորականները ձեռքներին խաչ և  
սուր ժողովրդի գլուխն անցած առաջնոր-  
դում էին դիմագրավելու թշնամուն և իրենք  
էին ցույց տալիս անձնուրացության առա-  
շին օրինակները.—

«... Յոգումց ի հանդիսին  
Յաղթող գըտաւ յասպարիսին  
Անձամբ տուեալ զանձն իւր ի մաշ  
Իր օրինակ հօտից նորին»:

Բայց թշնամին մոլեգնում է պարիսպնե-  
րից դուրս. քաղաքը գրավելու համար նա  
դավեր է նյութում, անձնատուր լինելու,  
բարեկամաբար վարկելու առաջարկություն-  
ներ է անում, այնուամենայնիվ, ոչ մեկը  
հաղթություն չեն բերում նրան: Եթե ընշա-  
քաց և գեղեցիկ գերիների ծարավ զինվոր-  
ները լսում են ավարի կոչը, նրանց մկան-  
ներն ուշչում են մի վայրենի ուժով, թունդ  
են առնում նրանց սրտերը, փոթորկվում ու  
մոլեգնում է նրանց խուժդուժ ամբոխը:

Գոշեաց սաստիկ զօրականին,  
Ի սուր յաւար ի գերութիւն,  
Ասաց լինել՝ զամենեսին:  
Եւ զայն լուեալ հագարացին,  
Անթիւ զօրաց բարբարոսին,  
Իրրու զեռանդ պտութքին,  
Շրջան առեալ, ջուրչ քաղաքին,  
Եռմամբ եռեալ, տաղնապէին,  
Մի առ միով՝ արշաւէին:  
Փողս և գոսերս գոշէին,  
Իրրև յամպցն որոտային,  
Զայնս ահապինըս հընչէին,  
Մինչ զի զերկիր դըղըրդէին»:

Նրանք խլուրդի պես փորում են պարսպի  
շիմքերը, ներխուժում քաղաքը և անգլորեն  
թրատում անմեղ քրիստոնյաց բնակչությանը:

Ծնորհալին տրագիկ շնչով ու մեծ ցավով  
է նկարագրում այս եղենը.—

... Աստանօր սիրտ իմ ճըմլի  
Երիկամունքըս գալարին.  
Յաւ հարկանի որովայնիս,

Միտք և Հոգիս իմ ալլալին.  
Մինչդեռ լիշեմ զօրն ահապին  
Եւ զառաւոտն մըթագին...

Մարգարէմբն գաղանաց  
Բզսայրասուրըն քամէին,  
Եւ որպէս գայլք ի հօտ գառանց  
ի մէջ նոցունց անկանէին,  
Առհասարակ կոտորէին,  
Արեան վտակըս հոսէին  
Ջերիտասարդուս և ըգմանկտիս  
Անիմայտակես խողխողէին,  
Յալիս ծերոց ոչ խնայէին  
Եւ ոչ հասակըն տղային...  
Ոչ ի պատիւ քահանային  
Ոչ աստիճան Հայրապէտին  
Դրստերքն ի մարց լային գրկին  
Եւ ընդ լալոյն նըւաղէին.  
Մարքն ըգտղայսըն գրկէին  
ի միասին մեռանէին»:

Թշնամու նկատմամբ ունեցած խորը և  
ուժեղ ատելությամբ Ծնորհալին նզովում է  
բույր կողմերով տմարդի, արնաթաթավի,  
թաթերա ու երգմնագանց Զանկի ամիրային՝  
անվանելով նրան դարանակալ գալ ու օձ,  
խլուրդ ու մուկ, իսկ զորքը՝ գայլի ցեղ և  
այլն: Անգութ ու բերանն արնուտ թշնամին  
չի ճանաշում ոչ մի սրբություն: Միջնա-  
բերդի գոները բացելուց հետո նա սրի է  
քաշովմ անմեղ քնակչությանը, երեխաններին  
ու ծերերին, ծալլը ու ծանակի է ենթարկում  
հոգևոր հայրերին, պղծում է տաճարները՝  
դարձնելով գոմ ու ախոռ, ոտնատակ է  
տալիս նրա մասունքներն ու սրբություն-  
ները, թալանում է նրա հարստությունները:  
Ծնորհալու «Ողբ եղեսիոյ» պոեմի մէջ մի  
զգացումը տեղի է տալիս մի որիշ զգաց-  
ման: Աշխարհացավ զգացմանը հաջորդում  
է իր իսկ ժողովրդի ցավը, ովքում է նրա  
բախար, հապարտանում է անցյալով, կա-  
րոտում ու թախծում է, ովքորում է ու  
ովքում, հերտություն է ներշնչում ու քարո-  
զում, անմահացած է համարում հայրենիքի  
համար զոհվածներին.

«Բայց դուք, որդի՛ք իմ սիրելիք,  
Զէք ինձ մեռեալ, ալլ կենդանիք.  
Քանզի յերկրի հաւատացեալը  
Եվ ի երկինըս պըսակիք...  
Ի ձմերայնի վաստակեցիք,  
Յանձրեարեր՝ սերմանեցիք:

«Ուր Եղեսիոյ», պոեմը լինքանում է հայ ժաղացականութիւնի վարդապոչն ապագայի նկատմամբ խորը համատով, ժառ հույսերով ու շանկություններով։ Ծնորհալին ցանկանում է տեսնել Հայրենիքն ազատ և աշխարհով մեկ ցրլած հայերը ի մի գումարված։

«...Ընդոր խնդամ՝ և ցընծացած  
Գիրկու ուրկանեմ զըվարձացած,  
եւ զտիրական զգեստ մերկացած  
Կարմիր կանաչ գոյն զգեցած...»։

\*\*\*

Ասացինք որ Ծնորհալին թողել է մեզ 120 շատ հանելուկ, որոնք դաստիարակչական և ուսուցողական մեծ նշանակություն են ունեցել տարիներ շարունակ և այժմ էլ խոշոր նյութ կարող են ծառայել մեր մանկավարժության պատմության համար։

Հանելուկների լեզուն հաղթանակի ցուցանիշն է այն պայքարի, որ դանդաղորեն տեղի էր ունենում սկսած 5-րդ դարից դրաբարի և ուամկական լեզվի միջև, ապա 12-րդ դարում շնորհիվ համարակական և քաղաքական կյանքի նոր տեղաշարժերի, այդ երեսությը այնքան է ուժեղանում, որ դրաբարի խոսակցական շրջանը՝ պարփակվում է միայն վանքի շրջանակներում, իսկ այսպիս կոչված միջին հայերենը կամ աշխարհիկ լեզուն, այնքան է ուժեղանում, որ նույնիսկ ոուրինյան թագավորներն ու իշխաններն իրենց հրամաններն ու գրությունները գրում են այդ լեզվով։

Դրոզները դադարում են վերացական թեմաների մասին գրել, իսկ գրականության նյութ են սկսում ծառայել, իրական, կոնկրետ ու շոշափելի կյանքի երեսությները։

Գրական կյանքում երեան են գալիս մինչև այդ չեղած գրական միանգամայն նոր ձևեր՝ հանելուկներ, առակներ, էրոտիկ բանաստեղծություններ և այլն։

Հոռմկրա բերդի պահանջները իրենց անքուն գիշերները անց էին կացնում բամբառակ զվարձախռություններով։ Եվ ահա բերդում անցկացրած տարիներին Ծնորհալին հղանում է գրել ժողովրդական լեզվով Հասկանալի հանելուկներ։

«...Եւ զի յամենայնի հանճարեղ էր

Ներսես,  
Աբար և առակս խորհրդաբար ի գրոց,  
Զի փոխանակ առասպելեաց՝ զայն՝

առասցեն  
ի գինաբում և ի հարսանիս»\*):

\*.) Կիրակոս Գանձակեցի, Թիֆլիս, 1909 թ., էջ 140—141.

Ծնորհալու հանելուկներին նյութ են Հանդիսացել թե կրոնական պատմությունները և թե իրական կյանքում գոյություն ունեցող իրերն ու երեսութները՝ ընտանի և վայրի կենդանիները, աշխատանքի գործիքները, երկնային մարմինները, տարվա եղանակները և այլն։

Եթե Ծնորհալու մյուս ստեղծագործությունները ավելի վերացական են, երկարաշունչ և դժվարըմբռնելի, ապա ժողովրդական ստեղծագործության ձևով գրված այս հանելուկներն ավելի կոնկրետ են, սեղմ, զյուրքըմբռնելի ու երկար ժամանակ մնում են հիշողության մեջ։

Աշխարհիկ բովանդակություն ունեցող հանելուկները սրամիտ են, խոհուն և արտահայտում են ժաղովորդի մեզմ ծիծւզրացարժի, իրերի և երեսութների վրա։ Նրա հանելուկների մեջ հուշիկ քայլող պարանը հետից կախ, ոսկե բարձերին մոտեցող կինը կատուն է, խորասան գնացող մեկիկ հատիկ շալակած քարավանը մրջյուններն են, գումար՝ շտեսնված գինեխում, զիրքը՝ աև համերով լցված տուն, որոնք խոսում են մարդկայնորեն, կեռ վզով սագը՝ տունը ավագակներից փրկող, իսկ կրիան։

«Չորքոտանի է զետ ըզշուն  
Ու ձու ածէ զետ ըզթըռչուն,  
Խոտ նա ուտե զետ զանասուն,  
Ունի մըզկիթ և ոսկրէ տուն»։

Զափազանց սիրուն ևն տարվա եղանակների մասին հյուսվածները, որոնց մեջ նկատվում են Ծնորհալու կյանքի սերը և լավատեսական տրամադրությունները։ Գարսունը նրա հանելուկներում առզվոր տղան է, որը հագնում է կանաչ զիպակ, իսկ լեզուն քաղցր, անքուն մեզուն հրաշք ծաղիկներից իր տունն է շինում, աշունը հրեղն մանուկի կերպարանքով հնձում է խոտը, իսկ ձմեռը դժոխի կերպարանքով սպառում է բոլոր ծառերի մրգերը և տիսրեցնում երեխաններին։

Երիտասարդների համար գրված Հանելուկներում խաղողի, գինու և վայելքի գովքն է, ցորենի և հացի գովքը։

«Մեռանիմ և մահանամ,  
Գարձյալ յառնեմ կենդանանամ,  
Զաշս ի երկինըս համբառնամ,  
Բազմաստեղօք պայծառանամ»։

Մեր ժողովուրդը սիրել է միշտ քեզ ու հանդիս, սիրել է նուար, խաղողը, նրանց քանդակներով զարդարել է երկինք քերող իր հոյակապ բերդերի ու տաճարների ճակատներն ու խոյակները: Նոան և խաղողի գինով նա բաց է արել իր սեղանը, նրանով պայծառացրել իր հոգին, խեղդել է ամեն մի վիշտ: Բայց հայրենիքի վիշտը լողացել է դուրս, տանջիլ է նրա հոգին, ուազի դաշտ է տարել նրան: Նույն գինով, որպես մայրենի կաթ, ուժ են առել նրա մկանները, և նա զարկել է թշնամուն, քշել իր սահմաններից դուրս:

Գինու զովքը երկինք են հասցրել մեր երկինքները, ստիպել են խմել ուրիշներին և խայմի պես զարմացել են անխելք գինի վաճառների վրա, որոնք ծախում են աշխարհի ամենաթանկ բանը և անպիտան իրեր գնում: Եվ ահա Շնորհալին էլ դնա-

լով ժողովրդական խրախճանքի ճանապարհով, իր ռամկական լեզվով գրած հանելուկների երակները լցրել է գինով ու սիրով, սրամտությամբ ու բարի ծիծաղով:

«Բզջուրն հըրոյ նըման տեսայ նա և պայծառ քուն զլուսընկայ, Քան դժիրանի ծով կուծուփայ, Շատոց արիւն հեղեալ է նայ, Կամ նոան մասին ասվածը,

«Ե նա կանաչ կոճակ բոլոր, Անապակ գինով լցած տըկձոր, Կարմիր մեղուք ի ներս աղուոր, Եղբա՛յր, դու կեր զինչ մեղրի ծոր»:

Ներսես Շնորհալին հանճարեղ Գրիգոր նարեկացուց հետո մեր վերածննդի ականավոր ցեմբերից մեկն է:



## ԳԱՄԱՌ-ՔԱՐԻՊԱՅԻ ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

### Դ Ա ՞ Չ Պ

Յամքած ոսկոր, ո՞ւր է հոգիդ, ինձ ասա,  
Շիշած հնոց, ո՞ւր է հուրդ առաջուա.  
Վանդակ, ո՞ւր է քու քաղցրախոս թոշոնը,  
Ինչո՞ւ այդպես նա շուտ թողեց յուր բունը:

Լուս ես կեցել, ինձ չես տալիս պատասխան,  
Քու բերանը մահը կնքեց համբայան,  
Եփտքը հեռու, հոգիս խոռվ, մոլորած,  
Քեզ ակնապիշ ես նայում եմ զարձուրած:

Ո՞վ էր արդյոք քու մեջ մեկ օր բնակում—  
Աղքա՞տ, հարո՞ւտ, տե՞ր, ծառա՞”, լի  
կույս սիրուն.  
Դիտե՞ր, արդյոք, ինձ անծանոթ քու հոգին,  
Ինչպիս սիրել, հուսալ կամ լալ դառնագին:  
Ի՞ւ անզգա, ինչպիս որ դու ես հիմի,  
Ամեն ազնիվ մտածմունքի թշնամի,  
Անմարդամոտ, առանձնացած, անօգուտ,  
Ազգա՞, ժլատ, արժաթասեր և անզութ:

Դուցե լիներ նա օրիորդ գեղեցիկ,  
Վառ աշերից թափում լիներ սեր գողարիկ,  
Առմ պատանի աղեղ կուախն սիրահար,  
Յուր ալենոր ծնողաց միակ միտիթար:

Դու դարձել ես հիմի անշեն անապատ,  
Բռն են շինել քու մեջ սողունն ու միջատ.  
Անխղճմտանը ծածկել են որդունքը,  
Քու ճակատը, քու ծոծրակը, քու քունքը:

Ասա, ո՞ւր են ցոլուն, փայլուն աշերիդ,  
Ո՞ւր են կարմիր փարդի նման թշերդ.  
Գանգուր մազրդ փունջ քնիկած  
ուսերիդ,  
Հետքը անզամ չեն մնացել պեխերիդ:

Կանցնի վերադ քանի տարի, ո՞վ գիտե,  
Ալդ կմախքն էլ, գուցե, մի մարդ չի գտնի.  
Դու բնության օրենքին չես դիմանալ,  
Թե ուշ, թե վաղ անշուշտ պետք է հող

Բայց դու առա, ո՞ւր է հոգիդ, ո՞ւր թուավ,  
Կա՞ նա այժմ, թէ... նա էլ քեզ հետ  
մեռավ...

Բայց դու լուս ես, ինձ չես տալիս  
պատասխան,  
Քու բերանը մահը կնքեց համբայան:

1854 սեպտեմբ. 25, Մոսկվա.

—●—

Այս բանաստեղծությունը մենք հանել  
ենք մեր մի տակավին ձեռագիր մնացած  
աշխատասիրությունից, որ ունի «Ծագաւ-  
իւ Պատկանյանի վաղեմի բանաստեղծու-  
թյունների քննական ուսումնասիրության  
մի փորձ» խորագիրը:

Բանաստեղծությունը գրված է 1854  
թվին, ստորագրություն չունի, բայց մենք  
հիշալ ուսումնասիրության մեջ դրա վե-  
րաբերմամբ եկել ենք այն եղրակացության,  
որ ի նկատի առնելով լեզուն և գրելու ե-  
ղանակը, այդ 54 թվին կարող էր գրած լի-  
ներ միայն Պատկանյանը: Իսկ որ դա մին-  
չե օրս տպագրված չի եղել, այդ երկում է  
այն հանգամանքից, որ դա մտած չէ և բա-  
նաստեղծի լիակատար համարված տիկին  
Վարլիանի Փանանյանի Գրիգոր Խալաթյանի  
խմբագրությամբ եղած Հրատարակության  
մեջ: Պետք է կարծել, որ Խալաթյանին էլ  
Հայտնի չի եղել դա. մենք էլ գտել ենք այդ  
մի աշուղական տետրակում, որ նվիրել է  
մեզ մեր բարեկամ Գրիգոր Շերմազանյանը:  
Տետրակի մեջ գտնվում են հատկապես  
Պատկանյանի «Աշուղ Կարապետ» կեղծ  
ստորագրությամբ գրած բանաստեղծու-  
թյունները:

b. ՇԱՀԱԶԻՋ

## Ե. ՇԱՀԱՅԻԳ

## ԲԱՆԱՏԵՂ ՌԱՔԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԼԱԴՍՈՒԻՆ ԵՎ ԴՐԱ ՊԱՏԱԽԱՆԸԸ

1890 թվի դեկտեմբերին, ամսաթիվը շենք հիշում, նոր նախահանում լուր տարածվեց, թե բանաստեղծ Ռ. Պատկանյանը մի աղերսալից թուղթ է ուղարկել հանրահուշակ Գլադստոնին օգնության ձեռք մեկնալու թյուրքիայի հայերին, բայց թե ի՞նչ էր զրել, այդ ոչ ոք չդիմեր, այդ մասին, գոնե, ոչ ոք չեր խոսում: Մարդիկ այդ մասին արդեն գաղտնաբար էին խոսում, լուրը հաղորդում էին միմյանց ականջի շնորհվել, մի առանձին խորհրդավորությամբ և այնպիսի կցկուտը եղանակով, որ, բնականաբար, շատ բան չեր կարելի հասկանալ:

Ավ մի քանի ժամանակ այդ լուրը խոսկովի առաջարկական տրվեց: Որ թուղթն ուղարկվել էր, այդ մասին կասկած չէր կարող լինել, որովհետև այդ մասին խոսում էին և այնպիսի անհատներ, որոնցից Պատկանյանը գաղտնիք շպետք է ունենար, բայց թե ուղարկված թուղթը իր ժամանակին տեղ հասել է թե ոչ, և, եթե հասել էր, ի՞նչ պատասխան էր ստացվել, այդ շիմացվեց, անհայտ մնաց:

Անցավ ժամանակ, և, վերջապես, հայունը վեց, դարձյալ խիստ գաղտնաբար, թի պատասխան ստացվել է, և դրական պատասխան, բայց այդ մասին շպետք է խոսել, խորագույն գաղտնիք պետք է պահել: Դրանից հետո և բանաստեղծի թուղթը, և ստացված պատասխանը, և դրա հարակից բոլոր հանգամանքները կորցրին իրենց շահեկանությունը և այդպես էլ գաղտնիքը մնաց գաղտնիք և հանգամանուն ոչինչ շպարզվեց:

Եվ ի՞նչ պիտի պարզվեր: Ավելի խոր ավելի լուրջ մտածող մարդկանց համար հասկանալի էր, թե ի՞նչ պիտի գրած լիներ Պատկանյանը և ի՞նչ պատասխան ստացած: Պատկանյանի կողմից՝ ինդիքք, աղերսանք, Գլադստոնի կողմից՝ մի քաղաքաբարի, բարյացակամ խոր, ուշադրություն, որ կարող էր և արդարանալ և շարդարանալ:

1891 թվին մենք առիթ ունեցանք տեսնել Պատկանյանին կիսլավողակում, ուր եկել եր նա բժշկվելու իր օրեցօր սաստկացող

վարանգավոր հիվանդությունից և այն մտերմական հարաբերությունն ունենալ նրա հետ, որի մասին մենք արդեն խոսել ենք մեր նրա մասին գրած «Հիշողությունների» մեջ (տես «Իմ հիշողությունները Ռ. Պատկանյանի մասին», Տարագ, 1901 թ. Համարներ— 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 19, 20, 23, 24, 25, և 26): Այստեղ մենք խոսակցություն ունեցանք և հիշյալ գրագրության մասին: Նա դեռ չեր կորցրել իր հույսը և անհամբեր սպասում էր «Մեծ մարդու խոստմունքի իրագործման և ըսպասում էր հաստատուն, վառ հույսերով: «Գաղտնապահություն, գաղտնապահություն, Աստծու սիրուն համար», անդադար կըրկում էր նա, «Թի չէ, մենք կորած ենք»:

«Ե՞ս, ի՞նչ պիտի գրեի ես», ասում էր նա, «զա մի ցաված սրտի հուսահատ աղաղակ ու հիշ էր, որ ես հասցրի նրան— համառոտ նկարագրությունն «թյուրքահայաստան» կոշված զժոխիք, որի հանգամանքները ձեզ էլ անկանկած հայոնի են, օգնություն թարանձնեցի վերահաս վտանգից»:

Մենք ասացինք, որ Պատկանյանը չեր կորցրել իր հույսը և սպասում էր հաստատապես, վառ հույսերով «Մեծ մարդու» խոստման իրագործման և այդպիսի շիրմ հավատով էլ նա մեռավ 1892 թվի օգոստոսի 22-ին և իր հետ գերեզման տարավ և իր միամտաբար տածած հույսերու:

Գլադստոնը, անկասկած, հայոնի մարդ է եղել, նշանավոր պետական գործիչ. նա իր պատասխանը Պատկանյանին գրելու պահին իրոք առցցած է եղել վճռականությամբ և վերահաս վտանգի ժամանակ արել է այնքան, որքան կարողացել է, որքան հնար է եղել: Նա Զեստերի միտինգում՝ 1895 թվի հունիսի 26-ին, կիվերպուի միահնգում՝ 1896 թվի սեպտեմբերի 26-ին և Հայուարդնում՝ 1897 թվի հունվարի 6-ին առլիթան Արդուլ Համբիդի կառավարության բռնած ընթացքը հայերի վերաբերմամբ ամփոփելով շորս խոսքի մեջ— կողոպուտ, սպանություն, բռնություն և լիկունն, և ուշ է արել շնավատալ սուլթանի խոստումներին, հրավիրել է պաշտպան հանդիսանալ հայերին, հիշեցրել է Անգլիայի կառավարության այն պարտականությունները,

որ նա հանձն էր առել Հայերի և Հայատանի հանդեպ, նշավակել է Ելրոպայի բռնած ընթացքը, նրա գործադրած միջոցների, դիվանագիտական գործողությունների անգործնականությունը և ընդհանրապես մեծ պետությունների պարտազանցությունը և մեկմ վարժունքը և, վիրջապես, շպրտել է սուլթանի հասցեին «Մեծ մարդասպան» զարձուրելի որակումը, որով և վառել է ամենուրեք գութ ունեցող մարդկանց սրտերը: Բայց նա իր այդ համարձակ ելույթներով, կրակու և աշք ծակող խոսքերով անկարող է եղել շարժել ոչ միայն մեծ պետությունների կառավարությունների գլուխ կանոնած մարդկանց սրբաւրը, որոնք, Բենվինի վեհաժողովի դաշնագրության համաձայն, պարտականություն էին ստանձնել պաշտպաններու հայերին, բարենորոգումներ մտցնել տալով սուլթանին հայաբնակ վիլայեթներում, այլ և յուր իսկ հայրենիքի կառավարության, որ կրկնակի պարտականություն էր ստանձնել և հիշյալ դաշնագրության զորությամբ մյուս պետությունների հետ միասին, և Կիպրոսի կոնվենցիայով առանձնապես:

Այդ բոլորը նա արել է. նա նույն արել էր և բուլղարների համար 1876 թվին, գրելով՝ յուր նշանավոր «Բուլղարական արշավիրքները» և նշավակելով թյուրք կառավարության նորյանպիսի ընթացքը:

Նրա արդարացի բողոքները հարկական արշավիրքների գործում ուղղած են եղել ընդհանրապես Ելրոպայի գեմ և մասնավորապես Անգլիայի կառավարության գեմ:

Գլազուտոնը, անկասկած, քաջ ժանոթ է եղել թե՛ Բենվինի վեհաժողովի հանդամանքներին, թե՛ հայկական ուժքորմների խնդրին և թե՛ այդ ուժքորմները հայաբնակ վիլայեթներում իրագործելու վերաբերմամբ բռնած ընթացքին. նա, անշուշտ, իր պրեմյերության ժամանակները ճիշտ տեղեկություններ ստացած կիներ իր Պոլսի դիսպանից Հայաստանում օրեցօր կատարված և կատարվող իրագարձությունների և սուլթանի ուժքորմների խնդրիը փակած լինելու համար ծրագրած և հետզհետե գործադրված և գործադրվելիք միջոցների մասին:

Թեև Գլազուտոնի հետին թվով թափած աշխատանքից ու ճիգերից ոչ մի դրական արդյունք չի ստացվել, բայց և այնպես նա սրժանացել է ժամանակի հայության երաժշտագիտության հենց միաւն յուր խիզախ ճշմարտախոսության համար, յուր

Հայրենիքի կառավարության և մյուսներին իրենց ստանձնում պարտականությունները գիտակցելու և կատարելու հորդոր կարգավոր համար:

Նրան նվիրաբերվել է մի հայերեն հին մագաղաթյա մանրանկարներով գարդարված թանդարժեկ ձեռագիր ավետարան, մի հայկական արվեստի գեղեցիկ գործ, որ նա այնքան սիրել, հավանել ու դնահատել է, որ պատվիրել է դնել այն յուր կրծքին, երբ ինքը վախճանվի: Եվ մենք մեր շնորհակի թարգմանիչ Փիլիպոս Վարդանյանի պրքերի մեջ տեսնել ենք մի անգլերեն գիրք, նվիրված նրա կյանքին ու գործունեության, որի մեջ և նրա մի պատկերը գագաղի մեջ հիշյալ ձեռագիրը կրծքին: Որքան մենք դիտենք, Փիլիպոս Վարդանյանն է եղել, որ 1897 թվին հատկապես քաջ ուսած լինելով անգլերեն լեզուն, թրիլիսից տարել է այդ ընտիր ընծան, ներկայացել Հառարդընում, ձեռքը համբուրել և մատուցել նրան:

Հայտնի Առաքել Ապեր Շատուրյանը, որ զնացած է եղել Վարդանյանի հետ Անգլիա, յուր ծախով Անգլիայի լավագույն նկարիչ Ֆրամիտոնին նկարագարդել է տվել Հառարդընի եկեղեցու 21 ոտնաշափ բարձրություն ունեցող լուսամուտը, քաշել տալով նրա վրա Բարդուղիմեոս առաքյալի և Գրիգոր Լուսավորչի մեծադիր պատկերները՝ ի հիշատակ Սասոն նահատակների:

1897 թվի հունվարի 6-ին, երբ Հառարդընում կատարվել է հիշյալ լուսամտի բաշման և տիկին Գլազուտոնի ծննդյան 85-ամյակի տարեկարձի առթիվ կազմված բնուանեկան հանդեսը և վերջին անգամ Գլազուտոնը խոսել է հայերի մասին (նա վախճանվել է 1898 թ. մայիսի 6-ին), Հնդկաստանի և Կողմիների հայերի կողմից սվերվել է տիկնոջը Մկրտիչ կաթողիկոսի պատկերը:

Անցան տարիներ. ցարական իշխանությունը տապալվեց և Դոնի նահանգում ևս, ինչպիս Ռուսաստանում, ամենուրեք համատվեց և որհրդացին իշխանությունը:

Նոր նախիջևանում ձեռնարկվեց պատմական արժեքավոր իրեր հայվակելու գործին, և առաջին հերթին ստացվեցին Ռաֆայել Պատկանյանի և Միքայել Նալբանդյանի թղթերը, գրքերը, իրերը, որոնք, մինչև այդ, տարիներից ի վեր խնամքով պահպում էին նրանց ժառանգների մոտ— առաջինը՝ բանաստեղծի որդի Եղիշենիոս Պատկանյանի մոտ, երկրորդինը՝ յուր Եղիշենի (Գրիգորի

որդի) Հարություն Նալբանդյանի մոտ Այդ իրերը և թղթերը հետո, 1922 թվին, Շրջանային թանգարանի մյուս բոլոր մինչև այդ հավաքված իրերի և նոր Նախիչևանի եկեղեցիներից առնված բազմաթիվ (400 հատ) հին, թանգարժեք ձեռագիր մատյանների հետ միասին մեր ձեռքով փոխադրվեցին Հայաստանի Պետ. թանգարանը:

Այսուհետ, ահա, Պետ. թանգարանում Պատկանյանի թղթերը չուկելու, դառնավորելու և ցուցակագրելու ժամանակ մենք առաջին անգամ առիթ ունեցանք տեսնելու և կարդալու Պատկանյանի վերոհիշյալ թուղթը Դադումտոնին, դրա պատասխանը անգլերկան բնագրի հետ միասին և դրանց վերաբերյալ գրագրությունը: Թուղթը երկու օրինակ էր՝ մեկը արտագրություն, առար ձեռքով կատարված բնագրից, մյուսը՝ սպարզագրված և մաքուր պատրաստված օրինակ, գրված յուր բանատեղի ձեռքով մի մեծագիր՝ փոստի նուրբ թղթի վրա: Թղթի այդ օրինակները, ակային, թեև ընդհանուր իմաստով միևնույն բովանդակությունն ունեին, բայց տարբերվում էին միւյանցից իրենց խմբագրությամբ:

Թե բանատեղը դրանից ո՞րն է ուղարկած եղել Գլադումոնին, մենք դժվարանում ենք ճշտությամբ որոշել, բայց հավանական ենք համարում, որ ուղարկված ինք եղիւրորդը, յուր ձեռքով գրածը, որովհետև դա ավելի մեղմ ոճով, տեղին ու հանգամանքին վայելու լեզվով է դրված, քան առաջինը:

Թուղթը, ինչպես մենք արդեն ասել ենք, ուղարկվել է 1890 թվի գեկտեմբերին, բայց դա, ինչպես երեսում է, շատ առաջ է զիված եղել: Այդ մասին մենք նույնամատում, գրված Մուկվաչից 1886 թվի գեկտեմբերի 29-ին Խաչուտուր Զալիսուշյանին, կարդում ենք հետեւուր. «Գրեցի՞ր արդյոք Փորտուգալիանին ֆերան նամակի հրատարակման մասին»: Այսօր, վաղը Գլադումոնը կիրումարինե Սալուտաբյուրին է մեր գործը նրա ձեռքը կանցնի: Ծովագերնուելու Փորտուգալիանին, որ նա ջանա ու միայն տպելու «Ալումինիամի» մեջ, այլ և Սուրբանի տնից եղեն, ֆանսիերեն, գերմանիեն է մե ոռենուն, ինչպես վայիշ է, թարգմանությամբ՝ Հանդերձ, իրեն՝ Գլադումոնին ճամբեր»:

Դա նոր Նախիչևանցի, համիլրյան դրացի աշակերտ, Նախիչևանի նոտար և արհեստավորական դպրոցի հոգաբարձության նախագահ Խաչատուր Զալիսուշյանը՝

Ու Պատկանյանի շատ մտերիմ բարեկամն էր, այնքան մտերիմ, որ այնպիսի գաղտնապահությամբ ստացված թղթի պատասխանը նա միայն հարկավոր էր համարել առաջին անգամ նրան հաղորդել, և այդ մի առանձին խորհրդավորությամբ հետևյալ համառոտ տողերով. «Ազնիվ բարեկամ, և. և. (Խրիստափոր Խրիստափորովիլ), ուշարկում եմ քեզ պատճենը... և երգմնեցնում եմ գաղտնիք պահելու նրա բովանդակությունը, եթե չուզես մեր աշխարհի հիմն ի վեր կործանումը, վասնդի Գլադումոնի առջև «ոոլեց» Երևանալը (նա դադանիք և համեստություն կիրատե, իբրև գործի Հաջողություն) կնշանակի առ միշտ Խորուսանի հաւեական խնդիրը»:

Թղթի թարգմանողն անգլերենի և մատուցողը մի հանձնարարականով Գլադումոնին նղել է Օքաֆորդի համալսարանի թուրք և հայ լիգունենի ուսաւու՛ արանից տարիներ առաջ շնորհած թուրքահայ Կարապետ Հաներանու ու վաղուց ի վեր հաստատված էր մշտական բնակությամբ նախ Մանշեստրում և անա լուղոնում. Նա ըաջ տիրապետում էր անգլերենին և շատ հայտնիք էր: Թուղթն ուղարկված է եղել մի նամակով, որի ևնունում ստացվելը, անգլերենի թարգմանվելը և մի հանձնարարական նամակով Գլադումոնին մատուցվելը և այլ մանրամասնությունները կարելի ե տեսնել և իմանալ հիշյալ Կարապետ Հակոբյանի պատասխան նամակից, որ դնում ենք այստեղ:

#### «1 Հունվար

Առ սիրելի և աղնիվ բարեկամին Տյառնաֆայել Պատկանյանի

#### ի նոր Նախիչևան

Ստացա զեկտեմբեր (Ե. Տ.) 22-ին ձեր դիկտ. 1/13 թվականով գրած պատվական նամակն և նաև ներփակած Մեծանուն պարոն Գլադումոնի ուղղյալ հիշատակագիր դրությունը:

Պատիվ ունեցա նաև ստանալու ջեր դիկտ. 7/19 թվականով երկրորդ պատվականը:

Աւրախ պիտի լինիք իմանալու, թե երեկ ավարտելով ջեր հիշատակագիր թարգմանությունը անգլերենի, առաքեցի զայն ընդ մի մասնավոր նամակով գրեալ իմ կողմանի վասն հանձնարարության ձեր անձին և գրության: Օրինակեցի ձեր հայերենի բնագիրը, ինչպես նաև նորա թարգմանության պատճենը: Բնականաբար այս գործողու-

թյունը օրեր սպառեցին և չկարողացա ձեր գրությունը ավելի կանուխ հասուցանել պարոն Գլադստոնին ձեռքը, որ ինչպես Հայոնի է, այժմ կդանվի շուր գեղային բնակարանը Հառնարտըն Քամթըլ, Չեսթր քաղաքի մոտ: Այս օրերս շտեսա Չերազն, բայց կտեսնամ զինքը այսօր, վաղը, Պիտի շանամ Չեր գրությունը հրատարակել տալ Տելի նյուզի մեջ, սակայն կվախենամ, թե ուր ընդարձակությունը պատճառ լինի յուր ամբողջությամբ Հրատարակվելուն: Դուցե ավելի օգտակար կլիներ զայն իր brochur տպել ու հետո ցրվել: Դեկտ. 29-ը պարոն Գլադստոնի 82-րդ ծննդյան տարեդարձն էր և այս երեք օրերու մեջ 1400 շնորհավորության նամակ է ստացել Անշուշտ, այս պատճառավ Չեր նամակին շուտով չպատասխանեցի, բայց ես խոստացա ձեզ հասցնել յուր տալիք պատասխանը: Չեր անունը պիտի շծածկեմ, այլ պիտի հրատարակեմ: Չեր այս փափառը իրան ալ հայտնած եմ: Մարտելու «Արմենիա» յուր խմբագրի հիմանդրության պատճառով հրատարակվեր ատենե մը ի վեր. Չեր հայերենը անոր պիտի առաքեմ:

Գաղղիերեն թարգմանելու և ցրելու մասին հուսամ այդ օգնությունը տյար Չերազ ստանձնեն: Կիսնդրեմ, հաղորդե բարեներս պարոն Մ. Սկիդարյանին, երբ տեսնաս զինքը, Չեզ և բոլոր բարեկամաց և համակրողաց շնորհավոր նոր տարի կմաղթեմ:

Ողջ լեռուք և Հայաստան Աստվածն լինի Չեզ պաշտպան և ներշնչող և մեր մեծ նախնիք հետևելի օրինակ:

#### Կրտ. Հակոբյան»:

«Հ. Գ. Ներկայիվս պիտի ընդունեք: մեր Մանչեստրի միտինգի ստորագրությունը և նաև նուպար Փաշայի մի գրությունը»:

Պատասխանը ստացվել է հունվարի 9-ին: Դա բաղկացած է եղել երկու նամակից՝ թուն պատասխանը գրված Հակոբյանին Պատկանյանին հաղորդելու համար, և մի բացատրական նամակ գրված իրեն՝ Հակոբյանին: Այդ երկուսն էլ Հակոբյանը թարգմանելով հայերեն, իրենց անգլերեն բնագրի հետ միասին յուր մի երկրորդ նամակով հունվարի 5-ին ուղարկել է նոր-նախնիք հայերեն՝ Պատկանյանին: Դնում ենք այստեղ, թե Հակոբյանի այդ երկրորդ նամակը և թե բուն պատասխանի ու դրա բացատրականի թարգմանությունները:

«Մեծապատիլ և աղնիվ պարոն Ռաֆայել Պատկանյան ի նոր-նախնիքիան

Պատիլ ունեմ հաստատելու ամսույս ունի գրածս:

Ամսույս Յ-ին ստացա պարոն Գլադստոնի պատասխանը թե կից նամակին և թե իմ նամակիս, զոր գրած էի մեջը և Չեր գրությունը հանձնարարելու: Այս պատասխանին անգլերեն օրինակն ու թարգմանությունը կներփակեմ: Իմ իրեն գրած նամակիս մեջ Չեր անունը, համբավը և բնակած պատ քաղաքը հայտնել է Չեր ինձ առաքած նամակը (յուր հասցեին) և նաև խնդիրը, որ թարգմանեմ զայն և բնագրի հետ իրեն հասցունել նկարագրելե հետո, ըստ, թե ամեն ուսեալ հայ կճանաշէ Չեզ Գամառ Թաթիպա գրանվամբ և թե դուք մեր ամենամեծ ազգային բանաստեղծնեռն եք, եթե ամենամեծը չեք, թե թեպետ և Չեր գրությունը խիստ երկար է, — բոլորապես կատարյալ է, անպակաս, թե մեծ բանաստեղծք մեր իրենց դարին և ազգին մարգարեքն և տեսնողն են, թե նորա այդքան տիսուր իրողությանց և պապային փառագոր կարելիությանց մեջտեղ կկանգնեն, թե ներկայացնելով Չեզ և Չեր գրություն, անձ մը կներկայացնեի, որ լավ օժտված է խոսելու ոչ միայն ի դիմաց Տաճկահայաստանի, այլ բոլոր հայկական անգի, որո հույսք և դառն ցավը ալլագի ատենե ի վեր երգած է, թե Չեր լեզուն երրոպական աշխարհավարաց լեզուն չէ, սակայն Չեր դիմումն և բողոքն շիտակ ձեր սրտեն կրզիսի, ուստի կհուսամ, թե Չեր գրության հարկ եղած նկատառումն ու կարելությունն ընծայե. թե կիփափակիք Չեր անունը գաղտ պահել, եթե Չեր բողոքը հրատարակի երևակայելի պատճառը, թե ուրախ կինսիմ յուր տալիք շնորհը ի այդ թունդյան օրը, որ գեկտեմբերի 29-ին էր, բանելով թե որշափ որ երկար ապրեր առանց կորուսանելու յուր առողջությունը և ուզբը, ախքան ավելի մարդկություն կօգտանավորվի և անկյալ Հայաստանի հույսք իրենց երշանիք լրմանն կմուտենան:

Երեկ և այսօր մեկ մեկ օրինակ ուղարկեցի Չեր բողոքի օրինակեն և Գլադստոնի պատասխանն... առ Մանչեստրը Կարոյանի և Տելլի նյուզի, նայենք ինչպես. կհաջուկի հրապարակությունը.

Պարոն Գլադստոնի գրած վերջին պարբերության միտքն այն է, թե այնչափ շատ գործեր ունի Անգլիու ներքին գործոց մեջ, որ չի կը ընա ուղածին շափի և պետք հղածին պես Հայկական խնդրով զբաղվել:

Մնամ Զեր Հարգանոք  
Կր. Հակոբյան

Բուն պատասխանը պատճեն Շմարգմանություն):

Հուարդի դպյակ  
2 Հունվարի 1891

Սիրելի պարոն,

Զեր նամակն, ինչպես նաև պարոն Ռաֆայել Պատկանյանինը, զոր կառաքեք թե բնագրավ և թե թարգմանությամբ, ստացան կարդացի ցավառիթ հետաքրքրությամբ:

Առաջիմ Հաղորդեցեք Համբավատենը բանաստեղծին, որ Հայոց խնդրոյն կ նոցակած տառապանքին քաջ տեղեկացա նրա սրտառուշ գրվածքին:

Միամիտ եղեք, ես կհակեմ: Անգլիու առանձին պարտքն է այդ խնդիրն շարժելու համար ամեն ջանք գործ դնելու: Բայց Երբ, ժամանակի զեկավարն Աստվածն է: Համեստություն և գաղտնապահություն: Հայաստանի բարեբախտությունն ես կշնորհավորությունն է Հայոց ամենահոշակավոր բանաստեղծին:

Հավատարմապես Զերն

Ուշեամ Խուարդ Գլադստոն

Պատասխանին վերաբերյալ  
բացատրական գրությունը

(Թարգմանություն)

Հուարդըն դպյակ  
2 Հունվարի 1891

Սիրելի՝ պարոն,

Զեր նամակն, ինչպես նաև, պարոն Ռաֆայել Պատկանյանինը, զոր կառաքեք թե բնագրավ և թե թարգմանությամբ, ստացան կարդացի ցավառիթ հետաքրքրությամբ:

Դուք գիտեք, թե խորապես ցալ կզզամ Հայաստանի մեջ այժմի գործադրված կառավարական օրենքին վրա: Ինձ կթվի, թե մեծ պետությանց պարտքն է իրողությանց վերահասու լինել և ի մի կողմ զնել շափառանցությունը, որք այսպիսի պարագայի մեջ սպասելի են: Տարակույս չունիմ, թե նոքա կարողություն ունին ստանալուն մի դարձան, և կը նդունիմ Անգլիու մասնավոր

ուարտքը զանոնք շարժելու համար ամեն չանք ի գործ դնելու:

Կարելի է Զեր թղթակիցը դյուլապվ չի կը ըստ ըմբռնել, թե անձ մը, որու միտք այն ժամանակը արդեն լիովին բեռնավորինա պարտքերով յԱնգլիա, որք բացարձակապես անհրաժեշտ են, եթե մինչև անդամարաբը (իմաստության պակասությամբ) փորձ ընե, չկրնար Հայկական խնդրո մեջ, ինչպես կասեմք, գործոն թիակն ստանձնել:

Զեր շնորհըն կակնկալեմ, որ զայս յուր մտաց հատցունեք, և կմնամ, սիրելի պարուն,

Հավատարմապես Զերն

Ուշեամ Խուարդ Գլադստոն

Առ. մեծապատիկ  
Տյար Կ. Հակոբյանի

Այս գրագությունից ամենակարեւը մեզ Համար, ի հարկե, Գլադստոնի պատասխանն է յուր բացատրականով: Արդ, համեմատելով այդ երկու նամակի բովանդակությունը միմյանց հետ մենք գալիս ենք այն եղբակացության, որ, իսկապես, նա՝ Գլադստոնը ոչ մի դրական խոստում էլ չի արել Պատկանյանին և դա իզուր և միամտաբար սպասելիս է եղել նրա խոստմունքի իրագործման: Այդ տեսակետից նրա պատասխանը եղել է մի նոր պյության հարցուկի պատասխան— այս, և ոչ, ինչ որ նա խոստացել է յուր պատասխանով, չնչել է յուր բացատրականով, մի խոսքով, ինչպես ասվում է, մի ձեռքով գրել է, մյուսով չնչել:

Այսուղ դնում ենք Խաֆայել Պատկանյանի «Աղերսագիրը» կամ ինչպես Հակոբյանը կոչել է «Հիշատակագիրը», որ առիթ է տվել մեզ գրելու այդ (Աղերսագիրը) և դրան վերաբերյալ մեր նորագույն պատմության համար կարենը վավերագրերն իրենց հարակից հանգամանքներով պահպանած լինելու նպատակով:

«Փայծառափայլ Տե՛ր,

«Քու անունը և քու քրիստոնեական գործունեւթյունը միայն նա չի ճանաչիլ, որ իրեն մարդ լինելու համար ևս գրմակցություն չունի. իսկ երկրագնդիս վրա կեցող ամեն փոքր ի շատե մտքով զարդացածը արդեն գիտե, թե ով է Գլադստոնը, վասն զի Գլադստոնին ճանաչելը կնշանակե աշխարհիս վրա իրեն բարեկամ, պաշտպան և Հովուսավորիշը ունենալ: Եթե Գլադստոնը մեզմեն

200 տարի առաջ ապրած լիներ, նաև անշուշտ երկնքի վրա լուսափայլ աստղերն հեռուն անջնջելի արձան կունենար և բազմաթիվ տաճարներ նվիրած կլինեին նորապանձալի անվան:

«Հայերը կճանաչեն Գլագուտոնին, կպաշտեն նըրան, կպատկառեն նորա առջև և այժմ հանուն նորա հկեղեցիացած, մտքով դեպի նաև գարձած՝ հավատով և հուսվ կվերտառքեն նորան, ինչպիս սըրության, իրենց այս աղոթքը:

«Անմահ մահկանացու, Խփոփիչ տառապյաններու, պաշտպան անտերներու, հովանափորիչ աստանդականներու, մեծդ Գլագոտոն, լսէ, մեր աղոթքը, որ կվերառաքինք մեր այս հուսաբեկ ժամերուն, պինդ վրատահած քու վրա այս մեր օրհասաւկան վարկանին, ամեննեն զքած, հուլսներս երկընքն ու երկրին կտրած, կդիմենք քեզ, ինչպիս մեր վերջին հուլսը, բայց եթե դու ևս երեսդ դարձնեն մեզմեն, եթե շար բախտի բերմամբ մեր այս աղերսը չհասնի քեզ, կամ թե ուշանա՞ մենք անվերադառնալի պիտի կորչենք. Պայծառափայլ Տեր, մենք տկար ենք, մենք հոգեսր ենք, իսկ մեզ շրջապատող թշնամին շատ է և անգործ Շուապե օգնության հասնելու:

«Հորդորե մարդկության տալ մեզ այն, ինչոր քու աշխարհքի հետին թշվառական մշակը ունի. թող չպակասի մեր վրայն այն գութը, որն ամեն անվիացի ունի դեպի իրեն շունը, կովը և ձին, թող աղատեն մեզ այն բաներեն, ուստի աղատ են քու աշխարհքի ամեն: սովորող որդ ու ճշու: Մի՞թե անհնար է մեր այս համեստ խնդիրը կատարել, մի՞թե մեր այս պահանջմունքը մի որեւէ լրացնելան նմանություն ունի:

«Ի՞նչ կասեր ձեր գյուղական վարժապետը, եթե ստահակ աշակերտները, առանց հարկավորության, կրոններու տակ տրորեին բզեզին և թիթեռին: Իսկ մեզ ամեն օր անինայաբար կմորթեն մահմեդական բուրդը, շերքիզը, թաթարը և օսմանին, և մեր մահմեդական կառավարիչները կտեսնեն այդ ամենը, չեն սաստիլ շարադրծներուն և չեն պաշտպանիլ անմեղներուն:

«Ի՞նչ կասեր Անվիայի ամենաստոր դառնակարգի մարդը, եթե գալին մտնեին նորատունը, աշքի առջև բռնաբարեին նրա կնոջ պարկեշտությունը և աղջկա կուսությունը: Իսկ մեր բոլոր դասակարգերու մարդիկ մեծատունն թռնած մինչեւ փոքրավորը ապա-

հով չեն աստվածային իր օրը իրենց սուրբ առագաստը պղծած տհմնելնեւ:

«Ի՞նչ կասեր ձեր աշխարհքի ամենահասարակ մարդը, որն յուր գանգատը հասցրել է գատավորին, երբ այդ գատավորը հարյուր արդարամիտ անգլիացի պկայի արհամարհեր և մեկ կաշառված, տղիւ, սրիկա տաճկի խոսքին հավատար և ըստ այնմ վճիռ կտրեր:

«Ի՞նչ պատկեր կներկայացներ քու այսօրվա ծաղկյալ Անգլիան, երբ աշխատասեր, սակավապետ և խոնհմ ժողովրդիդ քրտանց վաստակի մինչեւ վերջին նաքարակիտը, ամեն տարի և ամեն օր, գար, հափշտակեր անորին բարբարոսներու ուժմակը. եթե թագցնեիր արծաթդ, մտրակով ու գավազնով խոշտանգեր քեզ և, եթե ավելի համառեիր, տեղն փ տեղ մորթեր ունտանիքդ: Կհարցունեմ այսպիսի բռնաբարության քանի տարի կդիմանար Անգլիադ: Բայց թշվառ Հայաստանը ահա 600 տարի է, որ այս տանջանքի մեջ է, որ ու գիշեր առ Աստված և առ մարդիկ կբռնուի, և նորա աղաղակին ականջ զնող չկա:

«Ի՞նչ կասեր քու աշխարհքի տպետ ռամիքը, որո մանկությունը, պատանեկությունը և արրուն համակը անցել է ամեն տեսակ գրկանքի և տուայտանքի մեջ և որո միակ մխիթարությունը մնացել է յուր գավանած կրոնը, որո մեջ նու կգտնե յուր ծերության սփոփանքը և գալոց կյանքի հուլսը. Կհարցունենք՝ ի՞նչ կասեր նա, եթե այդ կրոնի պաշտոնն անգամ կատարելու նորան արգելք լինեին: Իսկ հայը յուր եկեղեցու և ներին կրոնական զգացմունքի մեջ անդամ աղատություն չունի:

«Ի՞նչ կասեր որևէ անգլիացի, եթե նրան ասեին՝ մոռացցիր, արհամարհ այն լեզուն, որով քո մայրը օրօրցոցիդ մեջ նիրհ ։ Քերել քո մանկական աշքերուն. ամենայն ինչ, որ մարդուն ներփին զեղեցիկ աշխարհն է՝ ծանոթություն ստացել ես այդ լեզուի այն լեզուն, որով քո ամուսինը շշնչել է յուր քնքույց զգացմունքը ականչիդ, այն լեզուն, որով սիրական զավակունքը ավելանել են քեզ «Հայը և ծնող սաելով: Իսկ հայի վերաբերմամբ աններելի բռեական հանցանք է հորը յուր հարացատ օրդու, մորը յուր գտերը և վարժապետին յուր աշակերտի հետ մայրենի բարբառով, այսինքն՝ հայերին խոսկուն:

«Ի՞նչ կասեր անգլիական ազգը, եթե նա մի թշվառ օր տեսներ իրեն օտար դատավորի և կառավարյի իրավասության ներք անգերը ժամանակով, և հուսահատված

երբեկցե իրեն տպատված տհմնելու արդ դժոխալին, ամոթալի վիճակեն։ Իսկ հայր վազուց և շատ վազուց մոռացել է յուր զատի վճիռը լսելու յուր համազգի բերանեն։

«Ի՞նչ կասեր անգլիական ազգը, եթե համոզված լիներ, որ յուր դրացիները գիշեր ու ցերեկ միտք կանեն Անգլիայի և անգլիացիի անունները անհետացնել մարդոց բներն և աշխարհին երեսն։ Իսկ հայերուս բանտ և կախաղան կսպառնան, եթե նա արտասանե հայ, Հայաստան և հայրենիք բառերը։

«Ա՞յս ի՞նչ վիճակի մեջ է  $2\frac{1}{2}$  միլիոնյա հայ ազգը ընդհանրապես և ամեն մի հայ մասնավորապես։

«Այս ազնիվ Տեր, մեր ձեռք պետք էր տալ տիկին Քիչեռ Ստովի գրիչը, որ մենք կարողանայինք քեզ հասկացնելու, որ Ամերիկայի նեղքերեն թշվառ մի ազգ կա աշխարհիս երեսին և այդ ազգի անունն է հայ։

«Մենք աղի արտասուբով թրջեցինք պայծառափայլությանդ հորինած թուղարիայի մատթեռողիան, ա. այդ անմա՞շ քերթվածքը գրգռեց միլոնավոր ազնիվ սրտեր և սասանեցուց բռնակալի արքա-

յական աթոռը. բայց եթե իմանայիր, որքան տկար է բուզզարացոց տանջանքը համեմատությամբ այն աներեակայելի տանջանքին, որն ահա, 600 տարի, ամեն օր, ամեն վարկյան կկրկ ողորմելի հայոց ազգը... և դրա հետևանքը այն եղավ, որ մեկ ժամանակվա երեսուն միլիոնանոց ազգը այժմ հազիվ հազ կհասնի  $2\frac{1}{2}$  միլիոնի, և մեկ ժամանակվա ծաղկյալ Հայաստանը սոյս օրս ամայի անտպատ է, ուր գիշատիչ գաղաներ և շաղղակեր թոշուններ անգամ չկան, վասնզի նոցա համար լափելու բան մնացած չէ շատ տեղ։»

«Մեծ, անմա՞շ և դրույգնասիրա Գրադատոն, ահա մենք մեր հոգին ու մեր սիրու թափեցինք քու առջև, ահա մենք դիմեցինք քու մարդասիրական օգնության, մենք համոզված ենք, որ մենակ քո ունիք շարժվածքը կբավե մեր աղետալի վիճակը բարմոքելու և երջանկացնելու, ինչպես որ երջանկացուցիք բուղարներուն և իրլանդացիներուն (Հոմբուլ). մենք հայերս անհամբերությամբ կսպասենք քո սրտեն բխած մեկ կաթիլ գութին, կսպասենք, կսպասենք, կսպասենք... եվ մի՛թե քո այս վերջին պարտք չի տված պիտի հանդիսանաս ահավոր դատավորի աթոռի առջև։»



## ԽՄՔԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր ամսագրի հունիս-հուլիս համարում  
խոստացել էինք հաջորդ համարում տպա-  
գրել Համազգ, Եկեղ. ժողովից ուշացած մի-  
քանի պատգամավորների և Հյուրերի անուն-

ները, որոնք բաց էին թողնված հիշյալ հա-  
մարում լույս տեսած անվանացանկից:  
Ստորև զետեղում ենք այն.

| № № | ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ                   | ՈՒԲ ՏԵՂԻՑ            |
|-----|-----------------------------------|----------------------|
| 1   | Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյան | Հարավային Ամերիկայից |
| 2   | Տ. Եփրեմ արքեպիսկոպոս Տոհմունի    | Դամասկոսից           |
| 3   | Բաքչեջյան Իսահակ                  | Հար. Ամերիկայից      |
| 4   | Եաղուբյան Նազարեթ                 | Դամասկոսից           |
| 5   | Ղարաղյողյան Կարպիս                | Դամասկոսից           |
| 6   | Հախվերդյան Հովհաննես              | Հյուս. Կովկասից      |



## ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂՂՈԽ

Ամսագրիս հունիս-հուլիս Ա-ի էջ 33-ում սպրդվել է հետեյալ սխալը,

«Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոսն առաջտրկեց Մայր Աթոռի պահպանության համար սահմանել «Լուսավորչի լումա» տուրքը բոլոր Եկեղեցիների ամբողջական հասույթների 4 տոկոսի համեմատությամբ»:

Պետք է լինի

«Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոսն առաջարկեց Մայր Աթոռի պահպանության համար սահմանել «Լուսավորչի լումա» տուրքը բոլոր Եկեղեցիների ամբողջական հասույթների 5 տոկոսի համեմատությամբ»:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

|                                                                                                          |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------|----|
| 1. Ամենայն Հայոց Վեհափառ Կարողիկոսի շնորհավորական հեռագիրը Հայաստանի 25-ամյա հորելլանի առքիվ . . . . .   | 3  |
| 2. Փառապանծ տարեղարձը . . . . .                                                                          | 4  |
| 3. Ամենայն Հայոց Վեհափառ Կարողիկոս Տ. Տ. Գևորգ Զի ղիմումը երեք մեծ տերությունների ղեկավարներին . . . . . | 8  |
| 4. Ամենայն Հայոց Վեհափառ Կարողիկոս Տ. Տ. Գևորգ Զի մոտ տեղի ունեցած պրես-կոնֆերանսում . . . . .           | 11 |
| 5. Գերագույն Սովետի ընտառությունների շուրջը . . . . .                                                    | 12 |
| 6. Սովետական Հայաստանի 25-ամյակի տոնակատարություններատասահմանի հայության մեջ . . . . .                   | 16 |
| 7. ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Սովետում . . . . .                                                       | 18 |
| 8. Պատմական որոշումը . . . . .                                                                           | 19 |
| 9. Հայ ժողովուրդը ողջունում է պատմական որոշումը . . . . .                                                | 21 |
| 10. ԱՇԽ ԳՐԱՇԻ.— Երեան . . . . .                                                                          | 28 |
| 11. ԱՂԱՎՆԻ.— Սփյուռքի հայության թ                                                                        | 29 |

### ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻ

|                                                                             |    |
|-----------------------------------------------------------------------------|----|
| 12. Մայր Արոն . . . . .                                                     | 30 |
| 13. Հեռագրեր արտասահմանից . . . . .                                         | 30 |
| 14. ՀՈՎՃԱՆ ՀԱՅԿԱԶ.— Լջմիածին . . . . .                                      | 35 |
| 15. Համազգային եկեղեցական ժողովի պատգամավորների տպավորությունները . . . . . | 36 |

### ԿՐՈՆԱ-ՊԱՏՄՈՒԿԱՆ

|                                               |    |
|-----------------------------------------------|----|
| 16. ԱՐՏ. ԱՎԱԳՅԱՆ.— Ներսես Շնոր հալի . . . . . | 56 |
|-----------------------------------------------|----|

### ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

|                                                                                     |    |
|-------------------------------------------------------------------------------------|----|
| 17. Գամառ Քարիպայի անտիպ աշխատություններից . . . . .                                | 62 |
| 18. Ե. ՇՈՀԱԶԻՉ.— Բանաստեղծ Ռ. Պատկանյանի նամակը Գլադունին և դրա պատասխանը . . . . . | 63 |
| 19. Խմբագրության կողմից . . . . .                                                   | 70 |

*Պատվեր № 16. Տիրաժ 1.500 օր. ՀԱՅՈՅ ԺԿՄ-ին կից Պոլիգրաֆ. և Հրատ. վարչության № 2 տպարան—Երևան*

**ՀՈՒՅԱ ՏԵՍԱԿ**

**Ա. ԷՀՄԻԱԴԶԻՆԻ**

**1946 թ.**

**ՕՐԱՅՈՒՅՑՑ**

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ԹԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ  
ԵՎ ԹԵ ԱՐՏԱՍՈՑՄԱՆԻՑ

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱԼԱՏԵՆ**

**ՀՈՎԿԱԿԱՆ ԾՈՒՈ.**

Էջմիածին, «Էջմիածին» ամսագրի խմբագրություն  
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»  
Redaction of the magazin «Echmiadzin», Armenian, USSR

